

16-17(554-555)

31.05.2019

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարով

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ ԱՅՆ ՊԱՏՊԱՄ ԶԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ

Կան բառեր, որոնք զուգորդվելով պատմական կարևոր իրադարձությունների հետ՝ ձեռք են բերում այդ իրադարձություններից արտածվող նոր իմաստ: Այս առումով շատ բնութագրական է «մայիս» ամսանունը, որը կարելի է վերընկալել «հաղթանակ» բառիմաստով: Զգայական բացատրությունից զատ սա ունի նաև պատմաբանական մեկնություն ամենից առաջ Ավարայրի, Մայիսյան եռատոնի և Սարդարապատի հաղթանակների հղումներով: Տեղի ունենալով տարբեր պատմական ժամանակներում՝ այս հաղթանակները մի ընդհանուր պատգամ ունեն. եթե միասնական ենք, ապա կարողանում ենք հաղթել: Այստեղ խտացված է հայ ժողովրդի հազարամյա պատմությունը, որի մեջ թեպետ բազմաթիվ են փորձությունները, սակայն էական է հաղթելով գոյատևելու մեր կարողությունը: Երիցս ճիշտ էր Վահան Տերյանը, երբ գրում էր.

Բարեկունն է եղել մեր այսոյանը՝ տես -

Անհետ կորել, անցել է - չար մշուշի պես:

Ասորիքն է եղել մեր թշնամին - ահա՛ Դաշտ է տեղը, և չըկա քար քարի վրա...

Հուսանք, վաղը նույն բանը կատենք թուրքի մասին՝ շեշտելով մեր պատմական հողերին վերատիրանալու ցանկալի իրողությունը: Եթե շուրջ մեկ դար առաջ լինելով եղեռնագրկ, թարմ վերքերով արնածոր՝ կարողացել ենք Սարդարապատում ու Բաշ-Ապարանում կասեցնել և անգամ ջախջախիչ հարվածներ հասցնել թուրքական զինուժին, ապա հիմա, երբ ունենք կայացած երկպետություն՝ Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն, առավել ունենք հաղթանակներով գոտեպնդված հայկական բանակ, թերևս ոչինչ չի կարող խոչընդոտել մեր ազգային իղծերի իրականացման ճանապարհին:

Բոլորս քաջ գիտակցում ենք, որ եթե հեռավոր 1918-ի մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը չհայտարարեր անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին, ապա այդ տարածքում ապրող հայությունը պարտադրաբար Վրաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների վարչական մաս կկազմեր ու աստիճանաբար կուծացվեր: Եվ իրական վտանգի տակ կհայտնվեր հայ էթնոսի հետագա գոյությունն առհասարակ: Մենք պարտավոր ենք ճիշտ գնահատելով՝ համապատասխան դասեր քաղել պատմությունից և հզորացնել մեր փյունիկված հայրենիքը: Հաղթանակներն այլ պատգամ չեն ունենում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԱՆ ԲԱՐՈՎ, ԴՊՐՈ՛Ց, ՈՂՋՈՒՅՆ, ՆՈՐ ԿՅԱՆՔ



ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՎԵՏՄԱՆ ԶԱՆԳ, ՈՐ ԵՐԿԱՐ ԿՂՈՂԱՆՋԻ



Մարդու կյանքում կարևոր իրադարձություններ շատ են լինում, որոնց մեջ իր հուզականությամբ առանձնանում է դպրոցական վերջին զանգը: Եվ դա միայն հրաժեշտի զանգ չէ, այլ հասունության ավետուն: Հեշտ չէ, իրոք, առանց ներքին հուզմունքի հրաժեշտ տալ հարազատ դպրոցին. ինչպե՛ս բաժանվել մանկության ուրախ և անհոգ օրերից, թանկ ու անմոռանալի պատանեկան հուշերից: Դրանք, միևնույն է, ուղեկցելու են ամբողջ կյանքում՝ ինչ-որ տեղ նաև հուսալի ուղեկից դառնալով երազանքների իրականացման ճանապարհին:

Վերջին զանգը հարցականներով լի նոր էջ է բացում շրջանավարտի համար՝ ո՛ր կտանեն կյանքի ճանապարհները: Համոզված ենք, ամեն շրջանավարտ արդեն ունի իր ծրագիրը. մեկը պատրաստվում է արհեստագործ դառնալ՝ հմտանալով իր նախընտրած արհեստի նրբությունների մեջ: Մյուսը մտադիր է դպրոցական դասասանյակը փոխարինել ուսանողական լսարանով՝ զարգացնելու հանրակրթարանում ստացած գիտելիքները... Եվ նրանք բոլորն էլ անպայման իրենց մասնագիտական ունակությունները կծառայենցնեն հայրենի երկրին, որովհետև այդպես են դաստիարակել նրանց սիրելի ուսուցիչները, այդ անտրոհելի գեներ են փոխանցել նրանց ծնողները, որոնց անթաքստից բերկրանքը և բացատրելի է:

Վերջին զանգի առիթով ուրախության ու թախծի իրարխառն զգացումներ են ապրում նաև մեր մանկավարժները: Հասունության շեմին ոտք դնող հերթական սերնդին կրթելու և դաստիարակելու դժվարին գործը, որ տարիներ է տևել, կենսական մեծ էներգիա է խլել նրանցից, որի ստույգ չափը հազիվ թե հնարավոր է հաշվել: Բայց մի

բանում վստահ ենք՝ դրանք եղել են անմնացորդ մվիրումի տարիներ, որոնք արդյունավետ շարունակություն կունենան նորանոր սերունդներ կրթելու գործում: Եվ դա նրանց պատվաբեր առաքելությունն է, որի համար արժե երախտագիտության խոսք ասել ուսուցիչներին: Իսկ այդ խոսքն այսօր ասվում են թե՛ շրջանավարտների և թե՛ նրանց ծնողների շուրթերով:

Դպրոցական վերջին զանգի առիթով ուղերձ է հղել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Նրանում մասնավորապես ասվում է. «Ձեր առջև բաց են կյանքի նոր հորիզոններ ու անսահման հնարավորություններ: Ձերն է նաև ապագան կերտելու պատասխանատվությունը: Կյանքի ճանապարհն անցեք վստահ քայլերով: Հավատարիմ մնացեք այն արժեքներին, որոնք անասան ու ամուր կպահեն հայոց պետականության հիմքերը: Սուրբ արյամբ ու արդար քրտինքով ստեղծված մեր երկրի արժանի զավակը եղեք: Ձեր գիտելիքներով, տաղանդով ու արժանիքներով ճանաչելի



դարձրեք Արցախի Հանրապետությունը: Շնորհակալություն մեր ուսուցիչներին՝ մվիրումի և Արցախի և մեկ հայրենասեր սերունդ թողարկելու համար»:

Վերջին զանգի կապակցությամբ շրջանավարտներին շնորհավորելու համար ավանդույթի համաձայն դպրոցներ այցելեցին պետական այրեր, պատգամավորներ, Պաշտպանության բանակի սպաներ, այլք:

Ստեփանակերտի Խ.Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոցի հրաժեշտի արարողությանը ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը՝

տիկնոջ հետ, ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը:

Դպրոցն այս տարի թողարկեց 143 շրջանավարտ: Տոնական միջոցառման հանդիսավոր բացումը զուգորդվեց հայրենասիրական գեղեցիկ մուտքով. 8-րդ դասարանի տղաներն իրենց ավագ ընկերներին ողջունեցին զինվորական ներկայացում-ցուցադրությամբ, իսկ աղջիկները՝ հայրենասիրական ոգեշունչ պարով:

Հիմնական դպրոցին հրաժեշտ տվող աշակերտներին շնորհավորեց նախարար Ն. Աղաբալյանը. «Ձեզ համար սկսվում է կյանքի նոր փուլ՝ ավելի հասուն և ուղղորդված: Ձեզանից շատերն իրենց ուսումը կշարունակեն ավագ դպրոցում, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Առաջիկա երեք տարիները լինելու են նոր գիտելիքների, հմտությունների ձեռքբերման և մասնագիտական կողմնորոշման տարիներ»:

Դպրոցի տնօրեն ժաննա Բալայանը իններորդյակներին մաղթեց հաջողություններ առաջիկա պետական, իսկ չորրորդյակներին՝ գիտելիքների ստուգման քննությունում: Բարի երթ մաղթելով դպրոցին հրաժեշտ տվող իր սաներին՝ տնօրենը կոչ արեց լինել նախաձեռնող ու համարձակ, իրենց գիտելիքներով շենացնել մեր երկիրը: Նա ՀՀ ԿԳՆ և ԱՀ ԿԳՍՆ պատվոգրեր ու հավաստագրեր հանձնեց առարկայական օլիմպիադաներում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին:

Շրջանավարտ Վլադիմիր Գալստյանը բոլորին ողջունեց ուրախ երգով, իսկ Անահիտ Ղահրամանյանը ընկերների կողմից երախտագիտություն հայտնեց դպրոցի տնօրինությանը, մանկավարժական կոլեկտիվին՝ ստեղծագործական ողջ ներուժը, հոգու ջերմությունն իրենց ուսուցմանն ու դաստիարակությանը անմնացորդ մվիրելու համար:

Դիտարժան էր շրջանավարտ աղջիկների զանգվածային պարաշարը, խաղաղության աղավնիների թևածումը, զույգզույն փուչիկների պարը երկնքում, «Բարի երթ»-ի որոշով փոքրիկ ինքնաթիռի պտույտները դպրոցների վրայով:

Միանալով ուրախության ու հրճվանքի հանրահանուր ալիքին՝ մենք էլ բարին մաղթեց կյանքի տարբեր հանգրվաններ մտնող շրջանավարտներին: Թող հաջողությունները միշտ ուղեկից լինեն նրանց:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՐԾԵՆԹԱՑ

ԲԵՐԶՈՐՈՒԽ ԿՆԻՍԱՂՐԿԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՃ

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության և «Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի միջև մայիսի 27-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Այդ նպատակով ԱՀ ԿԳՍ նախարարությունն իր հարկի տակ հյուրընկալել է Հիմնադրամի ներկայացուցիչներին՝ վերջինիս ղեկավար ու հիմնադիր Անուշավան Աբրահամյանի զխավորությամբ:

Նշենք, որ հիմնադրամն ստեղծվել է 2004 թվականին Կալիֆոռնիայում և իր գործունեությամբ նպաստում է երիտասարդների կյանքի հարստացմանը՝ ապահովելով կրթական հնարավորություններ, հատկապես միջին մասնագիտական՝ արհեստագործական հմտությունների վերապատրաստմամբ: Կառույցի կողմից իրականացվող ծրագրերն ուղղված են շրջանների երիտասարդության միջին մասնագիտական հմտությունների բարելավմանը, ինչը հնարավորություն կտա նրանց հետագայում պատշաճ աշխատանք ունենալ:

Միջոց կապիտանի կառուցվող շինությունը՝ որպես արհեստագործական կրթական հաստատություն և առանց հիմնադրամի համաձայնության չի դիտարկի նրա հողատարածքները, գույքն այլ նպատակետով և ծրագրերով օգտագործելու համար:

Կարևորելով Հուշագրի ստորագրումը՝ Նարինե Աղաբալյանը շնորհակալություն է հայտնել բարերարին՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում տարիներ շարունակ ներդրած ավանդի համար: Նախարարի հավաստմամբ՝ Արցախում արհեստավորների, գյուղատնտեսության ոլորտի բարձր ու միջին մասնագետների պահանջարկ կա: Բերձորում հիմնադրվող քոլեջում հիմնականում գյուղատնտեսական և վերամշակող արտադրության մասնագիտություններ են ներդրվելու: Հաշվի առնելով

ՄՀ գյուղատնտեսության նախարարությունները: Հանդիպմանը ներկա ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղաբալյանը, որը միաժամանակ ծրագրի միջնորդն է, նշեց, որ Արցախի և Հայաստանի համասեռ կառույցները պարբերաբար հանդես են գալիս ծրագրերի, նոր չափորոշիչների, մասնագիտական փորձի փոխանակմամբ: «Բերձորում գյուղատնտեսական քոլեջ

ոչ միայն տեսական ու գործնական գիտելիքներ, այլև փոխանցել ձեռնարկատիրական հմտություններ: Նախատեսում ենք իրականացնել շրջանավարտների վերապատրաստումներ», - ասաց Ա. Աղաբալյանը: Նրա կարծիքով՝ ծրագրի իրագործումը մեծ դեր կունենա ինչպես արցախցիների, այնպես էլ երկրի տնտեսության զարգացման համար:

Խոսելով Հիմնադրամի գործունեության մասին՝ բարերար Անուշավան Աբրահամյանը նշեց, որ կառույցը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, ևս մեկ քայլ կատարեց Հայաստանի ու Արցախի շրջանների երիտասարդության խոստումնալից ապագայի կերտման ճանապարհին: Նրա համոզմամբ՝ նոր նախաձեռնության շնորհիվ արցախցի երիտասարդները հետաքրքիր մասնագիտություն և աշխատանք կունենան ապագայում ու չեն լքի իրենց քաղաքներն ու գյուղերը: «Հայաստանի ինը մարզերում արհեստագործական ուսումնարաններ են բացել, որոնցում պատանիներին ուսուցանում են ռոբոտաշինություն, ծրագրավորում, գինեգործություն, ոսկերչություն, համակարգիչների վերանորոգում, կար ու ձև, դիզայն, փայտամշակում, վարսավիրական, հասարակական սննդի ու սպասարկման և այլ մասնագիտություններ», - ասաց Անուշավան Աբրահամյանը: Խորհրդակցելով Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարության ղեկավարության

հետ՝ հիմնադրամի անդամներս եկել ենք այն եզրակացության, որ Արցախում գյուղատնտեսության առումով մեծ հնարավորություններ կան, բայց մասնագետներն այս բնագավառում քիչ են: Ուստի որոշեցինք մեր նպատակը բերել՝ Բերձորում հիմնելով գյուղատնտեսական քոլեջ, որտեղ հնարավոր կլինի մասնագետներ պատրաստել ոլորտի համար»:

Քառաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ստեփան Սարգսյանը, որը նաև Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, իր հերթին հավաստիացրեց, որ Բերձորում գյուղատնտեսական քոլեջի հիմնումը մեծ հեռանկարների ու հնարավորությունների ասպարեզ է բացում շրջանավարտների և ուսանողների համար: Նա միաժամանակ հաստատեց, որ ման ներուժ կա շրջանում: «Ունենալով նոր կրթական մոդելներ, գյուղատնտեսության ոլորտում նորամուծություններ՝ մենք կխթանենք ողջ գյուղատնտեսական ոլորտը: Քոլեջը նոր կրթական համալիր է լինելու, ուր հաճախելու են ոչ միայն Քառաթաղի, այլև Արցախի բոլոր շրջանների և Սյունիքի մարզի աշակերտները», - ասաց շրջվարչակազմի ղեկավարը:

Բերձորի գյուղատնտեսական քոլեջը, ինչպես հավաստիացրին Հուշագիրը վավերացնողները, նախատեսվում է հիմնադրել մեկ տարվա ժամանակահատվածում: Ապագա կրթական հաստատությանը արդեն իսկ տրամադրված շենքը կվերանորոգվի ժամանակակից պահանջներին համապատասխան:



Հիմնադրամի հերթական ծրագիրը, որը պետք է իրականացվի Արցախում, վերաբերում է Բերձորում գյուղատնտեսական քոլեջ հիմնելուն: Նպատակը գյուղատնտեսության ոլորտին առնչվող գիտելիքները երիտասարդությանը փոխանցելն է, գյուղատնտեսության համար խելացի մասնագետներ պատրաստելը:

Փոխըմբռնման հուշագիրը, որ ստորագրեցին կողմերը՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանն ու կրթական հիմնադրամի նախագահ Անուշավան Աբրահամյանը, ենթադրում է, որ նախարարությունը

շրջանի աշխարհագրական դիրքը, ռեսուրսները, գյուղատնտեսական նշանակության հողերի առկայությունն ու զարգացման հեռանկարները՝ ակնկալվում է, որ կհաջողվի ծրագիրն իրականացնել: «Ստեղծելով ման կրթական հաստատություն և պատրաստելով համապատասխան մասնագետներ՝ մենք կսկսենք ավելի արդյունավետ օգտագործել մեր ունեցած ռեսուրսները, որոնք կնպաստեն մեր երկրի զարգացմանը», - ասաց ԿԳՍ նախարարը:

Ծրագրի իրագործմանը կաջակցեն ՀՀ կրթության և գիտության և

հիմնելու հերթական ծրագիրն է, և նախարար Ն. Աղաբալյանի հետ պայմանավորվածության համաձայն՝ կտրամադրենք ներդրվող մասնագիտությունների համար անհրաժեշտ դասագրքերն ու ձեռնարկները, բոլոր չափորոշիչները, կկազմակերպենք դասախոսների վերապատրաստում, կվերանայենք Արցախում առկա տվյալ մասնագիտության ծրագրերը: Մենք կներդնենք նաև ձեռնարկատիրական մոդուլը, որը նորություն է. դեռ երկու տարի է, ինչ իրականացնում ենք այն Հայաստանում: Նորությամբ նպատակ ունի շրջանավարտներին տալ

գայում ու չեն լքի իրենց քաղաքներն ու գյուղերը: «Հայաստանի ինը մարզերում արհեստագործական ուսումնարաններ են բացել, որոնցում պատանիներին ուսուցանում են ռոբոտաշինություն, ծրագրավորում, գինեգործություն, ոսկերչություն, համակարգիչների վերանորոգում, կար ու ձև, դիզայն, փայտամշակում, վարսավիրական, հասարակական սննդի ու սպասարկման և այլ մասնագիտություններ», - ասաց Անուշավան Աբրահամյանը: Խորհրդակցելով Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարության ղեկավարության

հետ՝ հիմնադրամի անդամներս եկել ենք այն եզրակացության, որ Արցախում գյուղատնտեսության առումով մեծ հնարավորություններ կան, բայց մասնագետներն այս բնագավառում քիչ են: Ուստի որոշեցինք մեր նպատակը բերել՝ Բերձորում հիմնելով գյուղատնտեսական քոլեջ, որտեղ հնարավոր կլինի մասնագետներ պատրաստել ոլորտի համար»:

Քառաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ստեփան Սարգսյանը, որը նաև Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, իր հերթին հավաստիացրեց, որ Բերձորում գյուղատնտեսական քոլեջի հիմնումը մեծ հեռանկարների ու հնարավորությունների ասպարեզ է բացում շրջանավարտների և ուսանողների համար: Նա միաժամանակ հաստատեց, որ ման ներուժ կա շրջանում: «Ունենալով նոր կրթական մոդելներ, գյուղատնտեսության ոլորտում նորամուծություններ՝ մենք կխթանենք ողջ գյուղատնտեսական ոլորտը: Քոլեջը նոր կրթական համալիր է լինելու, ուր հաճախելու են ոչ միայն Քառաթաղի, այլև Արցախի բոլոր շրջանների և Սյունիքի մարզի աշակերտները», - ասաց շրջվարչակազմի ղեկավարը:

Բերձորի գյուղատնտեսական քոլեջը, ինչպես հավաստիացրին Հուշագիրը վավերացնողները, նախատեսվում է հիմնադրել մեկ տարվա ժամանակահատվածում: Ապագա կրթական հաստատությանը արդեն իսկ տրամադրված շենքը կվերանորոգվի ժամանակակից պահանջներին համապատասխան:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՀ ԳՊՐՈՋԱԿԱՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍԱՐԿԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽ ԵՐԿՐԱՆՆԵՐԸ



Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոցում տեղի ունեցավ 2018-2019 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի մրցանակային տեղեր գրաված աշակերտների պարգևատրման արարողությունը: Ներկաներին ողջունեց և մրցանակակիրներին շնորհավորեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար Միքայել Համբարձումյանը՝ նշելով, որ նրանք այն երեխաներն են, ովքեր գիտակցում են, որ ապագան գիտելիքին է: Փոխնախարարն այդ կապակցությամբ շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին, որոնք ջանադիր աշխատանքի շնորհիվ սաները հասել են հաջողությունների և ծնողներին, որոնք իրենց երեխաներին ուղղորդել են դեպի գիտելիքը, ստեղծել պայմաններ նրանց զարգացման համար:

Օլիմպիադայի արդյունքների վերլուծությունը ներկայացրեց նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը:

Կարևորելով դպրոցականների ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման ու կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնությունը՝ դպրոցականների առարկայական օլիմպիադայի նպատակը շարունակում է մնալ սովորողների ազատ և համակողմանի զարգացման, աշխատասիրության և պատասխանատվության խթանումը:

Օլիմպիադայի նպատակներից է նաև տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրու-

թյունների զարգացումը, ինչպես նաև այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:


ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ամեն տարի ստեղծվում են հանրապետական կազմկոմիտե և առարկայական հանձնաժողովներ, որոնք անվանական կազմը նախարարի հաստատման է ներկայացնում կրթության և գիտության վարչությունը: Կազմկոմիտեն մշակում է օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքները, դրա անցկացման, բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաև վերահսկողության իրականացման, լուսաբանման, թափանցիկության և մասնաշաղկապության ապահովման մեխանիզմ-

ները՝ օլիմպիադայի ողջ ընթացքում պահպանելով նրանց հավասար հնարավորությունները, ապահովելով գործընթացի անաչառությունը:

Կազմկոմիտեն սահմանում է առարկայական հանձնաժողովների գործունեության սկզբունքները, նրանց պարտականություններն ու իրավունքները, ինչպես և մշակում է օլիմպիադայի անցկացման ժամանակացույցը, սահմանում քվոտաների (սահմանված թվաքանակի) տրամադրման կարգը: Օլիմպիադայի ավարտից հետո կազմկոմիտեն քննարկում ու վերլուծում է արդյունքները և խրախուսման ներկայացնում առավել բարձր արդյունքներ

ցականների անվանակազմը:

Հիմք ընդունելով այս ամենը և ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ԼՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով ու հիմք ընդունելով «Դպրոցականների առարկայական օլիմպիադայի անցկացման կարգի» պահանջները, ինչպես նաև ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2019թ. հունվարի 9-ի N 1/Ս հրամանը՝ փետրվարի 23-ից մարտի 16-ն ընկած ժամանակահատվածում անց է կացվել ԱՀ դպրոցականների 2018-2019 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը՝ ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցին համապատասխան, Ստեփանակերտի հ.8 միջնակարգ դպրոցում 15 առարկաներից՝ հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն՝ յուրաքանչյուր առարկայի հատկացվելով առանձին օր: Շրջվարչակազմի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնիները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել 447 դպրոցականի՝ անցած ուսումնական տարվա 419-ի փոխարեն:



ցուցաբերած մասնակիցներին:

Կազմկոմիտեն օլիմպիադայի հանրապետական փուլում մրցանակային տեղեր զբաղեցրած հաղթողներից, դարձյալ ըստ քվոտաների, նախարարի հաստատման է ներկայացնում եզրափակիչ փուլին մասնակցելու համար երաշխավորված դպրո-

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ԴՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԵՐԸ

Մասնակիցների քանակն ըստ շրջանների

Table with 10 columns: Year (2011-2019) and rows for various regions like Արմավիր, Արարատ, Արցախ, etc.

Մասնակիցների քանակն ըստ առարկաների

Table with 10 columns: Year (2011-2019) and rows for subjects like Հայոց լեզու, Հայ գրականություն, Ռուսաց լեզու, etc.

Անցած ուստարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է ռուսաց լեզու /51-53/, անգլերեն /37-42/...

Օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքներն ստուգելու նպատակով կրթության, գիտության և սպորտի նախարարի հրամանով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների փորձառու ուսուցիչների մասնակցությամբ:

Գրավոր աշխատանքների ստուգումները բոլոր առարկաներից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել են, ներկայացվել նախարարին և նույն օրը տեղադրվել նախարարության www.edu.nkr.am կայք-էջում: Բողոքարկման օրերին հանրապետական հանձնաժողովին դիմել է 34 աշակերտ հայոց լեզու, պատմություն, անգլերեն, գերմաներեն, ՆԶՊ, աշխարհագրություն առարկաներից, որոնց հնարավորություն է տրվել ծանոթանալ իրենց գրավոր աշխատանքներին: Հանրապետական առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից կատարվել է նաև որոշ գրավոր աշխատանքների վերստուգում, և արդյունքում 7 աշակերտի գրավորների միավորները փոխվել են հօգուտ աշակերտների: Փոփոխության մասին ևս տեղեկատվություն է տեղադրվել նախարարության կայք-էջում:

Մրցանակային տեղերն ըստ առարկաների

Table with 3 columns: Subject, 1st place, 2nd place, 3rd place. Rows include Հայոց լեզու, Հայ գրականություն, Ռուսաց լեզու, etc.

Վերջին ութ տարվա մրցանակային տեղերի քանակն ըստ առարկաների

Table with 10 columns: Year (2011-2019) and rows for subjects like Հայոց լեզու, Հայ գրականություն, Ռուսաց լեզու, etc.

Ինչպես տեսնում ենք, մրցականային տեղերի ընդհանուր քանակն անցած ուսումնական տարվա համեմատ նկատելիորեն աճել է: Այն աճել է հայոց լեզու, ռուսաց լեզու, հայ գրականություն, անգլերեն և ՆԶՊ առարկաներից և նվազել է պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա առարկաներից: Գերմաներեն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, պատմություն և ինֆորմատիկա առարկաներից ընթացիկ ուսումնական տարում ոչ մի մրցանակային տեղ չուներ, իսկ ինֆորմատիկա առարկայից վերջին 6 ուսումնական տարիներին և քիմիա առարկայից վերջին 7 ուսումնական տարիներին ոչ մի մրցանակային տեղ չենք ունեցել: Չնայած այս ամենին, ընդհանուր առմամբ 2018-2019 ուսումնական տարվա օլիմպիադայի արդյունքները գոհացուցիչ են:

Ստորև ներկայացված աղյուսակի վերջին 8 ուսումնական տարիների տվյալները համեմատելով՝ նկատելի է, որ ընթացիկ ուսումնական տարվա մեր դպրոցականների ցուցաբերած արդյունքներն անհամեմատ աճել են:

Table with 8 columns: Year (2011-2019) and rows for subjects like 16աշ. գրավել են 2-րդ տեղ, 15աշ. գրավել են 2-րդ տեղ, etc.

Այս տարի մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ ռուսաց լեզու /17 մրցանակային տեղ/, անգլերեն /21/, ՆԶՊ /29/ առարկաներին:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ մրցանակային տեղերն աճել են Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու շրջաններում: Ուրախալի փաստ է նաև այն, որ մասնակցության առումով նախորդ տարվա համեմատ որոշակի առաջընթաց կա Շուշիի, Քաջաթաղի և Շահումյանի շրջաններում:

Ըստ շրջանների մրցանակային տեղերի քանակական պատկերն այսպիսին է.

Table with 6 columns: Region (e.g., Արմավիր, Արարատ) and rows for 1st, 2nd, 3rd place, total, and average.

Իսկ ըստ շրջանների, վերջին 8 ուսումնական տարիներին մրցանակային տեղեր գրաված և զովասանագրերի արժանացած աշակերտների քանակական պատկերն այսպիսին է.

Table with 10 columns: Year (2011-2019) and rows for subjects like Ռուսաց լեզու, Հայոց լեզու, Հայ գրականություն, etc.

Այսպիսով՝ մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Ասկերանի թիմը /19 մրցանակային տեղ, որը կազմում է շրջանի մասնակիցների ընդհանուր թվի 27%-ը/, 2-րդ տեղում է Ստեփանակերտի թիմը /34, որը կազմում է մայրաքաղաքի մասնակիցների ընդհանուր թվի 21,9%-ը/ և 3-րդ տեղում է Մարտունու թիմը /12, որը կազմում է շրջանի մասնակիցների ընդհանուր թվի 17,9%-ը/:

Ի դեպ նշենք, որ վերջին երեք տարում մրցանակային տեղերը դարձյալ բաժանվել են Ստեփանակերտի, Ասկերանի և Մարտունու թիմերի միջև:

Այս գոհացուցիչ փաստերի կողքին կանգ առնենք բոլորիս հուզող մի քանի հարցերի վրա:

Ինչո՞վ բացատրել, որ մաթեմատիկա առարկայի /5-12-րդ դաս./ 77 մասնակիցներից ոչ մի աշակերտ չի կարողացել գրավել մրցանակային տեղ, ընդամենը 6 աշակերտ արժանացել է զովասանագրի, իսկ 9 աշակերտ չի հաղթահարել դրական շեմը:

Քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից ոչ մի աշակերտ մրցանակային տեղ չի գրավել: Ավելին, ֆիզիկա առարկայի 19 մասնակիցներից միայն մեկ աշակերտի՝ Տիգրան Կիսիբեկյանին հաջողվեց հավաքել դրական 17 միավոր /25 բալային համակարգում/, 16 մասնակից նույն բալային համակարգում չկարողացավ հաղթահարել դրական շեմը՝ հավաքելով ընդամենը 1-9 միավոր, իսկ երկու աշակերտի աշխատանք գնահատվել է 0: Քիմիա առարկայից պատկերն ավելի անհանգստացնող է. այս առարկայից հանրապետական փուլի 12 մասնակիցներից միայն երեք աշակերտ հաղթահարեց դրական շեմը՝ հավաքելով 8-10 միավոր:

Մրցանակային տեղ չկարողացավ գրավել նաև կենսաբանություն առարկայի 18 մասնակիցներից և ոչ մեկը: Առավել անհանգստացնող է, կարծում ենք, նույնիսկ աններելի է ինֆորմատիկա առարկայի վիճակը. հանրապետական փուլին մասնակցած 18 աշակերտից ոչ մեկը չի հաղթահարեց դրական շեմը, իսկ 13 մասնակցի աշխատանքը գնահատվել է 0 միավոր:

Նաև համեմատություն անցկացնելով հանրապետության հանրակրթական դպրոցների միջև՝ հանդիպում ենք անհանգստացնող այսպիսի փաստերի.

Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական 13 դպրոցներից h.4 և h.12 դպրոցներից օլիմպիադայի հանրապետական փուլին ոչ մի աշակերտ չի ընդգրկվել:

3.1 Ինքնակամ դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 747 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 21 աշակերտ, որից 8-ը՝ մաթեմատիկա առարկայից, 5-ը՝ հայոց լեզվից, 3-ը՝ հայ գրականությունից, 2-ը՝ անգլերենից և մեկական՝ ֆրանսերենից, ռուսաց լեզվից ու ՆԶՊ-ից: Եվ ընդամենը անգլերեն առարկայից երկու աշակերտի հաջողվեց գրավել մրցանակային 3-րդ տեղ:

3.2 Ինքնակամ դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 505 աշակերտից մասնակցել է ընդամենը 4-ը, որոնցից ոչ մեկն էլ չկատակեց մրցանակային տեղ:

3.3 միջնակարգ դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող 289 աշակերտից մասնակցել է 19-ը, որից 16-ը՝ ռուսաց լեզվից, 1 աշակերտ՝ անգլերենից, 2-ը՝ գերմաներենից, և 12 աշակերտ գրավել է մրցանակային տեղ: Մրցանակային տեղերի առումով փաստը հաճելի է, բայց տարիներ շարունակ այդ դպրոցի աշակերտները մասնակցում են միայն օտար լեզուներից:

3.5 դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 220 աշակերտից մասնակցել է միայն 1 աշակերտ՝ մաթեմատիկա առարկայից /6-րդ դաս./ և վաստակել է 8 միավոր:

3.6 դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 160 աշակերտից մասնակցել է 2 աշակերտ՝ մաթեմատիկա առարկայից /6-րդ և 8-րդ դաս./, որից ոչ մեկը մրցանակային տեղ չի գրավել:

3.7 դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 654 աշակերտից մասնակցել է 8-ը, որից 7-ը՝ մաթեմատիկայից /5-7-րդ դաս./, 1-ը՝ ֆրանսերենից, բայց ոչ մեկին չհաջողվեց մրցանակային տեղ գրավել:

3.8 միջնակարգ /հուքային/ դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող 271 աշակերտից մասնակցել է 8 աշակերտ, որից երկուական՝ հայոց լեզվից և հայ գրականությունից, մեկական աշակերտ՝ անգլերենից, քիմիայից, մաթեմատիկայից և պատմությունից: Մրցանակային տեղ է գրավել 2-ը:

3.9 դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 196 աշակերտից մասնակցել է 5-ը, որից 3-ը՝ ֆրանսերենից, մեկական՝ ՆԶՊ և մաթեմատիկա առարկաներից: Նրանցից միայն մեկ աշակերտ է գրավել մրցանակային տեղ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.10 դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 469 աշակերտից մասնակցել է ընդամենը 1 հոգի՝ ՆՁՊ առարկայից և տեղ չի գրավել:

3.11 ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում սովորող 620 աշակերտից մասնակցել է 33 աշակերտ. ֆիզիկա առարկայից՝ 1, շեՊ-ից՝ 4, պատմությունից՝ 2, անգլերենից՝ 10, ՆՁՊ-ից՝ 2, ֆրանսերենից՝ 2, հայոց լեզվից՝ 8, հայ գրականությունից՝ 1 աշակերտ: 10-ը գրավել է մրցանակային տեղ:

Ֆիզմաթ դպրոցի 7-12-րդ դասարաններում սովորող 309 աշակերտից մասնակցել է 50-ը, որից 15-ը՝ մաթեմատիկա, 11-ը՝ ֆիզիկա, 1-ը՝ քիմիա, 2-ը՝ պատմություն, 3-ը՝ անգլերեն, 2-ը՝ ռուսաց լեզու, 2-ը՝ ՆՁՊ, 2-ը՝ հայոց լեզու, 2-ը՝ հայ գրականություն և 10-ը՝ ինֆորմատիկա առարկաներից: Նրանցից 7-ը գրավել է մրցանակային տեղ, բայց այդ տեղերից բաժին չի ստացվում ֆիզիկային և մաթեմատիկային:

Ցավալի է, որ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներն աշխարհագրությունից մասնակից չեն ունեցել:

Անդրադառնալով օլիմպիադայի արդյունքներին ըստ շրջանների:

Ասկերանի շրջանի 35 հանրակրթական դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 68 աշակերտ՝ 17 դպրոցից /Ասկերանի, Իվանյանի, Նորագյուղի, Նախիջևանի, Ազնեբի, Ալմադբյուրի, Պատարայի, Այգեստանի, Խնածախի, Ավետարանցի, Խաչնաչի, Խնաբաղի, Խաչենի, Աստղաշենի, Սարուշենի, Ծաղկաշատի, Հարավի/, որոնք գրավել են 19 մրցանակային տեղ:

Մարտակերտի շրջանի 31 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 52 աշակերտ՝ 13 դպրոցից /Մարտակերտի հ.1, Նոր Այգեստանի, Հաթերի, Թալիշի, Կուսապատի, Մեծ Ծենի, Ներքին Հոռաթաղի, Չլդրանի, Վաղուհասի, Մաղավուզի, Կիչանի, Վանքի և Մարտակերտի հ.2/, որոնք գրավել են 9 մրցանակային տեղ:

Մարտունու շրջանի 36 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 67 աշակերտ՝ 16 դպրոցից /Մարտունու հ.1, հ.2, Ճարտարի հ.1, հ.3, հ.4, հ.5, Բերդաշենի, Աշանի, Թաղավարդի, Սարգաշենի, Խնուշիցի, Գիշու, Հերիտի, Ծեխերի, Կաղարծու, Կոխտաշենի/, որոնք գրավել են 12 մրցանակային տեղ:

Հաղուռթի շրջանի 25 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 35 աշակերտ՝ 9 դպրոցից /Հաղուռթի, Մեծ Թաղերի, Ջրակուսի, Ազոխի, Զյուրաթաղի, Տողի, Մարիամաձորի, Տունու միջնակարգ և Բանաձորի/, որոնք գրավել են 5 մրցանակային տեղ:

Շուշիի շրջանի 8 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 20 աշակերտ 2 դպրոցից, որից 7-ը՝ Շուշիի և Աբովյանի անվան միջնակարգ հոսքային, իսկ 13-ը՝ Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված դպրոցներից: Նրանք օլիմպիադային մասնակցել են 6 հունամիտար առարկաներից /հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, պատմություն, ՀԵՊ, ՆՁՊ/ և գրավել 2 մրցանակային տեղ:

Շահումյանի շրջանի 16 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 15 աշակերտ 9 դպրոցից /Քարվաճառի, Նոր Ղարաչինարի, Նոր Գետաշենի, Եղեգնուտի, Ալմաբերդի, Նոր Բրազուրի, Նոր Էրբեջի, Նոր Վերինշենի, Չարեքտարի/, որոնցից միայն 1 աշակերտ արժանացավ մրցանակային տեղի:

Քաշաթաղի շրջանի 53 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 35 աշակերտ 10 դպրոցից /Բերձորի հ.1, հ.2, Արտաշավիի, Կոստանյանի, Սարատակի, Կուրգավանի, Քարեգահի, Ուռեկանի, Քարոտանի, Ներքին Սուսի/, որոնք գրավել են 3 մրցանակային տեղ ՆՁՊ առարկայից:

Ըստ առարկաների կանգ առնենք օլիմպիադայի ընդհանուր մասնակիցների և նրանցից դրական «8» միավորային շեմը չհաղթահարած աշակերտների քանակի վրա.

- հ. լեզու առարկայի 60 մասնակցից - 1 աշակերտ
- հայ գրականություն առարկայի 24 մասնակցից - 4 աշակերտ
- մաթեմատիկա առարկայի 77 մասնակցից - 23 աշակերտ
- ֆիզիկա առարկայի 19 մասնակցից - 18 աշակերտ
- պատմություն առարկայի 27 մասնակցից - 4 աշակերտ
- աշխարհագրություն առարկայի 28 մասնակցից - 1 աշակերտ
- ինֆորմատիկա առարկայի 18 մասնակցից - 18 աշակերտ
- քիմիա առարկայի 12 մասնակցից - 9 աշակերտ
- գերմաներեն առարկայի 3 մասնակցից - 1 աշակերտ
- անգլերեն, ֆրանսերեն, ռուսաց լեզու, կենսաբանություն, ՆՁՊ և ՀԵՊ առարկաներից անբավարար գնահատականներ չեն գրանցվել:

Այսպիսով, դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 447 մասնակցից 71-ի գրավոր աշխատանքները /16%/ առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից գնահատվել են անբավարար /8 միավորից ցածր/: Սրանք փաստեր են, որ պետք է անհանգստացնեն բոլորին:

Այժմ ներկայացնենք հանրապետությունում գործող 1 ավագ և 7 միջնակարգ հոսքային դպրոցների արդյունքները քանակական և որակական առումով:

Ավագ և հոսքային դպրոցների մասնակիցների քանակն ըստ առարկաների.

Դպրոց	հ.լեզու	հայ գրակ.	ռուսաց լեզու	անգլերեն	ֆրանսերեն	գերմաներեն	պարս.	մաթեմատիկա	ֆիզիկա	կենսաբան.	ֆիզիկա	աշխարհ.	ինֆորմ.	ՀԵՊ	ՆՁՊ	Սրահայտ.
1 Ստեփ. հ.8 միջ. դպ.	2	1	-	2	-	-	-	1	1	1	-	-	-	-	-	8
2 Ստեփ. հ.11 ավագ դպ.	8	1	-	11	2	-	2	-	2	1	1	-	-	-	4	2
3 Շուշիի Աբովյանի անվ.միջ. հոսք. դ.	2	-	2	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	7
4 Ասկերանի միջ.	1	-	1	3	-	-	-	1	4	-	-	2	1	1	1	2
5 Մարտակերտի հ.1 միջ.	3	1	-	2	-	-	-	2	2	1	-	-	-	-	2	12
6 Մարտունու հ.1 միջ.	3	1	-	1	1	-	-	5	3	3	-	-	-	-	1	19
7 Ճարտարի հ.1 միջ.	-	-	-	3	-	-	-	-	1	-	1	-	-	-	2	8
8 Հաղուռթի միջ.	2	1	4	4	-	-	-	4	-	-	-	-	-	-	-	16

Հանրապետության բերելով արդյունքները 1 ավագ և 7 միջնակարգ հոսքային դպրոցների մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար՝ պարզաևստրվածների քանակն ունի այսպիսի պատկեր.

Դպրոց	հ.լեզու	հայ գրակ.	ռուսաց լեզու	անգլերեն	ֆրանսերեն	գերմաներեն	պարս.	մաթեմատիկա	ֆիզիկա	կենսաբան.	ֆիզիկա	աշխարհ.	ինֆորմ.	ՀԵՊ	ՆՁՊ	Սրահայտ.
1 Ստեփ. հ.8 միջ. դպ.	1	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2/1
2 Ստեփ.հ.11 ավագ դ.	1	-	6	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	10/5
3 Շուշիի Աբովյանի անվ.միջ. հոսք. դ.	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1/1
4 Ասկերանի միջ.	1	-	1	2	-	-	-	-	-	-	-	-	-	1	2	7/1
5 Մարտակերտի հ.1 միջ.	-	-	-	1	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	2/4
6 Մարտունու հ.1 միջ.	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	2/3
7 Ճարտարի հ. 1 միջ.	-	-	-	2	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	4/1
8 Հաղուռթի միջ.	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	2/5

Այսպես, համեմատություն անցկացնելով հանրապետությունում գործող 1 ավագ և 7 հոսքային դպրոցների օլիմպիադայի հանրապետական փուլի մասնակիցների և նրանց ցուցաբերած արդյունքների միջև՝ հանդիպում ենք անհամագատացնող փաստերի.

- Ստեփանակերտի հ.8 միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 306 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 8-ը, որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 2,6%-ը և միայն երկու աշակերտ արժանացավ մրցանակի:

- Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում ընդգրկված 620 աշակերտից օլիմպիադային մասնակցել է 34-ը, այսինքն՝ աշակերտների ընդհանուր թվի 5,4%-ը, որից մրցանակային տեղ գրավել է 10 աշակերտ:

- Շուշիի և Աբովյանի անվան միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 105 աշակերտից 7-ին, որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 6%-ը, հաջողվել է մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին: Բայց նրանցից միայն մեկն է գրավել մրցանակային տեղ:

- Ասկերանի միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 70 աշակերտ, որից 17-ը, այսինքն՝ աշակերտների ընդհանուր թվի 24%-ը, մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին, և նրանցից 7-ը արժանացել մրցանակի:

- Մարտակերտի հ.1 միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարանների 205 աշակերտից օլիմպիադային մասնակցել է 12-ը, որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 6 -ը, և նրանցից միայն 2-ն է գրավել մրցանակային տեղ:

- Մարտունու հ.1 միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 187 աշակերտների 10 տղուց՝ 18 աշակերտ, մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին, բայց միայն երկուսին հաջողվեց մրցանակային տեղ գրավել:

- Ճարտարի հ.1 միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարաններում ընդգրկված 139 աշակերտից 9-ը, որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 6%-ը, մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ զբաղեցրել է 4 մրցանակային տեղ:

- Հաղուռթի միջնակարգ /հոսքային/ դպրոցի 9-12-րդ դասարանների 179 աշակերտից 17-ին, որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 9%-ը, հաջողվեց մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին, և միայն երկու աշակերտ գրավեց մրցանակային տեղ:

Ավագ և հոսքային դպրոցների համեմատական վերլուծությունից հետո նկատելի է, որ՝

1-ին տեղում է Մարտունու շրջանի Ճարտարի հ.1 միջնակարգ /հոսքային/ դպրոցը /8 մասնակից - 4 մրցանակ-

կային տեղ - 50 %/ 2-րդ տեղում է Ասկերանի միջնակարգ /հոսքային/ դպրոցը /17 մասնակից - 7 մրցանակային տեղ - 41,1 %/ 3-րդ տեղում է Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցը /34 մասնակից - 10 մրցանակային տեղ - 29,4 %/:

Հանրապետության հանրակրթական 217 դպրոցից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 87 դպրոց: Թվարկենք այն դպրոցների անունները, որոնք գրեթե ամեն տարի մեծ պատասխանատվությամբ են պատրաստվում օլիմպիադային, և նրանց սաներն արդարացում են ուսուցիչների հույսերը: Դրանք են՝ Ստեփանակերտի հ. 11 ավագ, Ֆիզմաթ, Ստեփանակերտի հ.3 միջնակարգ, Ասկերանի շրջանի Ալմադբյուրի, Ազնեբի, Ասկերանի միջնակարգ /հոսքային/ դպրոցները, Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի, Մարտակերտի հ.1 միջնակարգ /հոսքային/ դպրոցները, Մարտունու շրջանի Ճարտարի հ.1 միջնակարգ /հոսքային/, Մարտունու հ.1 միջնակարգ /հոսքային/ դպրոցները, Հաղուռթի շրջանի Մարիամաձորի, Հաղուռթի միջնակարգ /հոսքային/ դպրոցները, Շուշիի Դ.Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական և Քաշաթաղի շրջանի Ուռեկանի միջնակարգ դպրոցները:

Վերլուծության ընթացքում ակնհայտ դարձավ ևս մեկ ուրախալի փաստ. ընթացիկ ուսումնական տարվա օլիմպիադայի հանրապետական փուլի 87 հաղորդի անվանացանկում կրկին հանդիպում ենք նախորդ տարիների մրցանակակիր աշակերտների անուններին:

Սիսայն աշակերտները, ովքեր առանձնացան իրենց գիտելիքներով, և նրանցից 25-ը, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս իրավունք ստացավ մասնակցել օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

- Նրանք են.
 1. Սնեժանա Աղաբեկյան, Ստեփանակերտի հ. 3 միջն. դպրոց, 11-րդ դաս.
 2. Աշոտ Ոսկանյան, հ. 3 միջն. դպրոց, 10-րդ դաս.
 3. Իզաբելա Աղաջանյան, հ. 3 միջն. դպրոց, 12-րդ դաս.

- 4. Լիանա Ստեփանյան, հ. 3 միջն. դպրոց, 2-րդ դաս.
- 5. Մարիաննա Աղաբեկյան, հ. 3 միջն. դպրոց, 12-րդ դաս.
- 6. Վաղարշակ Փալանջանյան, հ. 3 միջն. դպրոց, 10-րդ դաս.
- 7. Յանա Պետրոսյան, հ.8 միջն. դպրոց, 12-րդ դաս.
- 8. Աննա Հարությունյան, հ.11 ավագ դպրոց, 12-րդ դաս.
- 9. Ռոմելա Թամրազյան, հ.11 ավագ դպրոց, 12-րդ դաս.
- 10. Տիգրան Հայրիյան, հ.11 ավագ դպրոց, 12-րդ դաս.
- 11. Աննա Ղուլյան, հ.11 ավագ դպրոց, 11-րդ դաս.
- 12. Լիանա Հովհաննիսյան, հ.11 ավագ դպրոց, 11-րդ դաս.
- 13. Տիգրան Կիսիբեկյան, ֆիզմաթ դպրոց, 9-րդ դաս.
- 14. Արման Բաղասյան, ֆիզմաթ դպրոց, 10-րդ դաս.
- 15. Լիլիթ Բեգլարյան, Ասկերանի միջն. դպրոց, 12-րդ դաս.

- 16. Ալեքսանդր Շահրամանյան, Ասկերանի միջն. դպրոց, 11-րդ դաս.
- 17. Աննա Մանուչարյան, Ասկերանի շրջ. Ալմադբյուրի մ/դ, 11-րդ դաս.
- 18. Կարեն Մարտիրոսյան, Ասկերանի շրջ. Ազնեբի միջն. դպրոց, 12-րդ դաս.
- 19. Հարութ Մուսայելյան, Ասկերանի շրջ. Ազնեբի միջն. դպրոց, 12-րդ դաս.
- 20. Աննա Գալստյան, Ասկերանի շրջ. Նորագյուղի մ/դ, 12-րդ դաս.
- 21. Արմեն Սարգսյան, Ասկերանի շրջ. Իվանյանի մ/դ 12-րդ դաս.
- 22. Աստղիկ Բաբայան, Մարտակերտի շրջ. Նոր Այգեստանի մ/դ, 11-րդ դաս.
- 23. Լիլիթ Այվազյան, Մարտակերտի հ.1 միջն. դպրոց, 12-րդ դաս.
- 24. Արիաննա Սարգսյան, Մարտունու շրջ. Ճարտարի հ.1 մ/դ, 11-րդ դաս.
- 25. Աննա Մուսայելյան, Մարտունու շրջ. Ճարտարի հ.1 մ/դ, 12-րդ դաս.:

Այժմ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփելով՝ Հանրապետական հանձնաժողովի կազմկոմիտեի որոշմամբ 15 առարկայից լավագույն արդյունք ցուցաբերած 107 աշակերտի իրավունք է տրվել մասնակցել նաև ՀՀ-ում մարտ, ապրիլ և մայիս ամիսներին կայացած օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Շնորհավորենք և շնորհակալություն հայտնենք օլիմպիադայի հանրապետական փուլի մրցանակակիր աշակերտներին և ցանկանանք նրանց նոր հաջողություններ:

Ռ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
ԿԳ վարչության պետ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՇՏԵՔ



ՈՒՂԵՐՁՆԵՐ

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի և ամերիկահայ հրապարակագիր, բանաստեղծ, բանասերագետ, սրտաբան Հակոբ Այնթափյանի ու նրա տիկնոջ հետ սկիզբ առած համագործակցությանը հետաքրքիր նախաձեռնությունների շարքից էր Մատենադարան-Գանձասարում մայիսի 26-ին տեղի ունեցած «Հայոց լեզուն անաղարտ պահենք» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին ճանաչված լեզվաբաններ, գրականագետներ, ուղղորդողներ, պրոֆեսորներ և համալսարանի ու հասարակական շատ հարցեր լուծվել են Գանձասարում: Ցեղասպաններն ինչ-որ չափով կարողացել են հասնել իրենց նպատակին, բայց մեզ սպանել չեն կարողացել, քանզի չեն կարողացել սպանել մեր լեզուն: Եվ այսօր էլ մեր լեզվի առջև մեծ մարտահրավերներ կան»,- գիտաժողովի բացման իր խոսքում ասաց ԳՆՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը:

«Մեր ժողովրդի համար ճակատագրական շատ հարցեր լուծվել են Գանձասարում: Ցեղասպաններն ինչ-որ չափով կարողացել են հասնել իրենց նպատակին, բայց մեզ սպանել չեն կարողացել, քանզի չեն կարողացել սպանել մեր լեզուն: Եվ այսօր էլ մեր լեզվի առջև մեծ մարտահրավերներ կան»,- գիտաժողովի բացման իր խոսքում ասաց ԳՆՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը:

Լեզվին նվիրված միջոցառումները նորություն չեն Հայաստանում, Արցախում և Սփյուռքում: Բայց հայոց լեզվի անաղարտության պահպանմանը նվիրված գիտաժողով առաջին անգամ է կազմակերպվում:

Գիտաժողովի մասնակիցներին ուղերձներ են հղել ԱՀ կրթության, գիտության և սպորտի ու Մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարները, որոնք ներկայացրին փոխնախարարներ Միքայել Համբարձումյանն ու Մելանյա Բալայանը:

«Հայոց լեզուն անաղարտ պահենք» խորագիրն արդեն իսկ հուշում է, թե ինչ կենսական խնդիր քննարկման շուրջ ենք հավաքվել այսօր: Անկախություն հռչակելուց հետո և մայր հայրենիքում, և՛ Ադրբեջանի 70-ամյա լուծը թոթափած Արցախում թվում էր, թե վերջապես իր բնականոն հունի մեջ կընկնի մեր ինքնության պահպանման գլխավոր կռիվը՝ հայոց լեզուն: Մինչդեռ բնույթապես տարիները ցույց տվեցին, որ ինչպես բոլոր փոքր ազգերի, այնպես էլ մեզ համար 3-րդ հազարամյակը հարուստ է նորամուտ մարտահրավերներով:

Անտարակույս, կհաղթահարենք նաև այս մարտահրավերները՝ շնորհիվ մեր հավատի, սուրբ հավատի առ ապագա: Ինչո՞ւ, որովհետև ասում ենք հայոց լեզու և հասկանում ենք հայ ընտանիքի հարատևում, հայ դպրության բարգավաճում, հայ հավատքի ամրապնդում: Ասում ենք հայոց լեզու և հասկանում ենք աշխարհով մեկ իր հաղթարշավը տոնող համահարթեցման դեմ գլխավոր զենք: Հիրավի, հայոց լեզուն է մշուշուտ ապագային լավատեսորեն ու ինքնավստահ նայելու մեր գլխավոր գրավակա՞նը: Մի խոսքով, կա հայոց լեզու, կա հայ ժողովուրդ:

Վստահ են, որ նաև մեծ միջոցառումների և բոլորիս նպատակասլաց աշխատանքի շնորհիվ կհաջողվի նոր լիք ու ոգի հաղորդել բազմաթիվ ու բազմազան մարտահրավերների դեմ ամերիկյան պայքարող մեր ոսկեդեմիկ մայրենի պայքարին՝ ի շահ հայակերտումի և հայասպահանումի»,- ասվում է ԱՀ ԿԳՍ նախարար Ն.Աղաբալյանի ողջույնի խոսքում:


ԱՀ ՄԵՀԶ նախարար Լեռնիկ Հովհաննիսյանի ուղերձում մասնավորապես ասված է. «Հայ ժողովուրդը երկարատև ու անհավասար զինական պայքարում չկարողացավ պահել ազգա-

յին պետականությունն ու քաղաքական ինքնությունը: Բայց, ի հեճուկս այն ժամանակների և հետագայի քաղաքականություն վարողների, նա իր գրեթե ու դպրության ստեղծումով կարողացավ պահպանել իր լեզուն, ազգային, մշակութային դեմքը, մի իրողություն, որ այսօր էլ արդիական է: Այսօր էլ մայրենի լեզուն և նրա վրա խարխաված մեր մշակույթն անհաղթահարելի ուժ են մեզ պարտադրվող նոր փորձություններին դիմակայելու համար: Այս գիտակցությամբ էլ միաժամանակ պետք է փաստենք, որ մեր մայրենին՝ որպես ազգային, պետական արժեք,



մշտապես ունեցել է նաև մեր հոգածության ու պաշտպանության կարիքը: Այս սուրբ վայրում մեր մայրենին նվիրված գիտաժողովն ինքնին վկայությունն է այն բանի, որ մայրենին մեզ համար այսօր էլ շարունակում է մնալ թե՛ որպես ազգային պետական արժեք և թե՛ որպես պաշտամունք»:

ՄԵԿ ԼԵՂՈՒ, ՄԵԿ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵԿ ՈՒՂՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔ



Գիտաժողովի նախաձեռնողը կազմակերպիչներից Հակոբ Այնթափյանը ներկայացրեց իրեն հուզող մի քանի հարցեր:

Նրա համոզմամբ ազգային միասնության գլխավոր պայմանը լեզուն է: Սփյուռքահայ մտավորականին հանգիստ չի տալիս այն իրողությունը, թե ինչու պետք է ունենանք երկու ուղղագրություն, ինչու չպետք է ունենանք միասնական բառապաշար, ինչու պետական պաշտոնյաները, քաղաքացիները խախտում են սահմանադրությամբ հաստատված «Լեզվի մասին» օրենքը: Ըստ նրա՝ որպեսզի ազգային միասնականություն լինի, անհրաժեշտ է, որ լինի Հայաստան-Արցախ-Սփյուռք լեզվաուղղագրական միասնականություն: Անհրաժեշտ է հայոց լեզվի բառապաշարից մաքրել օտար բառերը, արևմտահայերենը մտցնել Հայաստան, վերականգնել դասական ուղղագրությունը, աստիճանաբար միացնել արևմտահայերենը և արևելահայերենը մեկ միասնական լեզվի մեջ, գունարած՝ գրաբարի սկզբունքները: Հայոց լեզվի հարցերը կամոնակարգելու համար ստեղծել Լեզվի բարձրագույն խորհուրդ՝ բաղկացած Հայաստանի, Արցախի և Սփյուռքի մասնագետներից: Հարկ է սկսել գրաբար դասավանդել միջնակարգ դպրոցում, արևմտահայերեն թեթևամով դպրոցներ ստեղծել Հայաստանում: Ազգի գոյությունը պաշտպանող գլխավոր միջոցը հայրենիքն ու հայ լեզուն են: Եվ սրանից բխող մյուս հասկանալիները՝ մշակույթ կենցաղավարություն, ավանդույթ: Ազգապահպան գործոնը լեզուն է, որպեսզի ունենանք մեկ հայրենիք, մեկ լեզու, մեկ ուղղագրություն:

Գիտաժողովում լավեցին շուրջ մեկուկես տասնյակ զեկուցումներ, որոնց շուրջ ծավալվեցին ակտիվ քննարկումներ, կատարվեցին առաջարկություններ: Ներկայացվեցին որոշ զեկուցումներից դրվագներ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԼԵՂՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔ



ՊԱՎԻՔ ԳՅՈՒՂՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔ

1918թ. մայիսի 28-ին Հայաստանը անկախություն ձեռք բերեց ծանրագույն պայմաններում. Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունից հետո բնօրրանից բնաջնջվել էր Արևմտյան Հայաստանի հայությունը, ողջ մնացածները սփռվել էին աշխարհով մեկ, արտաքսվել իրենց հայրենիքից: Արևելյան Հայաստանը լցվել էր հարյուր-հազարավոր գաղթականներով: Տնտեսությունը քայքայված էր, մոլեզուն էին սովը, համաճարակը: Երկիրն օրահասական դրության մեջ էր: Մարդկության պատմությանն ուղղված այդ ոճիրը՝ հասապանությունը, կործանարար հարված հասցրեց նաև հայոց լեզվին: Քանի որ կուտորվեց արևմտահայերեն խոսողների զգալի մասը, հայերենն այլևս չէր գործառնում որպես հաղորդակցության միջոց: Չկային լեզվակիրները: Կամ էլ մերոնք լռեցին՝ հայրենիք դարձնելով գաղտնի հաղորդակցվելու լեզու: Շատերն ուղղակի մոռացան:

Լեզվական վիճակը մտահոգիչ էր նաև Հայաստանի Արևելյան հատվածում՝ Մոսկովյան հանրապետությունում: 1920 թվականից ռուսական կայսրությանը միացված Արևելյան Հայաստանի պետական մարմինների, դատարանի և բանակի լեզուն ռուսերենն էր: Պաշտոնյաների զգալի մասը հայերեն չգիտեր կամ ուղղակի չէր ուզում գրել ու խոսել իր մայրենի լեզվով: 1918-1920թթ. հայկական մամուլը հաճախ է անդրադարձել ինչպես հայերենի, այնպես էլ երկրի այլ լեզուների գործառության և իրավունքների հարցերին: Այս շրջանի ամենակարևոր իրադարձություններից մեկը հայերենը պետական լեզու հռչակելու հարցն էր: Երկրի և ազգի համար պատմական նշանակալից այդ իրադարձությունը տեղի է ունեցել խորհրդարանի 52-րդ նիստում, որը գումարվել է 1919թ. դեկտեմբերի 24-ին: Նիստը վարում էր խորհրդարանի փոխնախագահ Լևոն Շանթը: Երկարատև ու բուռն քննարկումից հետո ընդամենը 2 հոդվածից բաղկացած օրենքն ընդունվում է: Հայերենը հռչակվում է ՀՀ պետական լեզու և պարտադիր դառնում պետական և հասարակական հաստատություններում ու բանակում: Հիմնարկությունները պարտավոր էին վեց ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկել հայերենը պետական գործավարության պաշտոնական լեզու դարձնելու ուղղությամբ (ի դեպ, հայերենի որևէ տարբերակում արված չէր, արևելահայերենի և արևմտահայերենի մասին ողջ քննարկման ժամանակ խոսք գրեթե չի եղել): Հանրապետությունում այլ լեզուների գործածությունը պիտի սահմանվեր հատուկ օրենքով: Ընդունվել էր ազգային-պետական վիթխարի նշանակության օրենք: Հարկավոր է նկատի ունենալ, որ հայերենը հայության կյանքում պետական լեզվի գործառույթ չի ունեցել Կիլիկյան հայկական թագավորության շրջանից ի վեր 5 հարյուր տարուց ավելի (բուն հայրենիքում՝ ավելի երկար, Բագրատունիների հարստության անկումից ի վեր):

Աշխարհաբար կամ նոր հայերենը իր 300-ամյա պատմության ընթացքում պետական լեզվի կարգավիճակ է ստանում առաջին անգամ հայրենիքի մի հատվածում հաստատված հանրապետության սահմաններում: Օրենքը, դժբախտաբար, երկար չգործեց, քանի որ շուտով՝ 1920թ. նոյեմբերին Հայաստանը խորհրդայնացվեց:

Խորհրդային շրջանում ևս հայերենը պետական լեզվի կարգավիճակ ուներ: Դա ամրագրված է եղել Խորհրդային Հայաստանի սահմանադրության մեջ: (1922, 1936, 1978): Հարկ է նշել, սակայն, որ այդ հաստատությունները՝ թե՛ հայերենը պետական լեզու է, ըստ էության հայտարարության արժեք ունենի. լեզվական հարցերը կարգավորված չեն եղել առանձին օրենքով: Հայաստանն ինքնուրույն պետական լեզվական քաղաքականություն չէր վարում: Փաստացի հայերենը խիստ նկատելիորեն

դուրս էր մղված պետական ու հասարակական կյանքից, զգալապես նաև գիտության շատ ճյուղերից:

Հայաստանը 20-րդ դարավերջին՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին կրկին անկախ հռչակվեց: Եվ ինչպես Առաջին հանրապետության շրջանում, այս անգամ էլ պետությունն անդրադարձավ պետական լեզվի խնդրին: Կիրառվեցին հատկապես Առաջին հանրապետության շրջանի պետական լեզվաքաղաքականության դասերը:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո նորանկախ Հայաստանի առջև ծանրացան 1918-1920-ականների ման շատ հիմնահարցեր:

Հայոց լեզվի նկատմամբ իրապես պետական վերաբերմունքի լավագույն վկայությունը ՀՀ Գերագույն խորհրդում «Լեզվի մասին» օրենքի ընդունումն է 1993թ. մարտի 30-ին:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի հիման վրա 1996թ. մարտի 20-ին ընդունվեց «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքը: ՀՀ և ԱՀ «Լեզվի մասին» օրենքները վկայում են, որ կիրառվում է գրեթե նույն լեզվական քաղաքականությունը, որի գլխավոր նպատակը հայերենի իրավունքների պաշտպանությունն է, նրա գերակա դիրքի ապահովումը պետության կյանքում:

Անկախություն հռչակելուց ի վեր Հայաստանում դասական (մաշտոցյան) ուղղագրության վերականգնման հետամուտ են ավանդական սփյուռքի և հայաստանյան մտավորականության որոշ շրջանակներ: Քննարկումների ժամանակ հաճախ է վկայակոչվում «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի հետևյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետությունը նպատակ է հայերենի ուղղագրության միասնականացմանը»: Ուղղագրության խնդիրը պարբերաբար օրակարգային է դառնում:

Մենք զգում ենք հասարակական տրամադրությունները: Մեր հարցումները ցույց են տալիս, որ ՀՀ հանրության զգալի մասը նախ չի պատկերացնում խնդիրը, որովհետև երբ խոսում ենք ավանդական ուղղագրության մասին, շատերը հասկանում են, որ գրաբարը պետք վերականգնվել և դառնալ խոսակցական լեզու: Արտառոց բաներ էլ են տարածում, որ ուղղագրության փոփոխությունը նշանակում է հրաժարվել արևելահայերենից: Մեկն էլ առաջարկում է սեպտեմբերից դասական ուղղագրություն սովորեցնել առաջին դասարանցիներին: Իսկ ովքե՞ր պետք է դա անեն: Ուսուցիչները: Բայց հենց որ դա լսում են, սարսափ է պատում նրանց: Հայկական բանասիրականում գրաբար սովորում են մի քանի կիսամյակ, ավարտում են, գրաբար խոսք չեն կարողանում կարգալ, զ նախիրը բաղաձայնից կամ ձայնավորից առաջ չգիտեն ինչպես կարդալ: Բանասիրական բաժիններն ավարտում են, այնինչ՝ արևմտահայերենը նրանց համար գրեթե օտար լեզու է: Սրա մասին պիտի խոսենք, սրանից պետք է սկսել: Խոսենք արևելահայերեն գրավոր և բանավոր խոսքի անավոր ցածր մակարդակի մասին: Մենք հսկայական անելիքներ ունենք: Իսկ եթե այս պահին մի որոշումով ուղղագրությունը փոխենք, աղետալի վիճակ կստեղծվի:

ԼԵՂՈՒՆ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ



Արման ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ՀՀ ԱԳՆ լրատվության և հանրային դիվանագիտության վարչության կցորդ:

Այսօրվա արագ զարգացող և գլոբալացված աշխարհում դիվանագիտության հին մեթոդներին ավելանում են նոր գործիքներ: Դիվանագիտության ավանդական օբյեկտ հանդիսացող կառավարություններին, քաղաքական վերանախափներին ավելանում է լայն հասարակության շրջանակների վրա դրական ազդեցություն ունենալու կարևորությունը: Այս միտումներն արտացոլվում են «հանրային դիվանագիտություն» հասկացության մեջ, երբ երկրի մասին դրական կարծիք ձևավորելու համար օգտագործվում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են մշակույթը, լեզուն, ավանդույթները: Այս համատեքստում հայերեն լեզվի պահպանումը Հայաստանի հանրային

ԳԻՏԱԺՈՂՈՎ

դիվանագիտության հաջողության հիմքերից է: Այստեղ ուզում են նշել արտաքին գործերի նախարարության ընդհանուր համակարգմանը և օտարերկրյա պետություններում Հայաստանի դեսպանությունների օժանդակությամբ հայկական մշակույթին նվիրված տարաբնույթ միջոցառումների՝ հայկական մշակույթային արժեքների ցուցադրությունների, կինոդիտումների, մշակույթային երեկոների, օտարերկրյա պետություններում Հայաստանի դեսպանությունների օժանդակությամբ հայկական մշակույթին նվիրված միջոցառումների անցկացումը:

Նմանօրինակ միջոցառումների լսարանը օտարերկրյա հասարակությունն է, որը տեղեկանում է հայկական մշակույթի, լեզվի և պատմության մասին՝ դրական վերաբերմունք ձևավորելով Հայաստանի նկատմամբ:

Հաջորդ կետը, որին կցանկանայի անդրադառնալ, լրատվության հոսքի հետ աշխատանքն է: 21-րդ դարի տեխնոլոգիական նվաճումները փոխել են լրատվության հետ աշխատանքի ավանդական պատկերը նաև մեդիատիկայում: Այսօր տեղեկատվությունը տարածվում է այնքան մեծ ծավալով, քանակությամբ ու արագությամբ, որ համախառն միջազգայն ազդում է հասարակական կարծիքի ձևավորման վրա: Նման արագության պայմաններում անջափ կարևոր է ճշգրիտ տեղեկատվության տարածումը, քանի որ նույնիսկ անճշան սխալների դեպքում, հաշվի առնելով տարածվածության աստիճանն ու արագությունը, դժվար է լինում ապահովել իրականությանը համապատասխանող տեղեկատվության վերականգնումը: Այս համատեքստում մեծ կարևորություն է ստանում նաև հայոց լեզվով ճիշտ ձևակերպումների անհրաժեշտությունը, քանի որ արտաքին քաղաքականության տարածման հիմնական սկզբնաղբյուրը ԱԳՆ-ն է, որը լրագրողների կամ անմիջական կապի միջոցով հասարակությանն է փոխանցում այս կամ այն իրադարձության վերաբերյալ տեղեկատվությունը:

Գիտաժողովի նման միջոցառումների կազմակերպումը միանգամայն ողջունելի է մտքերի փոխանակման տեսանկյունից: Մենք բաց ենք համագործակցության ու նոր առաջարկների ընդունման համար:

ՄԱՅՐԵՆԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԳՈՐԾՈՆ



Ձուկրա ԵՐՎԱՆՅԱՆ, ԳԴՏԳ, Բ.Գ.Ք.ՊՈՂՈՑԻԱՆ

Ինքնության փոփոխությունների, արժեքային ցուցիչներին ուղղված մարտահրավերներն ընդունելու և տեսակի պահպանմամբ մրցունակ դառնալու, ինչպես և ազգային մտածելակերպի արձանատվան էսփորտումներից, չարժեքների ազդեցություններից պահպանելու գործում առանձնաշնորհյալի դերը դարձյալ պատկանում է մայրենի լեզվին, հայոց պարագայում՝ ոսկեդարից հայերենին: «Մեր լինելության, գոյության անժխտելի պայմանն է լեզուն: Աշխարհի քարտեզի վրա ու երկրի հսկա տարածքում գրաված իրենց մի պատիկ տեղը, դարերի ճակատին գրած հայ ու Հայաստան անունը այս փոքրիկ հողն ու ժողովուրդը նվաճել են լեզվով: Լեզուն ասպրելու ձև է, լեզուն աշխարհ է, սնունդ ու պայքարի միջոց, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման եղանակ»,- հարցազրույցներից մեկում ասել է Հրանտ Մաթևոսյանը: Վարդի հարցին՝ ինչ է լեզուն Ձեզ համար, պատասխանել է. «Լեզուն հայրենիք է»: Ամեն ինչ է ասված: Լեզուն որպես ազգային ինքնության ճանաչողությունն ընդլայնող և խորացնող միջոց, անփոխարինելի դեսպատարություն ունի նաև կրթության ազգային բովանդակության ռազմավարությունն իրականացնելու գործում: Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի տված հարցազրույցներից մեկում կարդում ենք. «Մասնավորապես ճշգրիտ գիտությունների ներկայացուցչների համար լեզուն ոչ միայն հաղորդակցության, այլև մտածելու, հայտնագործելու շատ կարևոր միջոց է... Լեզ-

վի ճշգրտության, դիպուկության, խորության և այլ առանձնահատկությունները բացառիկ դեր են կատարում գիտական աշխարհում... Լեզուն ինքնին մտածողություն է: Կատարյալ լեզուն ծնունդ է կատարյալ մտածող»: Ի դեպ, աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Գրիգոր Գուրզադյանը անթաքույց գոհունակությամբ է իր մի խոսակցությունում պատմում գիտությունների ակադեմիայի այն ժամանակվա նախագահ Վիկտոր Համբարձումյանի խոսույթում ու պահանջկոտության մասին, որ նա ցուցաբերում էր ակադեմիայի ասպիրանտուրան ընդունվողների հանդեպ: Հայերենից քննություն հանձնելը պարտադիր պահանջ էր բոլոր մասնագիտությունների համար: «Պետք է փակել ակադեմիայի դռներն այն մարդու առջև, ով չունի հարգանք իր մայրենի լեզվի նկատմամբ»,- ասել է նա:

Թե ինչ դեր է հատկացվում հասարակության հոգեկերտվածքում լեզվին, պայմանավորվում է ազգային նվաճումներով հարստացած կրթական մշակույթ ունեցող դպրոցական համակարգով:

Կարևորելով ազգային լինելության ամենահզոր պատվարներից մեկի՝ լեզվի դերը մեր ժողովրդի կյանքում՝ հարկ է էլակետային դարձնել այդ անփոխարինելի արժեքի ոգեկերտման առաքելությունը՝ նկատի առնելով, որ այն, իր մեջ ամփոփելով ժողովրդի դարավոր պատմության, հոգեկերտվածքի, կենսափոխակերպության ու պատմության, դավանած արժեքները ու բարոյականության առանձնահատկությունները, սերունդներին սովորեցնում է ժողովրդի հավաքական իմաստության դասերը և պատգամում պահպանել հայրենասիրության և ազգային արժանապատվության գիտակցումի՝ դարերով մաքրագործված սկզբունքները:

ՄԵՐ ԼԵՁՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ



Վահրամ ԼԱԼՅԱՆ, ԳԼԳ, պատմական գիտությունների թեկնածու, աստվածաբան.

Խոսել մաքուր հայերենով՝ մշակում է թոթափել օտարի լուծը: Լեզվի և ինքնաճանաչողության կապն անհերքելի է, քանի որ լեզուն կարող է նաև ինքնություն պարտադրել: Դեռ փոքր հասակից «Մենք»-ի գիտակցումը մարդու մեջ առաջին հերթին ի հայտ է գալիս լեզվական միասնությունից և միանմանությունից: «Ես հայերեն խոսող և հայոց տառերով գրող ժողովրդի մի մասնիկն եմ, որ հազարամյակներ շարունակ ապրել է հայկական լեռնաշխարհում»,- այս գիտակցությունն է աստիճանաբար արձանատվորվում հայկական դպրոց հաճախող հայ մանուկի մտքում: Իսկ «Նրանք»-ը հայ դպրոցի աշակերտի համար հայոց լեզվով չխոսող, մաշտոցյան տառերով չգրող, հայոց պատմական հայրենիքի վերականգնման նախանձախնդրությունն չունեցող օտարներն են: Այսինքն՝ հայկազյան լեզուն միայն պարզ հաղորդակցության միջոց չէ, այլև ազգային ինքնության ներարկիչ, հոգեմտավոր տարածք, հոգևոր հայրենիք, հոգևոր Հայաստան:

ՏԵՐ ԿԱՆԳԵՆԷՔ ՄԵՐ ՈՍԿԵՂԵՆԻԿ ԼԵՁՎԻՆ



Վարդան ՎԱՎԻԳՅԱՆ, ԳԼԳ ռեկտոր, Բ.Գ.Պ. պրոֆեսոր

Հայ ժողովուրդը հարուստ է մատենադարաններով. մեր առաջին վանքից մինչև այսօր ունենք մատենադարաններ: Մենք աշխարհի առաջ հպարտանում ենք մեր Մատենադարանով, բայց նրա հարստությանը, որը հիմնականում գրաբարով է, մեզանից ո՞վ է փորձում ծանոթանալ կամ փորձում մատչելի թարգմանել: Եթե ես չեմ կարողանում հստակ ու մաքուր կարդալ Հակոբ Օշականի,

արևմտահայ մյուս գրողների համաշխարհային ժառանգությունը, ուրեմն՝ դա իմ հարստությունն է՝ իմ լինելով հանդերձ: Ես գտնում եմ, որ մեր ժողովրդի մեծագույն աղետը գրաբարից հրաժարվելն էր: Շատ մեծ կորուստներ ունեցանք, ու այսօր նաև բարբառներն են օտարվում: Տերյանի լեզուն ընտիր լեզու է, բայց չնուշանանք, որ լեզուն նրա մտածողության մեջ ոսկեդարի լեզուն է: Եվ Տերյանը, որ գրում է՝ արքայական լեզու, դրանով հասկանում է մեր գրաբարը, մեր դասական լեզուն, որ իսկապես արքայական է: Իսկ մենք ի՞նչ ենք անում, կարողանո՞ւմ ենք լիարժեք կարդալ Վարուժան, Օտյան... Եվ դա մեզ աղքատացնում է: Խորհրդային շրջանի քաղաքական այլաճակաբառապաշարը դեռ մեզանից դուրս չի եկել, և հնարավոր չէ միանգամից հրաժարվել: Մենք պետք է գնանք դեպի մեր մտածողությունը, իսկ մեր մտածողությունը տանում է դեպի մեր ակունքները: Մենք չունենք ազգային զարգացման ծրագիր, ինչպես ունեն հրեաները: Մեզանից յուրաքանչյուրը իր ճշմարտությունն ունի: Դա բնական է, բայց մենք մեր ճշմարտությունները հանրագումարի չենք բերում և ազգային զարգացման ծրագիր-ուղեցույց գծում մեզ համար: Մեր դպրոցական ծրագրերում պետականորեն պետք է մտնի արևմտահայերենն այնպես, ինչպես արևելահայերենը: Դա ինքնաճանաչման լավագույն ձևերից մեկն է, և այս բոլոր խնդիրները պետք է լուծվեն պետականորեն: Մեր նոր ծնվող երեխաները պետք է մեծանան՝ գրաբար իմանալով: Մենք պետք է տեր կանգնեք մեր ոսկեդարից հայոց լեզվին, քանզի լեզուն մտածողություն է, լեզուն մեր գոյության առաջին անփոխարինելի պայմանն է:

ՈՐՊԵՍ ԱՄՓՈՓՈՒՄ



Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, Բ. Գ. Պ., պրոֆեսոր

Ֆանտաստիկ մատենադարանի հարկի ներքո մեր մտահոգությունները փոխանցեցինք իրար: Ընդհիվ տեր և տիրուհի Այնթափյանների և Վարդան Հակոբյանի կազմակերպչական ջանքերի, մենք կարողացանք միասնաբար արժարժեք այսօրվա հայությանը մտահոգող շատ կարևոր հիմնահարցեր: Եվ ավելի կարևոր է, որ այս քննարկումներն իրականանան մեր հայոց պետականության ներկայությամբ: ՀՀ և ԱՀ պետական մարմինների ներկայացուցիչները հանդես եկան շատ հետաքրքիր դիտարկումներով: Դա նշանակում է, որ մենք քննարկել ենք հատկապես օրախնդիր շատ կարևոր մի հարց, որի ամունն է՝ «Հայոց լեզուն անաղարտ պահենք»: Մենք տեսանք, թե հայոց լեզուն այսօր ինչքան լուծման կարող է հիմնահարցեր ունի: Դրանք գրական արևելահայերենի և արևմտահայերենի ու առաջին հերթին արևմտահայերեն-գրաբար հարաբերակցության, ուղղագրության հիմնախնդիրներն են: Երկու ուղղագրություններն էլ ի հայտ են եկել պատմական անհրաժեշտությամբ: 1922-ից հետո նոր ուղղագրությամբ ստեղծված ամբողջ գրականությունը վերակերտելու, վերափոխելու խնդիր կառաջանա, եթե մենք ուղղագրության կտրուկ փոփոխության հարց առաջադրենք: Բարեբախտաբար, կտրուկ փոփոխության հարց ոչ ոք չառաջադրեց: Բոլորն էլ խոր ըմբռնումով հասկանում են, որ դա ժամանակ պահանջող խնդիր է: Իսկ պե՞տք է, որ վերադառնանք դասական ուղղագրության, մաշտոցյան ժամանակների ուղղագրությանը: Սա այլ հիմնախնդիր է, իսկապես հատկապես հարցն առաջադրողները միամիտներ չեն, նրանք շատ լավ գիտեն, թե ինչ են առաջարկում և շատ լավ ըմբռնում են, թե ինչ ժամանակի ընթացքում է հատկապես այդ պահանջը: Այս պարագայում ես հարկադրված եմ դիմել Խ.Աբովյանի օգնությանը: Մենք ինքնաբերաբար Խ.Աբովյանին ասես դուրս ենք բերել մեր լեզվի, նոր գրականության հիմնադիր և գրաբարի թշնամի: Այդպիսի բան չկա: Ահա ինչ է գրել Աբովյանը «Պարապ

վախտի խաղալիք» գրքի առաջաբանում. «Մեր գրաբար լեզուն անգին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեն, մեկն էլ աս են համը, էն քաղցրությունը, էն ճիստությունը չունի, բայց մեր վատ բախտիցը հազարից մեկը չի հասկանում, ի՞նչ պետք է արած: Երանի էն սիսթին, որ մեր ազգը քիչ-քիչ կարողանա ես կորած գանձը գտնիլ ու իր լեզուն սովորիլ, իմանալ: Բայց ո՞վ չգիտի, որ սա շատ ժամանակ կուզի»: Ավելի ստույգ ձևակերպում անհնար է գտնել: Այսինքն՝ Աբովյանը աշխարհաբար դիտում էր ոչ թե նապատակ, այլ միջոց: Աշխարհաբարով գրագիտացնել ժողովրդին և նրան պարտադրել սովորել գրաբարը, գտնել իր գանձը, որպեսզի դրանով ժողովուրդը, նոր սերունդները կարողանան հաղորդակցվել հազարամյակների ընթացքում գրաբարով ստեղծված մեր ժողովրդի գանձին: Սա իսկապես որ մեծ մտածողի, մեծ լուսավորչի ամենաճշգրիտ ցուցումն է այսօրվա գիտաժողովի մասնակիցներին ու բոլոր նրանց, ում մտահոգում են այս հարցերը:

Եվ այսօրվա բոլոր գեկուցումներն էլ՝ Լ՝ հայոց լեզվի թվայնացման, և՛ մեքենական թարգմանության, և՛ մյուսները պարունակում են հրատապ հիմնախնդիրներ, որի առջև կանգնած է հայ մարդը, հայ մտավորականը: Մենք չենք կարող աչքներս փակել, ակադեմիկոս խցկել, ինքնաբավ վերաբերմունք դրսևորել մեր լեզվի այսօրվա մակարդակի նկատմամբ ու նրա առջև ծառայած հիմնախնդիրներն անտեսել: Նոր ժամանակների քաղաքակրթությունը, տեխնիկական առաջընթացը, զանգվածային լրատվամիջոցների, համակարգչային տեխնիկայի, այսօրվա մեքենաբար թարգմանվող լեզուների համապատկերին մեր լեզվի տեղն ու դերը նոր սերունդները պետք է որոշեն գիտական արդի չափանիշներին համապատասխան: Սա նույնպես շատ կարևոր հիմնահարց է: Մենք դրանք չենք կարող անտեսել: Եթե հարցը կա, լուծում է պահանջում: Իսկ դա հնարավոր չէ լուծել մեկ գիտաժողովով: Այդ հարցերն իսկապես տակալան ժամանակ, հնարավորություններ ու պետական աջակցություն պահանջող խնդիրներ են, որոնք իրոք պետք է լուծվեն հենց պետականության սահմաններում: Բարեբախտաբար, մեր պետականությունն իր երկու դրսևորումներով կանգնած է այդ խնդիրներին լուծում տալու դիրքերում, և այս գիտաժողովը հենց դրան արտահայտություն է: Այս խնդիրներն այնքան են հրամայական լուծում պահանջում, որ մենք էլի ենք համոզվելու կամ այստեղ, կամ Հայաստանում, կամ ամենուր: Այս հարցերը կքննարկենք նաև ԵՊՀ-ում:

Գիտաժողովը պետք է գնահատել իր արդյունքով, իսկ արդյունքը հայ մտավորականության նորից հանդիպման այս ջերմ մթնոլորտն է, քննարկումների բարձր մակարդակը և գեկուցումների խոր գիտականությունը: Միայն այս եղանակներով է հնարավոր լուծել մեր ժողովրդին վերաբերող բոլոր, այդ թվում՝ հայոց լեզվի և նրա անաղարտության կարևորագույն հարցերը: Ես կուզեմայի այսպիսի մի համաժողով գումարել խոսելու մեր հեռուստատեսության, մամուլի, ռադիոյի լեզվի, դպրոցական դասագրքերի մասին և այսօրվա բառապաշարում տեղ գտած օտարանուն, ոչինչ չասող և բնիկ հայերեն բառի տեղը զբաղեցրած օտար բառերի մասին: Մեր նոր սերունդին արժանի ոգով դաստիարակելու և մեր պետականությունն ավելի ամրապնդելու մասին:

«Հայոց լեզուն անաղարտ պահենք» գիտաժողովը, հիմք ընդունելով գեկուցումների կարևոր առաջարկություններն ու պահանջները, ելնելով խնդրի հրատապությունից, Մայր Հայաստանի, Արցախի, Ափյուռքի անխորտակելի միաբանության, հայրենիքի հզորությունն ու հայոց պետականությունը առավել ամրապնդելու, մեր ազգային անվտանգությունը ապահովելու, նոր ժամանակների մարտահրավերները հաղթահարելու անհրաժեշտությունից, հանդես եկավ հայտարարությամբ:

Վերջում ԳԼԳ գիտական կենտրոնի և ուսանողական գիտական ընկերության անունից հավաստագրեր հանձնվեցին գեկուցողներին:

31 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1989-Ի ՄԱՅԻՍԸ

Իմ օրագրից

Մայիսնեկյան տոնը, որ նույնիսկ 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի դժվար տարիներին էինք նշում, 1989թ. մենք՝ արցախահայերս, չենք նշում: Մանկուց հիշում եմ, բազմաթիվանոց ցուցապատումներով, կարմիր դրոշմներով ամեն տարի (դպրոցական տարիներին) մայիսի 1-ին Ազդից գնում էինք դեպի Տրախտիկ և Սալաթյաթին (աղբբեշ) գյուղերից եկող աշակերտներին ընդառաջ և հանդիպում մեր գյուղի քարանձավի (Վերվան) մոտ ու «եղբայրական» միտինգ կազմակերպում: Իսկ գիտակցական կյանքիս որպես պրոպագանդիստ, քաղցելուցուղ, ամեն տարի մայիսի 1-ին գեկուցումով հանդես էի գալիս դպրոցում և գյուղի հասարակության առաջ: 1970-80-ական թվականներին, երբ Ստեփանակերտի ուսումնական հաստատություններում էի աշխատում, մայիսնեկյան տոներն արդեն ուրիշ էին. մեծ շքեղությամբ էինք պատրաստվում և նշում՝ ձգտելով մարզի ղեկավարության գովեստին արժանանալ: Այստեղ մայիսնեկյան վերջին շքերթը մեր Շարժման առաջին տարվա Մայիսի 1-ն էր, երբ փոթորկված ժողովուրդը «Միացում», «Արդար պահանջ, ոչ մի նահանջ», «Լեհին, պարտիա, Գորբաչով», «Հայաստան» և այլ ցուցապատումներով անցնում էր Լեհիմի արձանի առջև, իսկ ամբիոնից, ծափահարողներից, մարզկոմի առաջին քարտուղար՝ երջանակահիշատակ Հեռնիխ Պողոսյանը ուրախացած գոչում էր. «ժողովուրդ, մենք ձեզ հետ ենք...»: Դրանից հետո ուղիղ 30 տարի մայիսնեկյան շքերթ չեմ տեսել: Սպասում էի, որ 2019թ. մայիսի 1-ին զոնե որոշ կուսակցություններ դուրս կգան շքերթի...

Այժմ՝ 1989թ. մայիս ամսվա իրադարձությունների մասին:

1989թ. մայիսի 1-ին ուրախ տրամադրությամբ չհանդիպեցի:

2.05.1989թ.: Եթե երեկ՝ մայիսի 1-ին, քաղաքի հրապարակը և փողոցները սակավամարդ էին, ապա այսօր՝ 2.05.89թ., Ստեփանակերտի գերեզմանոցի և ներսը, և՛ այնտեղ տանող ճանապարհը բազմամարդ է: Բազմաթիվ թուզիկներ երևացին, որով հորդորում էին, որ վաղը՝ մայիսի 3-ին ոչ ոք աշխատանքի դուրս չգա...

3.05.1989թ.: Ամբողջ մարզում, բացի Մարտակերտից և Շուշիից, գործադուլ է հայտարարված: Ինչպես վերևում եմ նշել, նախօրյակին քաղաքում և գերեզմանատանը այդ մասին թուզիկներ էին տարածվել, քաղաքի դպրոցներում նույնպես պարպումներ չկայացան:

Երեկոյան գրույց եղավ մի քանի գործադուլավորների հետ, որոնք իրենց անվստահությունը հայտնեցին Հատուկ կառավարման կոմիտեի նկատմամբ...

4.05.1989թ.: Գործադուլի մեջ է մտել նաև Մարտակերտի շրջանը: Հատուկ կոմիտեի նախագահ Արևադի Վուսկին կոմիտեի անդամների հետ կուսակցության Ստեփանակերտի միստերի դահլիճում է, որտեղ հավաքված է քաղաքի ակտիվը: Ստեղծված իրադրության մասին հանդես եկավ քաղկոմի առաջին քարտուղար ընկ. Վ.Աթաջանյանը: Պահանջվեց, որ կոմիտեն մինչև վաղը ժամը 6-ը մեզ պատասխանի.

1. Աղբբեշյանական գյուղերում նոր կառույցների դադարեցման.

2. կուսմարզկոմի և մարզխորհրդի աշխատանքների վերականգնման մասին, միևնույն ժամանակ անվստահություն հայտնվեց Հատուկ կառավարման կոմիտեին:

5.05.1989թ.: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում հրատարակվել է «Բաց նամակ ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ ընկ. Մ.Ս.Գորբաչովին» կուսակցության շրջանների, Ստեփանակերտի առաջին քարտուղարների, շրջագործկոմների և Ստեփանակերտի նախագահների ու ԽՍՀՄ ժողովրդական մի խումբ դեպուտատների ստորագրությամբ՝ թվով 14 հոգի (նամակը կցված է օրագրիս): Ներկայացնում եմ մեր ժողովրդի կողմից անչափ հարգված այդ անհատներին.

1.Վ.Գաբրիելյան - կուսակցության Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժող. դեպուտատ

2.Վ.Գրիգորյան - Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժող. դեպուտատ

3.Բ.Դադանյան - Ստեփ. արտադրական ավտոտրանսպորտային միավորման գլխավոր դիրեկտոր, ԽՍՀՄ ժող. դեպուտատ

4.Հ.Պողոսյան - ԽՍՀՄ ժող. դեպուտատ

5.Ս.Բաբայան - ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի անդամ

6.Վ.Թովմասյան - ԼՂԻՄ Հատուկ կոմիտեի անդամ

7.Վ.Աթաջանյան - կուսակցության Ստեփանակերտի առաջին քարտուղար

8.Վ.Քոչարյան - կուսակցության Ասկերանի շրջկոմի առաջին քարտուղար

9.Բ.Բաղդիան - կուսակցության Հաղուրթի շրջկոմի առաջին քարտուղար

10.Ս.Միրզոյան - Ստեփանակերտի քաղգործկոմի նախագահ

11.Վ.Ջավադյան - Մարտակերտի շրջագործկոմի նախագահ

12.Ս.Սեյրամյան - Մարտունու շրջագործկոմի նախագահ

13.Է.Նավասարդյան - Հաղուրթի շրջագործկոմի նախագահ

14.Ա.Աղաբաբյան - Ասկերանի շրջագործկոմի նախագահի պաշտոնակատար

Ինչպես տեսնում եք, Ղարաբաղի ղեկավարությունը լրիվ կազմով ժողովրդի հետ է: Նամակում նշված է՝ «Մարզի բնակչությունը ընթացողում է ընկալել ինքնավար մարզը Աղբբեշյանի վարչական ենթակայությունից դուրս բերելու ուղղությամբ փոխզիջողական քայլի ամբողջ նշանակությունը՝ մարզում կառավարման հատուկ ձև մտցնելու... Սենք շարունակում ենք գտնել, որ կառավարման հատուկ ձևը չպետք է փոխարինի տեղական կուսակցական և խորհրդային մարմինների կառուցվածքին, այլ պետք է վեր լինի այդ մարմինների՝ փոխարինելով հանրապետական ղեկավարությանը, որը լրիվ իրեն հեղինակագրվել է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հարցում:

...Վեզիրովը բազմիցս հրապարակայնորեն հայտարարել է, թե ԼՂԻՄ-ի պրոբլեմը լուծված է վերջնականապես և անդարձ, ընդ որում, նա վկայական է ամծամբ ձեզ հետ ունեցած հաճախակի հանդիպումներին ու գրույցները: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը վրդովված է Վեզիրովի սադրիչ հայտարարություններից և...»:

Այնուհետև բաց նամակի հեղինակները, բնութագրելով Արցախում ստեղծված իրադրությունների ընթացքը, պահանջում են. «...Ստեղծված պայամաններում անհրաժեշտ ենք համարում Լեռնային Ղարաբաղի մի խումբ ներկայացուցիչների հանդիպումը Ձեզ հետ ճգնաժամային իրավիճակից դուրս գալու ուղիներ գտնելու նպատակով» («ԽՂ», 3 մայիսի 1989թ.):

5.05.1989թ.: Կուսակցության Ստեփանակերտի միստերի դահլիճը դարձյալ լեփ-լեցուն է: Ա.Վուսկին կանչել էր կուսշրջկոմի քարտուղարներին, շրջագործկոմների նախագահներին և բաժնի վարիչներին ու ակտիվին և ըմբարկում էր ստեղծված իրավիճակից դուրս գալու հարցը, երբ լուր ստացվեց, որ Կրկնամում ընդհարում է սկսվել:

6.05.1989թ.: Գործադուլը շարունակվում է, հիմնական խոսակցությունը Կրկնամի դեպերի մասին է:

8.05.1989թ.: Նամակ է ուղարկվել Հայաստանի կառավարությանը, ՀԿԿ-ին Հայաստանի Գերագույն խորհրդին և հայ ժողովրդին, որ որքան հնարավոր է՝ օգնեն մեզ, մեզ մենակ չթողնեն:

9.05.1989թ.: Հաղթանակի օրն է. քաղաքի ամբողջ բնակչությունը՝ մեծ ու փոքր, բոլորը ծաղիկներով զնում են Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշահամալիր: Այստեղ ականատես եղանք նախադեպը չունեցող իրադարձության: Նստացույց են հայտարարել Հայրենական մեծ պատերազմի վետերանները

«Վերջ պանթուրքիզմին», «Չենք ների Սու-մգայիքը», «Ղարաբաղը վերամիավորել Մայր Հայաստանին» և այլ ցուցապատումներով:

Արևադի Վուսկին 4-5 գեներալների հետ հուշարձանին ծաղկեպսակ դնելուց անմիջապես հետո մոտենում է նստացույցի մասնակիցներին, շնորհավորում հաղթանակի տոնի առթիվ, սակայն վետերանները որոշել էին լռությամբ պատասխանել նրանց, բայց երկու հոգի չդիմանալով՝ ցատկահար շարտեցին «Ինչո՞վ եք շնորհավորում, ռետինե մահակներով, տանկերով, թե՞ պարետային ժամով: Բավական է մեզ խաբեք» և պահանջեցին իրենց հանգիստ թողնեն ու հեռանան:

10.05.1989թ.: Գործադուլը շարունակվում է: Որոշել էինք դպրոցներում վերսկսել պարապմունքները, բայց հատուկնետ աշակերտներ էին եկել, այն էլ 9-10-րդ դասարանից: Պարետային ժամի քիչ փոփոխություն եղավ: Չեն գործում մուր-մանկապարտեզները: Միայն աշխատում են կենսականորեն անհրաժեշտ ձեռնարկությունները և բուժական հիմնարկները: «Խորհրդային Ղարաբաղ» թերթից իմացա, որ փակ են Ասկերանի միջնակարգ դպրոցի և մուր-մանկապարտեզի դռները, իսկ Մարտակերտի և Հաղուրթի դպրոցները աշխատում են: Լավ է, որ գյուղատնտեսական աշխատանքները շարունակվում են:

11.05.1989թ.: Գործադուլը շարունակվում է: Լեհիմի անվան հրապարակը դարձյալ մարդաշատ է: Լսել էինք, որ Օրուշը (Աղբ. կոմիտեի ԿԿ քարտուղար) եկել և մտել է մարզկոմի շենք, որտեղից դուրս են վճռել: Երևանը սկսել է բովանդակալից հաղորդումներ տալ. մայիսի 3-8-ը թղթակիցներ են եկել, նկարահանել ու հարցազրույցներ կազմակերպել գործադուլավորների հետ: Օրագրիս կցված է «Երեկոյան Երևան» թերթի սեփական թղթակից Լևոն Մկրտչյանի «Ո՞րն է ելքը» վերտառությամբ հոդվածը: Նա հարցազրույցներ է ունեցել մարզի մի շարք բնակիչների հետ՝ իմանալու նրանց կարծիքը՝ ո՞րն է ելքը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Մեջբերում եմ միայն 2 հոգու կարծիքները. իմ կողմից (և ոչ միայն) շատ հարգված Սոկրատ Խանյան. «Ղեռ մ.թ.ա. այս հողի վրա, Արցախ աշխարհում ձևավորվել է մեր հայ լեզուն, ստեղծվել է հայկական մշակույթ: Կառուցվել են տաճարներ, «ասեղ-նագործվել» բազմաթիվ խաչքարեր: Այդ բոլորը Արցախի հայ մարդու ազգային ոգու արտահայտությունն են, որոնք խոսում են, շնչում են հայերեն: Աղբբեշյանում փոքր ազգերի, ինչպես և հայերի նկատմամբ, դործում է ազգային խորակամության քաղաքականություն: Կարճ ժամանակամիջոցում փակվեցին Բաքվի 76 հայկական միջնակարգ դպրոցները, 1949թ. փակվեց Երեմյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը, որը հիմնադրվել էր դեռևս 1870թ.: 1969թ. փակվեց Բաքվի Լեհիմի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը: Այդ նույնը տեղի ունեցավ նաև Կիրովաբադի հայկական դպրոցների հետ, Հայկական դրամատիկական թատրոնի, մշակութային, լուսավորչական հիմնարկների հետ: Լեռնային Ղարաբաղը Աղբբեշյանի մի շարք ղեկավարների համար խորթ զավակ էր: Հենց դրանով պետք է բացատրել, որ գնալով պակասեց մեր լեռնաշխարհի հայ ազգաբնակչության թիվը: Յուրաքանչյուր ազգի ապագան նրա երեխաներն են: Բայց ի՞նչ տեղի ունեցավ ԼՂԻՄ-ում: Սոցիալ-տնտեսական-մշակութային կյանքի վատթար պայմանների պատճառով արտահոսքը խիստ ուժեղացավ: Եթե 1939-1940 ուստարում Լեռնային Ղարաբաղի 198 դպրոցներում սովորում էին 39 հազարից ավելի հայ երեխաներ, մոտ 3 հազար արդեջանցի երեխաներ, ապա 1987թ. հայկական 196 դպրոցներում՝ 24 հազար հայ երեխա և 8 հազար աղբբեշյանցի երեխա: Ահա թե ինչն է հասել ԼՂԻՄ-ը: Փաստորեն Աղբբեշյանի ղեկավարությունը ձգտում է ԼՂԻՄ-ը հասցնել Նախիջևանի ԽՍՀ-ի աստիճանին...

Արցախի հայ ազգաբնակչությունը լավ է գիտակցում, որ մայր Հայաստանի հետ վերամիավորվել միակ ելքն է, արդարացի պահանջ: Մենք մեկ ժողովուրդ ենք, ունենք մեկ լեզու, մեկ մշակույթ, մեկ հոգեբանություն և ապրում ենք... Անհրաժեշտ է անհապաղ վերականգնել կուսակցության մարզկոմը, նրա բյուրոն... Ինչպես նաև ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի գործկոմը՝ իր բոլոր բաժիններով, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն կարող է նման դեպքում հաջողությամբ օգնել ԼՂԻՄ-ի թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ քաղաքական հարցերի լուծմանը»:

ՕՖելյա Սարգսյան. «Գիտեք, ես նորեկ եմ մեր քաղաքում, լեհիմյանցի եմ: Ես ինձ շատ լավ եմ գզում դարաբաղիների մեջ, նրանք շատ մարդասեր են, կարեկից, անմիջական, ազնիվ և շատ հպարտ մարդիկ են: Ուրախ եմ, որ նման հայրենակիցներ ունեն: Անչափ շնորհակալ եմ, օգնեցին ամեն ինչով՝ բնակարանով, կահ-կահասիով, իրերով, աշխատանքից գոհ են: Գործադուլների մասին ինչ ասեմ, գիտեմ, որ Ղարաբաղին անմտածված գործ չի բռնում: Գործադուլը երկի նրա վերջին ելքն է իր ապագայի համար, իր արդարացի պայքարում: Բայց մի բանում ես նրանց հետ համաձայն չեմ և չեմ կարող լինել: Դասադուլներին է վերաբերում: Դասադուլը հային սագական չէ: Հայ ծնողը ոչ մի իրավիճակում, թեկուզև կրակի բոցում չի ցանկանա, որ իր զավակը դպրոց չհաճախի, դասադուլի դիմի: Հայ ժողովրդի պատմությունից գիտեմ, որ ամենահավերժ պայմաններում նույնիսկ չեն դադարեցրել դպրոցական պարապմունքները: Հիշե՛ք Ավարայրի ճակատամարտը, Մուսա լեռան 40 օրը, թեկուզ երկրաշարժի ծանր օրերը... սխալ է դասադուլը, շատ սխալ»: Մայիսի 11-ի երեկոյան հարցազրույց եղավ գրող Վարդգես Պետրոսյանի հետ, որը վրդովված ասաց. «Եթե մենք Ղարաբաղին համապատասխան օգնություն ցույց չտանք, ապա սերունդները մեզ չեն ների»:

12.05.1989թ.: Գործադուլը շարունակվում է: Առավոտվանից դպրոցում եմ: Որոշել եմ մասնակիորեն 9-10-րդ դասարաններում վերսկսել պարապմունքները: Դպրոցից մի խումբ ուսուցիչների հետ եկա հրապարակ: Կուսակցության քաղկոմի դիմաց էին հավաքվել շատ մարդիկ: Ասում են՝ Բաքվից թղթակից է եկել ինտերվյու վերցնելու: Ենթդրում էինք, որ «Կոմունիստ»-ի խմբագիր է.Գրիգորյանն է, բայց պարզվեց, որ ինչ-որ Պողոսով է, որին չեմ ճանաչում: Ավտոբուսը լիքը շուշիքեցիներ են եկել բողոքի: Պարզվել է, որ Մալիբալուի կողքի ղուշխլարցիները, զինված հրացաններով, լկտիաբար անասունները բերել և արածեցնում են Շոշ գյուղին պատկանող արտերում: Հատուկ կոմիտեի անդամ Պլեկը խոստացավ բանակցել Շուշիի կուսշրջկոմի քարտուղարի հետ, որ արգելի: Տուն գալով՝ ծանոթացա օրվա փոստին: Ընտանիքս մինչև 30 առում թերե և ամազիր է ստանում, որոնց թվում «Պրավդա»-ն: Մայիսի 10-ի համարում ծավալում հոդված կա ԼՂԻՄ-ի մասին: Ընթերցում եմ. «Բայց... ուրախացա, որ ՏՄԿ-ի այդ հաղորդագրությունը՝ «Պրավդա»-ի 1989թ. մայիսի 10-ի համարից կար «Երեկոյան Երևան» թերթի մայիսի 11-ի համարում՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ» հոդվածը, որը չնայած նախկինի պես հավասարեցման միտում ուներ, բայց և այնպես, ամբողջ երկրին իրագրել է դարձնում մեզ մոտ կատարվող իրադարձությունների մասին: Այսպես... Մայիսի 5-ին Ստեփանակերտի արվարձան Կրկնամ ավանի մոտ երեք հայեր ծեծկռտուքի մեջ են մտել աղբբեշյանցիների հետ, որին այնուհետև մասնակցել է մոտ 200 մարդ: Կռիվը կանգնեցնելու համար նախազուգական կրակոցներ են արձակվել օդ... Դրա ընթացքում վնասվածքներ են ստացել 3 քաղաքացիական անձ և չորս զինծառայող, վնասվել են երեք ավտոմեքենա և մեկ մոտոցիկլ... Մայիսի 6-ին անցնող «Ժողովի»-ից նետված քարե-

ՔՈ ՃԱՍՆԱԿԸ

ԱՐՅԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ` ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԴԱՐԲԵՈՅ



ու ստեղծագործական մտադրումները:

- Արցախի պետական համալսարանում արդեն մի քանի տարի է՝ հրատարակվում է ուսանողական «Քո ժամանակը» թերթը, որը սիրելի ու հարազատ է հատկապես թերթին թղթակցող ուսանողների համար: Համալսարանի www.asu.am պաշտոնական կայքի «Ուսանողական էջ» բաժինը նույնպես յուրահատուկ առջանց հարթակ է ստեղծագործող ուսանողների ինքնադրսևորման համար: Հաճախականության առումով կայքի վերոնշյալ էջն առավել ակտիվ է, քանի որ թարմացվում է գրեթե ամենօրյա պարբերականությամբ, մինչդեռ թերթը տպագրվում է ամիսը մեկ: Այդտեղ իրենց առաջին քայլերն են անում մեր ապագա լրագրողները (և ոչ միայն)՝ դրանով իսկ ինքնաբերականորեն ինքնադրսևորվելով, ինչու չէ, նաև արհեստավարժություն, ճանաչում ձեռք բերելով: Ունենք շատ շնորհալի, ակտիվ ուսանողներ, որոնք թղթակցում են պարբերաբար: Կարող են գոհունակությամբ փաստել, որ հրատարակումների առջանց տարբերակն արժանանում է համարության լայն շերտի հավանությանն ու համակրանքին: Ամեն

տարի ուսանողների միջազգային օրվա առթիվ խրախուսվում են տարվա ընթացքում ակտիվություն ցուցաբերած թղթակիցները, և «Թերթի լավագույն թղթակից» անվանակարգում հաղթող ճանաչվածները ռեկտորի կողմից արժանանում են պատվոգրերի ու նվերների: Այստեղ իրենց ստեղծագործական առաջին քայլերն են արել այսօր արդեն մեր հանրապետությունում լրագրողական և այլ պատասխանատու գործունեություն ծավալող մասնագետներ: - **Հետաքրքիր կլինի անմիջապես խմբագրից լսել, թե ինչպիսի նյութերի է նախապատվություն տալիս, կա՞ն, արդյոք, որոշակի սահմանափակումներ ժանրային առումով:** - Թեմատիկ է ժանրային առումներով սահմանափակումներ չկան: Թե՛ թերթում և թե՛ կայքի «Ուսանողական էջ» բաժնում տեղ են գտնում ԱրՊՀ ուսանողների բազմաբովանդակ, բազմաժանր նյութերը: - **Ո՞ր դեպքերում ուսանողները կարող են դիմել Չեզ և թերթում հրատարակված նյութի բերկրանք զգալու հնարավորություն ունենալ:** - Ցանկացած օր, ցանկացած ժամի մեր ուսանողները կարող են դիմել ինձ: Ես միշտ պատասխատ

կանգնել այն ուսանողի կողքին, որն աշխատասեր է, նպատակալաց, մասնագիտական ցանկացած խորհրդատվությամբ պատրաստ են օգնել: Առջանց հարթակում նաև աշխատանքային ժամերից դուրս շփվում ենք ստեղծագործող ուսանողների հետ: Իրենց նյութերն են ուղարկում, հարկ եղած դեպքում անհրաժեշտ խորհուրդներ ու հանձնարարություններ են տալիս, ստացվում է արդյունավետ համագործակցություն: Իսկ թերթի մասին արդեն ուսանողները թող պատմեն, ես նրանց հետ միասին զգում եմ հաջողված աշխատանքի բերկրանքը, նրանց հետ ուրախանում և նույնիսկ՝ նրանցից շատ: - **Իսկ ի՞նչ վերաբերումը և գնահատական եք ակնկալում «Քո ժամանակը» էլեկտրոնային էջից:** - «Քո ժամանակը» մեր ուսանողների ստեղծագործական ներուժի յուրահատուկ հայելին է, արտապատկերը: Ակնկալիքներս արդարացված են և շարունակում են արդարանալ: Մի քանի տարի առաջ այդ հարթակի ակտիվ թղթակիցներն այսօր արդեն մասնագիտությամբ աշխատող լրագրողներ են: Ասել է թե՛ նրանք ճիշտ ճանապարհ են ընտրել: Եվ եթե ինչ-որ առումով

«Քո ժամանակը» և կայքի ուսանողական էջը նպաստել են նրանց լրագրող դառնալու ճանապարհին, հարթակ են հանդիսացել իրենց ծայրը բարձրածայնելու, հանրությանը ներկայացնելու համար, ուրեմն՝ գնահատականների մասին խոսելիս, անշուշտ, դրական բնորոշումներ պետք է կիրառենք: - **Ի՞նչ ծրագրեր և գաղափարներ ունեք, որոնք առաջիկայում պատրաստվում եք կյանքի կոչել «Քո ժամանակը» թերթի և էլեկտրոնային էջի կատարելագործման նպատակով:** - Ծրագրեր ու գաղափարներ շատ կան, բայց նպատակն արդարացնում է միջոցները: Սիրում եմ ծրագրերի ու գաղափարների մասին խոսել դրանք կյանքի կոչելուց հետո: Անկախ ամեն ինչից՝ ես վստահ եմ մի բանում: Արցախի պետական համալսարանը հանրապետությունում լավագույն մասնագետների դարբնոց է, և, բնականաբար, լավագույն ուսանողներով համարված բուհի ուսանողական թերթն ու էլեկտրոնային էջն էլ լավագույնը կլինեն:

Հարցազրույց՝ Նանե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ Լրագրություն, 2-րդ կուրս

1989-Ի ՄԱՅԻՍԸ

րով փշրվել են Երևան-Մարտունի միջադաշնի «Իկարուս»-ի ապակիները: Այդ մարդատար ավտոմեքենայի ադրբեջանցի վարորդի և երկու ուղևորների դեմ խուլիգանություն քրեական գործ է հարուցվել: Ստեփանակերտ քաղաքում և հատուկ շրջանի շրջակայքում երկարացված է պարետային ժամը, ուժեղացված են ճանապարհների հսկողությունը, զինվորական ստորաբաժանումների միջոցով հայկական և ադրբեջանական բնակավայրերի կցասահմանների հսկողությունը... Իրադրությունը ընդհանուր առմամբ վերահսկվում է, թեև դեռևս լարված է ու բարդ»:

13.05.1989թ.: Գործադուրը շարունակվում է: 8-10-րդ դասարաններում պարապմունքներ անցկացրին: Կրկնամյակները եկել են բողոքի: Բոլորը կուսակցական շենքի առջև են: Մի ադրբեջանցի կուրսանտի համազգեստով փորձել է նկարահանել, ցանկացել ենք բռնել, փախավ-կորավ:

15.05.1989թ.: Ա.Վուլսկին ընդունեց կամեջ խորհրդի անդամներին, սպասում ենք արդյունքի: Դպրոցներում միայն ավարտական դասարաններում ենք վերսկսել պարապմունքները: Կրկնամյակ տներ կառուցելու համար հողամասեր պիտի բաժանեին, սակայն ադրբեջանցիները քարով, մահակով եկան ու արգելեցին: Գործադուրը շարունակվում է: Քաղաքում լարված դրություն է: Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները, պետական հիմնարկները չեն աշխատում: Նույնը և բոլոր շրջաններում: Շուշիի մասին լուր չունեն: «Խորհրդային Ղարաբաղ» թերթից իմացա, որ դասադուրը լիովին ընդգրկել է Ասկերանի ու Խանաբաղի միջնակարգ, մասնակի՝ Խանաձախի ութամյա, Բալուջայի և Նախիջևանի միջնակարգ դպրոցները: Ուրախ եմ, որ Մարտունիում և Հադրուբում գյուղերի հետ միասին դպրոցներում հնչում է դպրոցական զանգը: Բաց են մտուր-մանկապարտեզների դռները: Նորմալ ընթացքի մեջ են դաշտերում և ֆերմաներում կատարվող աշխատանքները: Լավ է, որ Մարտակերտի շրջանում էլ գործում են մանկական հիմնարկներն ու հանրակրթական դպրոցները («ԼՂԻՄ, 15 մայիս») կտրվածքը կցված է օրագրիս):

16.05.1989թ.: Հեռուստացույցով հանդես եկան մի խումբ գիտությունների թեկ-

նածուներ՝ Ռոմա Բալայան, Սոկրատ Խանյան, Ավագիմյան և ուրիշներ, որոնք առաջարկեցին վերականգնել կուսմարզկոմն ու մարզխորհուրդն իրենց բաժիններով: 8-10-րդ դասարաններում պարապմունքները որոշ չափով նորմալ վիճակի են հասցվել: Որոշեցինք որ վաղը՝ մայիսի 17-ին, պարապմունքները սկսենք 1-ինից բարձր բուրդ դասարաններում:

17.05.1989թ.: - Դպրոցում են: Մեծ ուրախությամբ ընդունում ենք դպրոցականներին: Մտնելով դասարանները, տեսնելով սաներիս ընկճվածությունը՝ ամեն ինչի դիմում եմ նրանց տրամադրությունը բարձրացնելու, ինքս էլ մոռանում քաղաքի լարված վիճակը: Չգիտեմ ինչու, հավաստ քանի գնում, նվազում է մեր հարցի լուծման վերաբերյալ: Մ.Ս. Գորբաչովը չպատասխանեց մեր «14»-ի նամակին: Լրաբերը հայտնեց, որ կուսակցության ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ս.Հարությունյանը հեռախոսա-գրույց է ունեցել ընկ. Ն.Ռիժկովի հետ: Ընկ. Ռիժկովն ասել է, որ ինքն անձամբ խոսել է Գորբաչովի հետ, որը խոստացել է Հիմաստանից վերադառնալուց անպայման հանդիպել նամակի հեղինակների հետ:

Արդեն թուրքերն էլ են բաց նամակ գրել, որով «մեղադրել» են մեր «Բաց նամակի» հեղինակներին: Չեն զարմանում, թուրքը միայն թուրքերի պես ուրիշներին է կրկնում, իսկ ինքն ինչ-որ նախաձեռնության շնորհք չունի: Գորբաչովը Հիմաստանից գալով՝ դարձյալ մեր պատվիրակությանը չընդունեց:

25.05.1989թ.: Մոսկվայում իր աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարը: Սակայն այդպես էլ մերոնց չընդունեց: Այս համագումարը մեր պատմության ընթացքում նախադեպը չունի, և մենք հույսեր կապելով նրա հետ, ամենայն ուշադրությամբ ամեն օր հետևում ենք նրա ընթացքին և վրդովվում, վրդովվում: Մեր ժողովուրդը դարձյալ լարված է, դժգոհ է համագումարի ընթացքից:

30.05.1989թ.: Կուսակցության քաղլուստանը կայացավ հանդիպում ԽՍՀՄ կենտրոնի պատասխանատու աշխատող Բ.Ա. Նեֆյուդովի հետ: Ներկա էին քաղաքի աշխատանքային բոլոր կոլեկտիվներից լիա-

զորվածներ: Նեֆյուդովի հետ էին ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի անդամներ Ս.Բաբայանը, Ս.Կուպրեևը և կուսբաղկոմի առաջին քարտուղար ընկ. Վ.Աթաջանյանը: Կենտկոմի պատասխանատու աշխատողը հիմնականում պատմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների և Միության խորհուրդների կազմում դեպուտատների ընտրությունների կանոնակարգի և ընթացքի մասին, որը մեզ համար նորություն էր, քանի որ առաջին անգամ են այդպես կազմավորվում երկու պալատները: Հանդիպման մասնակիցներս որոշեցինք հեռագրեր ուղարկել համագումարին և մեր դեպուտատներին ու այն դեպուտատներին, որոնք մեր դեպուտատների հետ միասին մեր մարզի բնակչության շահերն են արտահայտում:

Քաղլուստանից դուրս գալուց տեսա, որ հրապարակը լցված է մարդկանցով: Երեկոյան պարետային ժամը սկսվելուց առաջ Հատուկ կառավարման կոմիտեի և պարետատան թույլտվությամբ տեղի ունեցավ բազմահազարանոց միտինգ: Մեկը մյուսի հետևից ելույթ ունեցան Համալսարանի Գրիգորյանը, Յուրի Ներսիսյանը, բոլորիս ծանոթ Արաբյանը (որի երկու երեխաների ուսուցիչն եմ, ինչքան կուզեմ հանդիպել իմ այդ խելոց սաներին՝ Կամոյին և Ինային), Ավետիք Գրիգորյանը (Հիմարար) և ուրիշներ: Նրանք բնակչության անունից իրենց բողոքն արտահայտեցին՝ նշելով, որ համագումարում խախտում են մեր հայ դեպուտատների սահմանադրական իրավունքները, պահանջեցին քաղաքական լուծում տալ արցախահայության հիմնախնդրին: Իմանալով, որ մարզի դեպուտատական խումբը ԽՍՀՄ ԳԽ-ի Ազգությունների խորհրդում ընտրվելու համար (քվեարկություն) առաջադրել է երեք թեկնածուների, անհամաձայնություն հայտնեցին իրենց ընտրյալների դիրքորոշմանը: Յուր.Ներսիսյանը առաջարկեց պարտադիր կարգով անհատապես հեռագրել մեր դեպուտատներին՝ պահանջելով ակտիվություն ցուցաբերել արցախահայության շահերի պաշտպանության գործում: Միտինգին ներկա էին նաև Հատուկ կառավարման կոմիտեի անդամներ Ս.Բաբայանը, Կուպրեևը, Միշինը, Պլիսովը և Ա.Սիդորովը: Այս բազմահազարանոց միտինգում

ելույթ ունեցավ նաև Բ.Նեֆյուդովը, որը համարյա նույնը կրկնեց, ինչ ասել էր քաղլուստանը: Այս միտինգը կրկին անգամ ցուցադրեց ստեփանակերտցիների և ընդհանրապես արցախահայերի անկողնում կանգնել՝ շարունակելու պայքարը հանուն մայր Հայաստանի հետ մարզի վերամիավորման: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի «Ստեփանակերտ. 30 մայիսի» հաղորդագրությունում ընթերցում են կուսակցության քաղկոմի երկրորդ քարտուղար՝ արժանափառ շարունակ Հրանտ Մելքունյանի կարծիքը. «...Արցախահայությունը վրդովված է, իրեն զգում է վիրավորված: Ավելին, ի՞նչ իրավունքով է դեպուտատ Ջաֆարովը, հանդես գալով համագումարի ամբիոնից, խեղաթյուրել փաստերը: Ներկաների համակրանքը նվաճելու համար՝ Չգիտեմ, համեմայն դեպս, նրա ելույթը չի նպաստել մարզում իրավիճակի կարգավորմանը: Ադրբեջանի դեպուտատները խոսում են ինտերնացիոնալիզմի մասին՝ մոռանալով, սակայն, որ խոսքը գործով է գեղեցիկ: Ապացույց՝ հանրապետությունից Ազգությունների խորհրդում ընտրվելու համար միակ հայ դեպուտատի՝ Բորիս Դադանյանի թեկնածությունը չառաջադրումը: Ստացվում է, որ հայկական մարզից կարելի է առաջադրել ադրբեջանցի դեպուտատ, իսկ Ադրբեջանից հայ դեպուտատ՝ ոչ մի դեպքում: Այս փաստը այլ կերպ չեն կարող որակել, քան խտրականություն մեր ներկայացուցչի, ավելի ճիշտ, մեր ժողովրդի նկատմամբ... Արցախահայությունը իր ընտրյալներից պահանջում է առաջիկայում լինել ակտիվ, հիշել, որ ժողովուրդը սպասում է իր վճռական խոսքին: Ուզում ենք հավատալ, որ նրանք արցախահայության քաղաքական պարբերիկ լուծման համար կպայքարեն այնպես, ինչպես ժողովուրդը»:

31.05.1989թ.: ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարը շարունակում է աշխատանքը: Շարունակում ենք սպասումներով հետևել...

Մառլեն ՇԱՆՆԱԶԱՐՅԱՆ

ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՄԵԾԱՐՈՒՄ

ՔԱՆԻ ԴԵՌ ՀԻՇՈՒՄ ԵՆ, ԱՊՐՈՒՄ ԵՆ

Ձինդեկ Վարուժան Աղաջանյանի անունը միշտ հնչել է «Ասպետ» ռազմամարզական ճամբարի, Արցախի ՆՁՊ օլիմպիական թիմի հաղթանակների և այլ առիթներով: Այսուհետ ավելի հաճախակի կհնչի, քանզի նրա հարազատ՝ Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ.10 հիմնական դպրոցի ակունքը անվանակոչվեց նրա անունով:

Մայիսի 20-ին դպրոցում այդ կապակցությամբ կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ: Այստեղ էին Վարուժան Աղաջանյանի զինակից ու աշխատանքային ընկերները, հարազատները, սաները, կրթօջախի շեֆ-գործակալները և այլ ուղևորներ:

Ակունքի բացման արարողության պատիվը տրվեց նրա որդուն՝ Երևանի ռազմական ուսումնական հաստատության ուսանող Ալբերտ Աղաջանյանին:

Միջոցառումը վարող՝ ՊԲ զինծառայող Գագիկ Յարուբյունյանն իր խոսքում նշեց, որ ազգային-ազատագրական պայքարը հայ ժողովրդին բերեց մի այնպիսի բախտորոշ իրավիճակի, ինչպիսին դաժան պատերազմն է, որը սկսվելուց առաջ հազարավոր հայրերի և մայրերի առանց երկմտելու կամավորագրվեցին հայրենի հողի պաշտպանությանն ու ազատագրմանը: Այդ բարձր ու վեհ գործի համար զինվորագրվել էին բոլորը՝ ուսուցիչ, բժիշկ, գյուղացի, բանվոր... Շատերի պես Վարուժանն էլ զինվորագրվեց հայրենիքի փրկության գործին:

Նրանց բոլորի բարձր հայրենասիրության շնորհիվ կռեցինք հաղթանակը: Մեկ ռուպե լուծարման ներկայացրեցին Արցախյան զոյամարտում նահատակվածների սուրբ հիշատակը: Արցախյան ազատամարտի նվիրյալ, «Մարտական ծառայություն» մեդալակիր Վ. Աղաջանյանին նվիրված հուշ-ցերեկույթի բացման արարողությունն ուղեկցվեց ԱՅ օրհներգով:

Վարուժան Արեվի Աղաջանյանը ծնվել է 1972թ. փետրվարի 18-ին Ստեփանակերտում՝ բանվորի ընտանիքում: 1979թ. ընդունվել է քաղաքի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին դասարան: 1988թ. ավարտել է Ավ. Իսահակյանի անվան հ.10. միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Երևանի մարշալ Բաբաջանյանի անվան ռազմամարզական վարժարանը, որն ավարտել է 1992թ.: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ՆՁՊ և ֆիզկուլտուրա բաժինը: 1992-ից մինչև 1995-ի հունվարը ծառայել է ՊԲ-ում: Մասնակցել է մարտական գործողությունների: Պատերազմի 2-րդ կարգի հաշմանդամ է: Ունի պետական և գերատեսչական մեդալներ: Պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Մայրություն» 34 «Մայրական երախտագիտություն», 33 ՊՆ «Դրաստամատ Կանայան», «Վազգեն Սարգսյան», 33 ՁՈՒ 20-ամյակի հոբելյանական մեդալներով:

1995 թվականից աշխատանքի է անցել հ.10 դպրոցում՝ սկզբում որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, իսկ 2003-ից՝ զինղեկ: Արժանացել է բազում խրախուսանքների ու պատվոգրերի 33 և Ա3 պաշտպանության նախարարությունների, կրթական գերատեսչությունների կողմից: 2006թ. ճանաչվել է «Տարվա լավագույն զինղեկ»: ՆՁՊ առարկայական օլիմպիադայում թիմի մի շարք անգամներ հաղթող ճանաչվելու կապակցությամբ ԼՂՀ ՊՆ և ԿԳՍ կողմից պարգևատրվել է պատվոգրով և արժեքավոր նվերով: 2015թ. օգոստոս ամսում ԿԳՍ կողմից ստացել է առաջին կարգի տարակարգ:

Աշակերտներն իրենց ասունքով այն գաղափարը հնչեցրին, որ Վարուժանի մեծ քաջերը ելնելով՝ եկան կանգնեցնելու կործանարար հետընթացը, հնչեցնելու ռազմերթի շեփոքը: Ելույթ ունեցողներն արժևորեցին Վարուժան քաղաքացու, հայրենասերի, ուսուցչի անցած ուղին:

Դպրոցի տնօրինության նախածեռնությունը՝ դահլիճը կոչել է Վարուժան Աղաջանյանի անունով, խոսում է նրա իմաստալից կյանքի ու գործունեության մասին, նշեց նրա մարտընկեր, զինղեկ Արմեն Սողոմոնյանը: «Հիշեցե՛ք՝ ինչքան հիշեմք մարդուն,



նա ապրում է»:

3.10 դպրոցի նախկին տնօրեն Սերգեյ Շահրամանյանը վերհիշեց իր կրտսեր գորընկերոջ հետ համատեղ աշխատանքային գործունեությունը: Երբ 1999թ. ինքն ընտրվեց դպրոցի տնօրեն, Վարուժանը ֆիզկուլտուրայի ուսուցիչ էր: Նրա խնդրանքով նշանակեց ռազմագիտության ուսուցիչ և քաղաքաշտպանության շտաբի պետ: Պարտաճանաչ էր, ընկերասեր, իր գործի հմուտ վարպետ: Եռանդով մասնակցում էր բոլոր միջոցառումներին: «Եվ վայ թե որևէ միջոցառումից առանց մրցանակային տեղ գրավելու ներկայանար դպրոց: Վարուժանը դա շատ ծանր էր տանում: Մենք հանգստացնում էինք նրան, որ այդպես էլ կլինի: Եվ չէր հանգստանում, մինչև հաջորդ միջոցառումից մրցանակ չէր բերում: Օրինակելի էր նաև իր ընտանիքում: Կինը հիվանդության պատճառով շատ էր բացակայում քաղաքից, և միակ ուրու հոգսը մնում էր իր վրա: Եվ շատ ուրախ եմ՝ տեսնելով, որ Ալբերտ Աղաջանյանը մեծացել ու ծնողների արժանի զավակն է դարձել: Հայաստանի օլիմպիադաներում միշտ զբաղեցնում էր առաջին տեղը, ու դա նրան շատ էր ուրախացնում: Եվ կյանքի թելն էլ կտրվեց այդ օլիմպիադայի կապակցությամբ. եթե ժամանակին ներկայանար և ստանար հերթական բուժումը, երկի նրա կյանքն այդպես շուտ չկտրվեր»:

Նախկին տնօրենը շնորհավորեց բոլորին՝ դպրոցի դահլիճը Վարուժան Աղաջանյանի անունով կոչելու կապակցությամբ: Նշանակում է՝ նրա հիշատակը հավերժ կմնա այստեղ աշխատողների և սովորողների սրտերում:

Բենահարթակը տրամադրվում է Վարուժանի հարազատ դպրոցի սաներին, որոնք վաղն ավագ սերնդին փոխարինելու են բոլոր ասպարեզներում: Վարուժանը Կենտրոնական պաշտպանական շրջանի շարքերում է հաղթականորեն կերտել իր մարտական ուղին: Նա այն հերոսներից է, ովքեր

հայրենիքի փրկության համար արեցին կարելին և անկարելին: Նա այն անհատականություններից էր, որի ինքնամոլորումը չափ ու սահման չուներ: Գաղափարը և գործը զուգահեռ ընթացք ունեին, որոնք իրենց հաստատումն էին գտնում նրա յուրաքանչյուր արարքում, ամեն քայլափոխի:

33 ՊՆ-ին առընթեր «Հայոց արծիվներ» հայրենասիրական միության նախագահի տեղակալ, Արցախի կառույցի նախագահ Ռոման Բալայանը Վարուժանի որդուն հանձնեց շնորհակալագիր 33 ֆիդայիների միության կողմից:

Ցանկացած հուշ-միջոցառում ներառում է նաև երգման մաս: 10-րդ դպրոցն իր այս միջոցառումով ներկայացրեց հավաստիացրեց, որ այստեղ սովորողներն ու դասավանդողները շարունակում են Վարուժանի գործը: Կրթօջախի զինղեկ Աշոտ Վերդիյանը խոստովանեց, որ որպես զինղեկ՝ լավ ժառանգություն է ստացել Վ.Աղաջանյանից: Եվ ամենալավ ժառանգությունն այն է, որ ավագ դպրոցից աշակերտներն այցելում են պարբերաբար՝ ասելով, որ ուզում են լինել ՆՁՊ-ի իրենց կաթինետուն, հիշել իրենց ուսուցիչ Վ.Աղաջանյանին: «Ժառանգությունը, որ ստացել ենք նրանից, շարունակելու ենք պահպանել ու զարգացնել: Հիշում ենք և մեծարում»,- վստահեցրեց կրթօջախի զինղեկ Աշոտ Վերդիյանը:

Ստեփանակերտի քաղաքապետի ԿՍՍ գծով օգնական Կառլեն Մարգարյանն ասաց, որ միջոցառման ընթացքում երկու տարբեր զգացումով էին պարուրված. կորստյան ցավի, ափսոսանքի, որ ժամանակակից մասին արդեն հիշատակ դարձածի մասին են խոսում: Մեկի, որն իր կյանքը նվիրաբերել է հայրենիքին, մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, կրթության համակարգում ունեցել իր յուրահատուկ տեղն ու հարգանքը: Միևնույն ժամանակ ապրում ենք մի ներքին հպարտություն. մենք արժանավորներին հարգելի գիտենք ըստ պատշաճի: Դպրոցի դահլիճն անվանակոչվել է իր նախկին սանի և ուսուցչի անունով: Դա մեծ հարգանք ու գնահատական է մարդու հիշատակի նկատմամբ: Այդ կապակցությամբ պատշաճում են նաև շնորհավորանքները Վարուժանի հարազատներին, միմյանց, քանզի սերունդների շուրթերին է միշտ լինելու նրա անունը:

Դպրոցի տնօրեն Անահիտ Հակոբյանի (որի մանկության ընկերն ու գործընկերն էր Վարուժան Աղաջանյանը)՝ նրա հիշատակին նվիրված խոսքը սեփական ստեղծագործության ներկայացմամբ էր՝ հայրենասիրական բանաստեղծությամբ: Այդ ամենից հերոսի որդին՝ ապագա սպա Ալբերտ Աղաջանյանն անասելի զգացում էր ապրում. «Յուրաքանչյուր ուսուցչի առավելությունն է ոչ միայն ուսուցանել սաներին, այլև օրինակ հանդիսանալ նրանց համար: Հայրս հենց այդպիսին էր: Չնայած հոգուս մեծ ցավին՝ բերկրանք եմ ապրում ու հպարտություն զգում ամեն անգամ հորս մասին խոսելիս և լսելիս»:

Հիշողությունը ապրեցնում է մարդուն: Ի վերուստ տրված այս հատկանիշը ոչ բոլոր մահկանացուներին է վիճակված: Հազար երանի նրանց, ովքեր արժանանում են հավերժական հիշողության:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԵՐԹՈՒՄ



Աշխարհի մասին ինչպե՞ս մոռանամ, Աշխարհի ցավից ինչպե՞ս հեռանամ...

Պ. ԱՍԱԿ

Քեզ շատ էր պատշաճում բանաստեղծի այս տողերը, Քեզ՝ լավագույն մանկավարժի, արժանավոր քաղաքացու բոլոր բարձր կոչումների հետ մեկտեղ «Ժողովրդական մարդ» բարձրագույն տիտղոսին արժանացած Ալբերտ Խաչատրյանի: Ոչ աշխարհի ցավից ես հեռացել, ոչ էլ աշխարհն է Քեզ մոռացել: Յուրաքանչյուր իսկական մարդ աշխարհը չափում է իր հայրենիքի դիտանկյունից: Ի՞նչ արժեք ունի մարդու մեծությունը, եթե նրան հայրենիքում չեն գնահատում, չեն հիշում: Այդ և շատ առումներով Դու երջանիկ ես, Դու էլ, Քո հեղինակած գրքի հերոսների պես Մեծ շուշեցի դարձած Ալբերտ Խաչատրյան: Կյանքից անսպասելի Քո հեռանալու կապակցությամբ ասված խոսքը, թե Դու հեռացել ես ոչ թե Քո ընտանիքից, այլ ողջ Շուշիից, հիմա էլ կարող ենք ասել հակառակ ձևով, որը դարձյալ նույն նշանակությունը կունենա: Դու կա բոլոր շուշեցիների մեջ, նրանց ամեն մի գործում:

Գնացիր՝ թողնելով բազում արժանավոր գործեր, և արդարացիորեն Քո անունը դրվեց Քո հոր՝ մեծ մանկավարժ Արսեն Խաչատրյանի անունի կողքին: Եվ այսօր կրկնապատկված ուժով բարի հոգին է թևածում Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար թղիջում:

Ուսումնական հաստատության գրադարանը անվանակոչվեց մեծ երախտավորի անունով: Հիշարժան իրադարձության կապակցությամբ թղիջի՝ Քո գործը շարունակող մանկավարժական կոլեկտիվը տնօրենի զխավորությամբ հուշ-ցերեկույթ է կազմակերպել: Ոչ թե հիշեցին, այլ վերստին կրկնեցին ճշմարիտ մտավորականի անցած ճանապարհը: Քո առաքելությունը շարունակող Ձիվան Հայրապետյանը հակիրճ բնութագրում է Քո էությունը. «Նա մեկն է այն մեծ մանկավարժներից և ճշմարիտ հայրենասերներից, որի ողջ գործունեությունը բնութագրվում է մեկ արտահայտությամբ. իմաստ և նպատակաուղղվածություն՝ առանց փառքի ու ճանաչման հասնելու դույզնին ձգտումի: Իսկ դա հարգանք և փառք վաստակելու ամենաուղիղ ճանապարհն է»:

57 տարվա աշխատանքային գործունեությունից 50-ն աշխատել ես որպես մանկավարժ, որից 48-ը՝ մանկավարժական ուսումնարանում (այժմ՝ հումանիտար թղիջ), 17-ը՝ որպես նրա տնօրեն: Քո ամբողջ գործունեությունը նվիրված է եղել երիտասարդ սերնդի կրթությանը, նրա հայեցի դաստիարակությանը, միջին օղակի որակյալ մասնագետներ պատրաստելուն:

Քո հեղինակած մեթոդականավարժական հոդվածներն ու գրքերը՝ «Հավերժի ճամփորդը», «Շուշիի մանկավարժական ուսումնարան», մահվանից առաջ հրատարակած «Ամվանի շուշեցիները» գիրքն արդեն իսկ Քո անմահության կրթողն են կերտել: «Երախտագիտություն», «Վաչագան Բարեպաշտ», «ԼՂՀ արհմիություններ» մեդալները, «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ», «Շուշիի պատվավոր քաղաքացի» կոչումները Քո անմնացող ու նվիրյալ, ազգաշահ գործունեության փաստաթղթային արտացոլումն են: Իսկ իրական պարզև ժողովրդի սերն է առ Քեզ ու հիշողությունը: Խոր իմաստով, հարուստ կենսափորձով, վստահ քայլերով, անսասան ոգով, լույսով, հավատով, մաքառումով Քո կյանքի էջերը դեռ շատ սերունդների կպատմեն, որ Դու հավերժ շուշեցի ես՝ ընդմիշտ միաձուլված նրա հեքին:

Լավ մարդ լինելը սուրբ առաքելություն է: Ոչ միայն լավ մարդ, այլև մեծագույն մարդ, ու որպես այդպիսին էլ մնացել ու կմնա բոլոր շրջանավարտների, ծանոթ-բարեկամների հիշողության մեջ:

Քոլեջի գրադարանն անվանակոչվել է նվիրյալի անունով: Ասել է թե՛ մշտնջենապես ներկա ես հարազատ կրթօջախում և Քո իմաստուն խորհուրդներով, պատգամներով ուղեկցելու ես սերունդների հավերժական երթը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԴԻՄԱՆԿԱՐ

ՈՒՍԱՆՆԵԼԻ ՈՒՂԻ



Արցախ աշխարհին պարտադրված ազգային-ազատագրական պատերազմի հենց առաջին օրերից տողերիս հեղինակը սրտի թելադրանքով ներգրավվել էր «Երկրապահ» համարվող ջոկատում... Եվ այսօր իմ հերթական ստեղծագործության նյութ ընտրած՝ ճարտար քաղաքի Ազատամարտիկների անվան հ.1 միջնակարգ (հոսքային) դպրոցի տնօրեն Լեոնարդ Տոնյանի հետ նախ որպես շարքային երկրապահ, հետո՝ մտոտիրաձգային գումարտակի զինվոր, այնուհետև՝ սպա, ծառայել ենք նույն զորամասի (2-րդ պաշտպանական շրջան) տարբեր ստորաբաժանումներում, սպայական տարբեր պաշտոններում: Գակատագրի բերումով համատեղ քայլել ենք մարտական նույն ուղիով, թրծվել ռազմադաշտի ասեղ ու ճակատագրական բովում: Անհամեստություն թող չհամարվի, պատերազմի ավարտից հետո երկուսս էլ ԼՂՀ Նախագահի կողմից պարգևատրվել ենք «Մարտական ծառայություն» մեդալով:

Այնպես որ, Լեոնարդ Տոնյանին վաղուց և լավ գիտեմ: Նույնիսկ դպրոցական տարիներից, քանի որ երկուսս էլ ճարտարի նույն միջնակարգ դպրոցի շրջանավարտներ ենք, միայն մի տարբերությամբ. տողերիս հեղինակը համեմատաբար ավագ սերնդի ներկայացուցիչ է, իսկ Լ.Տոնյանը՝ կրտսեր տարիքի:

Այժմ համառոտ ներկայացնեն կյանքի ու աշխատանքի երկար և ուսանելի ուղի անցած, արդար տքնանք-պայքարով վաստակաշատ դարձած, ոչ միայն իր հոգեհարազատ, երկրորդ տուն դարձած դպրոցում, այլև ամբողջ ճարտարում, նույնիսկ շրջանում ու հանրապետությունում վստահություն, հեղինակություն, սեր ու հարգանք վայելող մարտական ու աշխատանքային ընկերոջ՝ Լեոնարդ Տոնյանի արգասաբեր ու գեղեցիկ կենսագրության մի էջ:

...Ծնվել է 1960թ. ապրիլի 23-ին: 1967թ. հաճախել է ճարտարի միջնակարգ դպրոցը և ավարտել 1977թ.: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանություն բաժինը, որն ավարտել է 1982թ.: Նույն այդ ժամանակ աշխատանքի է ընդունվել Ղուզե ճարտարի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ: 1985-ին ժողկրթության Մարտունու շրջաժմի կողմից տեղափոխվել է ճարտարի միջնակարգ դպրոց և նշանակվել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 1986թ. սեպտեմբերից նույն դպրոցում նշանակվել է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 1988թ. մայիսին ընտրվել է դպրոցի տնօրեն: 1992-1994թթ. մասնակցել է Արցախյան պատերազմին, նախ որպես շարքային զինվոր, ապա որպես սպա՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ (գումարտակի հրամանատարի տեղակալ՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով): 1994-ին գործընկեր է ԼՂՀ պաշտպանության բանակից և կրկին շարունակել դպրոցի տնօրենի պարտականությունները: 2000-ին ազատվել է տնօրենի պաշտոնից և ծառայության անցել ՊԲ շարքերում, սկզբում որպես կադրերի գծով սպա, ապա՝ ՈԲԿՊ ծառայության պետ: 2010թ. հունիսին գործընկեր է ու վերսկսել մանկավարժական գործունեությունը սկզբում որպես փոխտնօրեն դարձյալ հարազատ կրթօջախում՝ Ազատամարտիկների անվան միջնակարգ դպրոցում: 2013թ. սեպտեմբերին վերընտրվել է նույն դպրոցի տնօրեն, որտեղ առայսօր աշխատում է նշյալ պաշտոնում: Աշխատանքային տարիներին ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով, շնորհակալագրերով՝ շրջանային, հանրապետական օլիմպիադաներում քիմիայից իր սաների ունեցած արդյունքների համար: Նրա աշակերտները միաժամանակ ներկայացել և մասնակցել են մինչև անգամ Հայաստանի Հանրապետությունում անց կացված օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Այս ամենի հետ մեկտեղ նա մի քանի տասնյակ աշխատողներ ունեցող, բազմանդամ կոլեկտիվի ղեկավար է, որտեղ մշտապես տիրում են բարոյահոգեբանական, մանկավարժական, մարդկային փոխադարձ սերն ու հարգանքն ու վստահությունը մեկմեկու հանդեպ: Կոլեկտիվ, որտեղ բացվող օրերի, անցնող տարիների հետ տեղի է ունենում սերնդափոխություն. ոմանք անցնում են վաստակած կենսաթոշակի, նոր ու թարմ ուժերը փոխարինում են արդեն փորձառու և բազմավաստակ հոգևոր սերմնացաններին: Մի խոսքով, էստաֆետն առաջ է տարվում մեծ պատասխանատվությամբ ու պատվարժամունքով:

Դպրոցում ամուր հիմքերի վրա է նաև ուսուցիչ-ծնող-ընտանիք կապը: Դրանում, ինչ խոսք, մեծ են փորձառու և հեռատես տնօրենի՝ Լեոնարդ Տոնյանի անմիջական դերն ու ներդրումը, աշխատանքային երկարամյա հարուստ փորձն ու մտավոր կարողությունները, սերն ու հակումները, անսահման եռանդն ու նվիրվածությունը՝ առ սրտամոտ ու հոգեհարազատ մանկավարժական արևաշող աշխարհ, գալիքի ուղևորներ երեխաների գարնանաշունչ միջավայր: Պատահական չեն աշակերտների, նրանց ծնողների սերն ու համակրանքը, հավատն ու վստահությունը դեպի հարազատ կրթօջախ ու տնօրեն, որ մշտապես պրպտունների մեջ է... Մանկավարժական խորհրդակցություններում, ծնողական ժողովներում հաճախակի քննարկվում են բազմաբնույթ հրատապ թեմաներով զեկուցումներ, սրտաբուխ ու տաք բանավեճեր, ելույթներ, որոնց նպատակը մեկն է՝ ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել դպրոցը լավագույն փորձի փոխանակման կենտրոն դարձնելուն: Կազմակերպվում են հանդիպումներ գիտության, արվեստի, գրականության ներկայացուցիչների, Ազատամարտի մասնակից-վետերանների, անվանի հայրենակիցների հետ և այլ բնույթի ընդօրինակման ցերեկույթներ, երեկույթներ, որոնք նպաստում են աշակերտների համակողմանի զարգացմանը: Այս ամենի նախաձեռնող, շունչ ու ոգի տվող հեղինակներից մեկը Լեոնարդ Տոնյանն է: Ուսուցիչների գերնպատակն ազատ Արցախ հայրենիքի վաղվա արժանավոր ու նվիրյալ տերերի, հայրենամեր սերնդի, ակտիվ կենսադիրք ունեցող քաղաքացիների ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ հունով առաջ մղելն է, որում, ինչ խոսք, մեծ ու գնահատելի են եռանդաշատ, անվերջ որոնումների ու պրպտումների եռքով ապրող բոլորամեր տնօրենի հեռատեսությունը, լավատեսությունը, անսպասելի եռանդն ու աշխատասիրությունը առ հոգեհարազատ դարձած

մանկավարժական աշխարհ: Եվ պատահական չեն այն հաջողությունները, որոնք մշտապես ուղեկցում են բազմանդամ ուսուցչական այդ թիմին: Պատահականություն չէ նաև, որ ամեն նորաբաց օրվա հետ նրանցից յուրաքանչյուրը շրջապատվում է սաների հոծ աստղաբույլով: Ուրք դնելով երկրորդ տուն համարվող դպրոցի շեմին՝ նախարահուն դիմավորում ու ողջունում են նրանց հարյուր քսաներեք նախկին սաների՝ զինվոր-ազատամարտիկի համազգեստով տարբեր սերունդների ազատատենչ ու հայրենամեր նահատակ քաջորդիների խոսուն դիմակարները, որոնք մարտադաշտում ընկան միևնույն նպատակի, սրբազան գործի համար՝ հանուն Արցախ աշխարհի ազատության և անկախության: Եվ այդ վաշտ-գումարտակ կազմած հայրենասեր զավակների շարքում է նաև ճարտար քաղաքի նույն միջնակարգ դպրոցի տնօրեն, նախկին ազատամարտիկ, սպա Լեոնարդ Տոնյանի կրտսեր եղբայրը՝ քաջագուն Լեոնիկ Տոնյանը: Բոլորի պահանջ-պատվիրանը մեկն է՝ ուղղված սպորտի և ուղեգր սերունդներին՝ անառիկ բերդ-ամրոցի պես պահել մեր փառավոր ու հերոսական Արցախի անկախ ու ազատ հանրապետությունը: Չեր խորիմաստ խորհուրդն ընդունված է յուրաքանչյուրիս կողմից՝ ներկա ու ապագա... Երդվում ենք:

Խաղաղ ու արևաշող կբացվեն և կծպտան հայոց Արցախի լուսաբացները, կհարատեն մեր հաղթարշավները որդոց որդի, սերնդեսերունդ՝ ի փառս մեր ծաղկուն հայրենիքի, ի հեծուկս մեր հին ու նոր սուրհեներ:

Ազատամարտիկների անունը պատվով կրող, Լեոնարդ Տոնյանի կողմից ղեկավարվող ճարտար քաղաքի հ.1 միջնակարգ դպրոցին, նրա ուսուցչական, աշակերտական ողջ կոլեկտիվին ի խորոց սրտի բարեմաղթերնք ամենայն բարիք, հոգևոր հունդերի առողջ ծխածախում, հասունացում, մշտապես կանաչ եւ արևաշող ճանապարհ-հեռասաններ, բյուր հաղթանակներ ու տոնահանդեսներ, առավել, բազմապատիկ առունով շենացուն ու բարգավաճում: Թող այն միշտ քայլի ու փայլի ուսումնամանկավարժական ոլորտում, բոլոր քննություններում՝ ներկա և ապագա:

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ք. Ճարտար

Շնորհավորանք

ԱՄԲՈՂԿՅԱՆԸ
ՀԱՐԱՉՍ
ԴՊՐՈՅՈՒՄ



Այսպես, դժվարություններով ու նաև գրկանքներով հարթվեց ու կերտվեց մանկավարժի, պատմության ուսուցչուհի Կարինե Դադայանի կեսդարյա կյանքի ճանապարհը: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը: Արցախյան գոյապայքարի սկզբնական հորձանուտում էլ ձևավորվել է նրա անձնական՝ ամուսնական կյանքի շատ կարճ շավիղը Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում: Քաջարի տղա էր ամուսնից, հայրենյաց նահատակ, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ, որը կյանքը միկրաբերեց ու հեռացավ՝ չտեսնելով իր կյանքի միակ շարունակություն դատերը:

Չեղարձի ճանապարհը Կարինե Դադայանին բերեց Ստեփանակերտ, աշխատանքի վայրը՝ հարազատ հ.2 դպրոց, որի շրջանավարտն էր ինքը: Եվ հարազատ դպրոցի պատերի ներսում արդեն քանի՞ տարի մանկավարժի իր օրագիրն է գրում և թերթում հարգելի գործընկերն ու սերունդների հայեցի դաստիարակության սերմնացանը:

Մասնագիտական գործունեությունից գատ նա կարողացել է ծավալել նաև հասարակական գործունեություն, ՀՕՄ-ի՝ հեղինակավոր և հարուստ տարեգրություն ունեցող կազմակերպության ակտիվ ու նվիրյալ հայ կանանց շարքերն է համարել, եղել կազմակերպության ատենապետուհի, հայրենի տան շունչն ու ոգին Սփյուռքի հայ կանանց ու մայրերի հետ կիսել, ապրել այդ շնչով ու ոգով:

Տիկին Դադայանը անկեղծ ու անշահախնդիր իր բնույթով և մարդկային խառնվածքով կարողացել է շահել գործընկերների, իրեն ճանաչողների, մերձավորների հարգանքն ու սերը: Օժտված է կամային այն որակներով, որ կարող է անտեսել հուսահատությունը, կյանքի մատուցած շրջադարձերն ու հարվածները, շրջապայքարում արեղսող դիպվածները, պատեհ-անպատեղ քամիների սառնությունը:

Եվ մի կյանքի պատմության՝ քո կյանքի տարիները գումարվելով լրացրին 50-ամյա հոբելյանդ, հայրենասեր հայ ուսուցիչ Կարինե Դադայան:

Շնորհավոր քո հոբելյանը, ցանկանում ենք, որ գալիք կես դարն էլ գումարվի ապրածդ պատմությանը, ապրես առողջ ու հաջողակ տարիներով և ավելի քան իմաստալից կյանքով:

Ստեփանակերտի Ա.Ղուլյանի
անվան հ.2 հիմնական դպրոցի
ուսուցչական կոլեկտիվ

ՃՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՅԲԲԵՆԱՐԱՆ, ԲԱՐԻ ՉԱԼՈՒՄՏ, ՄԱՅՐԵՆԻ՝ ԼԵՉՈՒ

Եռատոնին ընդառաջ՝ մայիսի 7-ին, Շուշիի «Հարսանիք Լեռներում» օպերացիայի (1992թ.) առաջին օրը Գետավանի Պ.Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին, 3-րդ դասարանների դասվար Իրինա Ազարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Այբուբենի ավարտական տոնահանդես:

Նախքան տոնահանդեսն սկսելը սովորողները դասվարի ուղեկցությամբ հարգանքի տուրք մատուցեցին գոհված ազատամարտիկների հիշատակին՝ այցելելով հուշահամալիր և ծաղիկներ խոնարհելով:

Միջոցառման մեկնարկը տրվեց ԱՀ օրհներգով, ապա ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Ռ. Գրիգորյանը: Մերոպ Մաշտոցի և նրա կատարած գործի մասին խոսեց դասվարը՝ ներկաներին

շնորհավորելով օրվա խորհրդի առթիվ և ամուսնեց Գ. Եմինի «Մենք» բանաստեղծությունը: Տոնական տեսք էր ստացել նաև համայնքակենտրոնի հանդիսությունների սրահը: Ձևավոր



րումը համահունչ էր ԱՀ դրոշի գույներին:

Աշակերտներն ասմունքեցին և երգեցին Մ.Մաշտոցին, հայրենիքին և գարնանը վերաբերող ստեղծագործություններ: Նրանք պարեցին իրենց առաջին վալսը, բեմականացրին «Ծիտը» հեքիաթը:

Տորթի հրավառությունից և ուսուցչուհու կողմից նվերներ ստանալուց հետո աշակերտներին սպասվում էր ևս երկու անակնկալ. բալուն օղ բարձրացան կարմիր, կապույտ, ծիրանագույն փուչիկները, և «կախարդական տուփից» դուրս թռավ փոքրիկ թռչնակը՝ ի լուր աշխարհի ազդարարելով, որ փոքրիկները սովորել են հայերենի բոլոր տառերը:

Ամենավերջում, որպես ծնողկոմիտեի նախագահ, ծնողների անունից շնորհակալություն հայտնեցի Ի.Ազարյանին նման գեղեցիկ և ուրախ միջոցառում իրականացնելու համար:

Աստղիկ ՎԵՐԳՅԱՆ

ՍԵՐՈՒՆԴ

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՆՈՐ ԶԱՀԱԿԻՐՆԵՐԸ

Այբուբենի տոնը դպրոցական հանդիսությունների մեջ առաջնակի խորհրդավորություն ունի: Չէ՞ որ մեսրոպյան զորագնդի շարքերը համալրվում են «նորակոչիկներով», որոնք պետք է ավելի ամրացնեն մեր բերդամրոցը:

Շուշիի Դ. Ղազարյանի անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցում Այբուբենի հանդեսը յուրօրինակ սրբազան ծիսակատարություն էր: Առաջին դասարանցիներն իրենց ուսուցչուհու ղեկավարությամբ հա-

Ուսուցչուհին ամեն ինչ արել է՝ նրանց մեջ սերմանելու սեր մայրենիի, հայկական մշակութային արժեքների նկատմամբ:

Այբուբենի տոնը նաև երդման արարողություն է: Ինչպես ամեն զինվոր բանակում, Մաշտոցի զինվորներն էլ երդում են տալիս պահպանել հայոց լեզուն որպես սերնդեսերունդ փոխանցված տոհմական սրբություն: Ու նրանով արտասանել միայն արդարության խոսքեր...

- Բոլորիս աչքը լույս, մեր երեխաներն այսուհետ անհաղթ ու անպարտ են, որովհետև սովորել են Աստուծո հետ խոսելու լեզուն՝ հայերենը: Սիրեք ու պահեք մեր լեզուն աչքի լույսի պես, իմ բալիկներ, տեղի կանգնեք մեր լեզվին, տարեք հավերժի ջախը, որի անունն է՝ հայոց լեզու: Սա է հայի հավերժության գաղտնիքը:

Առաջին ուսուցչուհի, լույսի թերտուր այս մանկանց երազանքին, որպեսզի նրանց ոգու թռիչքը ևս կայանա մեր իղծերի հպարտ երկնակամարով: Մեսրոպյան այբուբենը բանավիճ է աշխարհաճանաչողության: Այն մարդու առջև բացվում է հրաշքներով լի մի աշխարհ, որով իմաստանում է մարդը,



յոց գրական անդաստանի երևելի դեմքերի ստեղծագործություններով ներդրող ծոնեցին առ Մեծն Մաշտոց և նրա 36 զինվորներ, ու ամեն մեկն իր մոմը վառեց հայոց խորանում:

Աշխարհում կա՞ մեկ այլ ազգ, որի այբուբենին այսքան ներբողներ լինեն: Մեր երեխաները գիտեն դրանք ու իրար հերթազայելով՝ արտասանում են, երգում, պատմում ու ցուցադրում: Առաջին անգամ չենք լսում, բայց ամեն անգամ հպարտալից սարսուռ են զգում, երբ 6 տարեկան փոքրիկների շուրթերից են



զինվում նորանոր գիտելիքներով... Եվ այդ բանալին առաջին ուսուցչի ձեռքին է, որին պարտական ենք ամենքս մեր ողջ կյանքում:

Հանդիսատեսների շարքում երեխաների ծնողներն են, տատիկ-պապիկները: Ոմանք երկար ճանապարհ են կտրել՝ ներկա լինելու սրբազան ծեսին, ինչպես Կաղարծու դպրոցի տնօրեն Լաուրա Հայրապետյանը, որ եկել էր թողնուհու Այբուբենի տոնը շնորհավորելու:

- Այսօր մեր բալիկները հզոր են, որովհետև ասպարեզ են դուրս եկել մաշտոցյան 36 արյուն չթափող զինվորների օգնությամբ: Նրանք համալրում են հայատառ այբուբենով խոսող հպարտ հայերի շարքերը Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու գանգերի սուրբ դողաճեցների ներքո, այդ գանգերի խաղաղություն ավետող ելևէջների տակ...

Թող եռագույնով բացվի Արցախի աշխարհիս յուրաքանչյուր առավոտ: Միայն այդ պարագայում մեր բալիկները կնվաճեն գիտության հրաշք ամրոցի բարձունքները, բարենաղթեց փորձառու մանկավարժը և բոլորի անունից երախտագիտություն հայտնեց առաջին ուսուցչուհուն, անառիկ ամրոց-սուրբ դպրավանդի խոստովանանք, միևնույն ժամանակ բարեպարտ ու բարեխիղճ տնօրենին, որի աշխատանքի շնորհիվ այս դպրոցը պահպանում է իր բարի համբավը, որտեղ հասակ են առնում ու իմաստանում նորանոր սերունդներ:

ՕՊԵՐԱՅԻ ԱՌԱՋՆԱԽԱՂ ԳՊՐՈՅՈՒՄ

Ուսումնական տարեվերջը Շուշիի Դ.Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտացված երաժշտական դպրոցում մի շարք այլ միջոցառումների հետ միասին առանձնահատուկ էր նաև մանկական օպերայի առաջնախաղով: Դպրոցականների ուժերով ներկայացվեց Յուրի Ղազարյանի «Ինչպես է կատուն արհեստ սովորում» մանկական օպերան: Դա կրթօջախի երկացանկում արդեն չորրորդ օպերան է: Մյուս զիջքը Դ.Ղազարյանի անվան դպրոց էր բերել Շուշիի շրջվարչակազմի կրթության և մշակույթի ոլորտների պատասխանատուներին, արվեստասերների, հյուրերի:

Մյուս օպերայի գործողությունները տեղի են ունեցում Երազավանում: Փափկատուն և ծույլ կատուն այլևս չի ուզում զբաղվել իր հիմնական գործով՝ մուկ որսալ: Նա մտածում է, որ իրեն բաժին է ընկել աշխարհի ամենաթվալ գործը, և որոշում է փոխել մասնագիտությունը ու բախտը փորձել այլ արհեստներում: Գնում է ընդունվելու դերձակի մոտ, որը կատվին հանձնարարում է շոր կտրել, սակայն ձեռքն է ծակում, ցավեցնում ու դուրս է գալիս: Փորձում է հողագործի աշխատանք, նույն ձևով չի կարողանում գործիքներն օգտագործել, իրեն է վնասում: Այդ գործն էլ նրա սրտովը չէ: Մտնում է շինարարություն, ավելի վատ վիճակում է հայտնվում: Վարսավիրի գործն է փորձում, խհարարի և այլ, բայց ամեն տեղ

Օպերայի գործողությունները տեղի են ունեցում

«ԵՂԵԳՆՈՒՏ TV ԵՐԹԵՐՈՒՄ» ՏՈՆԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆՆ Է

Ուսումնական տարին ավարտին մոտենալուն պես առաջին դասարանցիները որպես ստուգատես միջոցառման տեսքով ներկայացնում են ամբողջ տարվա իրենց աշխատանքը, որն այս տարի ԱՅ Շահունյանի շրջանի Եղեգնուտի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում կրում էր «Տոնական այբբենարան» խորագիրը: Նպատակը մեկն էր՝ երեխաների մեջ սերմանել իրենց հողի, հայրենիքի, մայրենիի հանդեպ մեծ սեր: Գանաչել երկիրը, տիրոջ իրավունքով ստեղծել,

կան տոն էր, տառերի շքերթ, որտեղ ամեն տառ ու հնչյուն աշակերտները ներկայացնում էին յուրովի, ամենաջինջ ու ամենահնչեղ ձևով, որտեղ մանկական երգն ու պարը միախառնվել էին օրվա խորհրդին: Այստեղ ամեն ինչ համապատասխանում էր թեմային, նույնիսկ ամենաթույլ աշակերտն ուներ իր անելիքը, որն օպերատորի դերում էր հանդես գալիս: Միջոցառման ամբողջ կահավորումն իսկը հեռուստաստուդիա էր հիշեցնում՝ մեծ էկրան, հեռուստագովազային վահանակ, հաղորդավարական սեղան, լուրերի հատուկ թղարկում, թղթակից, որը տեսանյութ էր պատրաստել, գովազդ, հաղորդման հովանավոր և այլն:

Միջոցառման վերջում դպրոցի փոխտնօ-



արարել ու անդերսենյան մանուկի պես միշտ ազնվորեն բարձրանային Բարին:

Մեր փոքրիկ սաներն իրենց բնորոշ ժաշանությամբ և աշխատասիրությամբ երկար պատրաստվել էին միջոցառմանը: Հինգ աշակերտից կազմված դասարանում այնպիսի տոն էր, որ նախկինում այս ձևաչափով երբևէ չի եղել: Միջոցառման մեկնարկը տրվեց մեզ համար խիստ կարևոր, խաղաղություն խորհրդանշող աղավնիների պարով, որոնք սավառնելով երկրագնդի շուրջբոլորը՝ համերաշխություն ու խաղաղ մանկություն են քնածուծ: Հեռուստաստուդիայի վերածված տաղավարից աշակերտները բանաստեղծություններ չարտասանեցին, նրանք հանդես եկան որպես հեռուստահաղորդավարներ, որոնք պարզ ու անբասիր մայրենիով ներկայացրին ամբարած գիտելիքները, հայոց այբուբենի առեծվածային, յուրօրինակ ու չբացահայտված էջերը: Նաև ըստ այբբենական կարգի պատրաստել էին տեղեկություններ ամենատարբեր արթյուրներից: «Եղեգնուտ TV» տաղավարում իսկա-



րեն Հ.Գրիգորյանը երախտագիտության իր խոսքով ոգևորեց ներկաներին, որին հաջորդեց ամենահանդիսավոր պահը: Երեխաներին հանձնեցին գրաճանաչության վկայականներ ու հեթիաթի փոքրիկ գրքեր: Այսուհետ մեր սաները կարող են մաշտոցյան տառերի շնորհիվ նավարկել դեպի լույսի, հույսի, հավատի ու գիտության նոր անդաստաններ՝ իրենց հետ տանելով ամենաթանկ արժեքները՝ Հայրենիք, Հայոց լեզու, Ընտանիք, Ընկերներ:

Մարիամ ՓԻՆԱՅՅԱՆ
Եղեգնուտի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի դասվար

ՀԵՏՆՈՐԳՆԵՐՆ ԵՆՔ ՄԵՐ ՊՎՊԵՐԻ

Մայիսի 11-ին Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի նախապատրաստական խմբում մի յուրահատուկ տոն էր փոքրիկները եռատոն էին նշում: Երեխաների զինվորական հագ ու կապը խոսում էր նրանց հայրենաշունչ ոգու մասին: Նրանք գիտակցում էին, որ մայիսը հաղթանակների ամիս է և արտասանում էին ոգևորիչ բանաստեղծություններ Հայրենական պատերազմի հաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի ստեղծման օրվա մասին: Երեխաներն այդ կապակցությամբ ասունքեցին, պարեցին, երգեցին, բեմականացում ներկայացրին: Փոքրիկները գիտակցում են, որ պարտավոր են

հարգել ու մեծարել մեր նահատակված հերոսներին: Նրանք մեկ րոպե լռությամբ հարգեցին անմահ զոհերի սուրբ հիշատակը և միասին երգեցին Արցախի հիմնը:



հնչեցվեց հերոսների մասին: Իսկ վերջում երեխաները խիզախ զինվորների պես երդվեցին, որ արյան գնով ձեռք բերված հողին թշնամիս երբեք ոտք չի դնի, որովհետև հայրենիքից անուշ ու թանկ ուրիշ ոչինչ չկա:

Չնայած «Արևիկ» խմբում երեք տարիքային խմբերի երեխաներ են, բայց նրանք հերոսաբար, պատվով, իրենց անթերի ելույթով հիացրին բոլորին: Միջոցառմանը ներկա էին հյուրեր տարբեր դպրոցներից: Ցերեկույթը հուզիչ էր: Ներկա էին նաև ՀՀ և ԱՅ հերոս Յուրի Պողոսյանի հարազատները: Հիշատակի խոսք հայրենասիրություն, ստեղծվեց դաստիարակ-ծնող-երեխա կապ և այլն: Ծնողները, հյուրերը և փոքրիկները մեծ բավականություն ստացան միջոցառումից և իրենց շնորհակալությունը հայտնեցին: Որպես դաստիարակ, որպես Արցախում զոհված կին ազատամարտիկի քույր՝ պարտավոր են մեր սերունդին դաստիարակել հայրենասեր, քանզի հաղթանակը ձեռք է բերվել արյան գնով:

Ա. ԽՈՒՐՇՈՒՄՅԱՆ
Սրբեկ. հ.12 հ/դ. «Արևիկ» խմբի դաստիարակ

ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵՂՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Այն, ինչ տեսել են այստեղ և հաստատում են, զարմանալի է: Հանդիպել այսքան մեծ թվով տարբեր տարիքի մարդկանց (դպրոցականներ, ուսանողներ, բանկի աշխատողներ, բժիշկներ), որոնք սովորում և աշխատում են ամենատարբեր բնագավառներում և որոնք մեծ հետաքրքրություն ունեն ֆրանսերենի նկատմամբ ու մասնակցում են ֆրանսերենի դասընթացների, իրոք որ զարմանալի է:

Արցախի պետական համալսարանի ուսանողների հետաքրքրությունը ֆրանսերենի նկատմամբ, որոնք այն ուսումնասիրում են որպես երկրորդ օտար լեզու, ակնհայտ է: Այն, ինչ ես կարողում եմ նրանց ասել, նրանց կապվածությունն է Ֆրանսիային և ֆրանսերենին: Ֆրանսերենը որպես օտար լեզու դասավանդող ֆրանսուհին միայն զգացված և հուզված կարող է լինել այս ամենից: Ֆրանսիան պետք է շնորհակալություն հայտնի, որ Արցախում ֆրանսերեն լեզվի դասավանդումն այսքան կենդանի են պահում:

Լեռների մեջ մեկուսացված այս փոքրիկ հայաբնակ հանրապետությունը, որը միջազգային հանրության կողմից ճանաչված չէ, ինչպես օրինակ՝ Աբխազիան, Մերձդնեստրը, Հարավային Օսիան, մի երկիր է, որտեղ ֆրանսերենը ճանաչված է և շարունակելու է կենդանի մնալ: Շրջաններում, Ստեփանակերտում կան եռանդաշատ ուսուցիչներ, որոնք դասավանդում են ֆրանսերենը՝ մեծ սեր ունենալով Ֆրանսիայի և ֆրանսերենի նկատմամբ: Համացանցի հնարավորություններից նրանք օգտագործում են բազմաթիվ նյութեր:

Ստեփանակերտում գտնվող Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը, որտեղ գտնվում է նաև SPFA-ի ֆրանսախոսների ակումբը, առաջարկում է ֆրանսերենի, պարի դասընթացներ, ինչպես նաև այլ հնարավորություններ երիտասարդներին՝ կազմակերպելով

տարաբնույթ համերգներ ու միջոցառումներ: Սա երեխաների և նրանց ծնողների հանդիպման հետաքրքիր վայր է:

«Պոլ Էյուարի տուն ֆրանկոֆոնիայի կենտրոն» հիմնադրամը, թեկուզ չունենալով շենքային պայմաններ, գործում է՝ օգտագործելով քաղաքի տարբեր մասերում գտնվող դասասենյակներ՝ կազմակերպելով ֆրանսերենի անվճար դասընթացներ: Այն ղեկավարվում է Նելլի կողմից, որը մի իսկական սյուն է ֆրանսերեն լեզվի, ֆրանկոֆոնիայի և ֆրանսիայի ու ֆրանսիացիների հետ բարեկամության համար և որը մեծ էներգիայով ու պատասխանատվությամբ համակարգում է բազմաթիվ դասընթացները, կազմակերպում ֆրանկոֆոնիայի միջազգային սոցիալական միջոցառումներ ու հանդիպումներ: Դասընթացները, որ նա կազմակերպում է, չեն դատարկվում, մասնակիցները շատ քիչ բացակայություններ են ունենում: (Միշել Բուխուն երկու ամիս մասնակցել է Պոլ Էյուարի կենտրոնի դասընթացներին և ուսուցիչների հետ կազմակերպել բանավեճեր բանավոր խոսքը զարգացնելու համար: Այդ դասընթացներին մասնակցել է Անժե քաղաքից ժամանած կամավոր ուսանող ժողովի Դրիանը: Միշելը նաև կազմակերպել է վերապատրաստման 10 դասընթաց, որին մասնակցել են Պոլ Էյուարի կենտրոնի և դպրոցների ֆրանսերենի ուսուցիչները, Նելլի Ավանեսյանի հետ կատարել է դասախոսներ համարյա բոլոր դպրոցներում, մասնակցել է նաև Պոլ Էյուարի կենտրոնի կողմից կազմակերպված Ֆրանկոֆոնիայի սոցիալական միջոցառմանը-խմբի)։ «Ի՞նչ մեծ հաճույք է ինձ համար հանդիպել այսքան վիրաբույժների, մանկաբույժների, դեղագետների, որոնք հավաքվել են ֆրանսերեն սովորելու: Նրանցից ոմանք գալիս են նույնիսկ Շուշիից»:

Քաղաքի կենտրոնում տեղակայված Արցախի պետական համալսարանը գտնվում է վերականգնման աշխատանքների փուլում, օտար լեզուների բաժնում ֆրանսերենը միայն որպես երկրորդ օտար լեզու է դասավանդվում: Բայց կան շուրջ հարյուր ուսանողներ (քիչ տղաներ), որոնք սովորում են ֆրանսերեն իրենց աշխույժ, ակտիվ դասախոսների հետ: Դասագրքերը ռուսական հրատարակության են, բայց դա նրանց չի խանգարում աշխատել: Ես զարմանում եմ, երբ տեսնում եմ, թե ինչպես են նրանք այսպես հեշտությամբ օգտագործում հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուները: Նրանք կարողանում են թարգմանել ռուսերեն կամ հայերեն, քանի որ տիրապետում են այս երկու լեզուներին:

Ինչո՞ւ են Արցախում սովորում ֆրանսերեն: Սա այն հարցն է, որ կարող ես ինքը քեզ տալ, երբ Ֆրանսիան չի ճանաչում այս հանրապետությունը: Ֆրանսերենի դասավանդումը շարունակվում է նախկին ԽՍՀՄ-ի բոլոր երկրներում, քանի որ այն օտար լեզուների դասավանդման մաս էր կազմում: Երբ այս հարցը տալիս ենք արցախցի ֆրանսերեն սովորողներին, նրանք պատասխանում են. «Սիրում ենք այդ լեզուն, այն մեղեդային է, մշակույթի լեզու է և այլն...»: Ուրեմն՝ այստեղ ֆրանսերեն սովորում են՝ սիրելով Ֆրանսիան ու նրա լեզուն:

Դասընթացների ժամանակ մենք հաճախ խոսում ենք հայ-ֆրանսիական հարաբերությունների մասին: Ես ինձ այստեղ օտարերկրացի չեմ զգում: Հայերը և ֆրանսիացիները միշտ էլ մոտիկ են եղել: Ես հաճախ հանդիպում եմ մարդկանց, որոնք ինձ ասում են՝ «bonjour», և հասկանում եմ, որ նրանք սովորել են ֆրանսերենը, և հնարավորություն չեն ունեցել այն կիրառել: Այն ուսուցիչները, որոնք հետ են նախաձեռնում են (Միշելը մտնում էր ֆիզմաթ դպրոցում - /խմբ.), ինձ համար բերում

են մրգեր, մեկ ուրիշն ինձ առաջարկում է իր դետերտը: Իսկ մեկ ուրիշն էլ ամեն անգամ ինձ հանդիպելով ասում է. «ժը տեն», քանի որ այս արտահայտությունը գիտի ֆրանսերենից: Մի փոքրիկ սրճարանում, որտեղ ես երբեմն ճաշում եմ, սեփականատերը միայն թեյի վճարն է վերցնում: Մի այլ սրճարանում մատուցողը խնդրում է ինձանից եվրո, քանի որ եվրոյի հավաքածու ունի և ի փոխանակում՝ նա սիրալիորեն ֆրանսիական երաժշտություն է միացնում: Ինձ հաճախ հրավիրում են ռեստորան՝ ճաշակելու ժենյակով հաց, հենց այս ուշադրության համար էլ ես ինձ օտար չեմ զգում Արցախում:

Այստեղ ես հանդիպել եմ շատ կրթված մարդկանց, որոնք կատարյալ գիտեն պատմությունը ու նաև՝ Ֆրանսիային: Ես հանդիպել եմ շատ երիտասարդների, որոնք ուսումնասիրել են երաժշտությունը և ընդունակ են շատ հեշտությամբ նվագել տարբեր ստեղծագործություններ: Կան անվճար երաժշտական կենտրոններ: Ես իմացել եմ նաև, որ ծնողները շատ ներգրավված են իրենց երեխաների կրթության մեջ:

Նույնիսկ եթե աշխարհը չի ճանաչում այս հանրապետությունը, համենայն դեպս, կան համայնքներ, որոնք բարեկամական հոջակազրեր են ստորագրել Արցախի համայնքների հետ: Բացի դրանից, ամեն տարի զբոսաշրջիկների թիվն աճում է, որոնք կարող են վկայել այս հայկական հողի հարստության մասին: Ինչ վերաբերում է ինձ, իհարկե, ես կիրառեմ իմ շրջապատին և կկոտրեմ կանխակալ կարծիքներն ու գաղափարները:

Արցախում երկու ամիս մնալը և նրան բացահայտելը ինձ համար մեծ հպարտություն է:

Միշել ԲՈՒՒՍՈՒ
Ստեփանակերտ, գարուն, 2019

ԻՎԱՆՅԱՆԸ ՄԵՆՔ ԵՆՔ

Նախադպրոցական մանկավարժությունը գիտություն է, որն զբաղվում է նախադպրոցահասակ երեխաների դաստիարակության գործով: Այն ունի իր հատուկ առարկան, բովանդակությունը, որը բացատրվում է նրանց ֆիզիոլոգիական և հոգեբանական զարգացման առանձնահատկություններով: Այդ տարիքում մանուկը տիրապետում է շարժումներին ու խոսքին, կատարում է իր սկզբնական կենսական փորձառությունը, ձևավորվում են նրա գիտակցությունն ու զգացմունքները, սկսում են դրսևորվել մարդկանց հետ նրա հարաբերությունները, զարգանում են մարդու կյանքի, բնության մասին նրա առաջին պատկերացումները:

Երևի իմ սերնդակիցները հիշում են խորհրդային ժամանակներում տարածված «Ամեն լավը՝ երեխաներին» կարգախոսը: Նպատակ էր դրված ապահովել յուրաքանչյուր երեխայի երջանիկ մանկությունը, ընդլայնել նախադպրոցական ցանցը:

Չկամենալով վերլուծել նպատակի իրականացման եղանակներն ու մեթոդները՝ ուզում եմ համեմատական եզրեր փնտրել նախադպրոցական հիմնարկների շենքերի նախկին և ներկայիս չափանիշների միջև:

Ներկայիս մանկական նախադպրոցական հիմնարկներն առանձնանում են հարմարավետությամբ, սանիտարական նորմերի համադրությամբ, ջեռուցման կատարյալ համակարգով, ուրույն ոճով, մանկական գույքի, դիդակտիկ պարագաների, խաղալիքների, ուսումնական նյութերի ու գրականության բազմազանությամբ ու քանակական առումով:

Իսկ տիպային հաստիքացրված պարուսույցի, ֆիզիոհիստոլոգի նախաստեղծումն միանգամայն ողջունելի որոշում է:

Ասկերանի շրջանում ժամանակակից չափանիշներին համապատասխան առաջին նախադպրոցական հիմնարկը բացվել է Խաչեն համայնքում՝ 2007թ., որտեղ բոլոր պայմաններն առկա են, իրոք, երջանիկ մանկություն անցկացնելու համար:

Հաջորդեց Ավետարանոցի, Իվանյանի,

Հարավի, Նորագյուղի, Սարուշենի, Շոշի համայնքներում մնամատիկ կառույցների շարքը:

Հավանաբար հարգարժան ընթերցողները կհիշեն Ասկերանի շրջանի մանկական հիմնարկների և Երևանի «Սեբաստիա» թիվ 159 մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվների սերտ համագործակցության մասին «Լուսարար»-ի էջերում պարբերաբար հրատարակումները: Այն տարիներին՝ 1980-1995թթ., «Սեբաստիայում» երեխաների համար ստեղծվել էին հեքիաթային պայմաններ. մանկական երկաթուղի, լողավազան, կաբինետային համակարգ, բուսաբանական այգի, թոնրատուն, ամֆիթատրոն, կախարդական տնակներ, ու ամեն հանդիպումից հետո երկար ժամանակ ապրում էինք այդ հեքիաթ-երազներով: Երջանկահիշատակ ծնօրեն Վերոնիկա Գևորգյանը գեղեցիկ ձեռնարկումների հնարամիտ շտեմարան էր:

Ներկայումս նախադպրոցական հիմնարկների տնօրենների շրջանում նկատվում է խրախուսելի մրցակցություն՝ շենքի, նրա շրջապատի գեղագիտական ձևավորման համար, ինչին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ծնողները: Նախշազարդ անկյունները, պատերը, առաստաղն ասես միասնական ու կատարյալ հեքիաթ են հյուսում:

Մի պահ մտորում եմ. որքա՞ն երջանիկ ու լիարժեք կլիներ աշխարհը, եթե բոլորը հստակ իմանան իրենց անելիքը և այն իրականացնելու համար լինեն միշտ պատրաստ միջոցներ:

Արտաքին աշխարհի զգայական իմացությունը երեխաների մտածողական գործունեության ու լեզվի հիմքը և աղբյուրն է: Մտավոր դաստիարակությունը ճիշտ գիտելիքների տարբերով երեխաների գիտակցության հարստացումն է:

«Հենց երեխան սովորում է խոսել, նրա մեջ զարգանում են... հետաքրքրություն դեպի շրջապատի առարկաները և այն հարցասիրությունը, որ առաջանում է երեխայի մեջ», - գրում է Սեչենովը:

Մտավոր դաստիարակության հիմնական մեթոդները բազմազան են՝ դիտում-

ներ, համեմատություններ, գրույցներ, գեղարվեստական պատումներ, մանկական գիրք, ինչն օգնում է երեխաներին նոր, նրանց համար անծանոթ աշխարհն ընկալելու, զարգացնում երևակայությունն ու երազանքը, դաստիարակի պատասխանները երեխաների հարցերին:

Մայիսյան եռասունի նախօրեին հրավեր ստացա մասնակցելու Իվանյան համայնքի մանկապարտեզում կազմակերպվելիք միջոցառմանը:

Երեխաներն իմ թուլությունն են, չմասնակցել չէի կարող: Այդ հիմնարկի միջոցառումներին միշտ էլ մասնակցել եմ մեծ սիրով, բայց թոշակառու-մանկավարժի կարգավիճակով առաջինն էր: Թաքուն հույս էի փայփայում, որ կրկին կտեսնեմ երաժշտական ղեկավար Նանար Ղազարյանին, որն իր քնքուշ ու հոգատար վերաբերմունքով ու նվիրվածությամբ ոչ միայն երեխաների, նաև մեծերի սիրելին է: Հուրախություն՝ տեղեկացա, որ նա գտնվում է ֆիզիոլոգիական արձակուրդում: Միրելի՛ Նանար, ցանկանում եմ, որ ունենաս առողջ բալիկ, ամուր ընտանիք, աշխատանքային ջերմ մթնոլորտ ու կոլեկտիվ: Մանկապարտեզի տնօրեն Արև Թովմասյանը՝ չորս տղաների մայր, պրպտուն, անհանգիստ բնավորությամբ, նորարար, իր գործի նվիրյալ հաշվետվության պես ցույց է տալիս նոր ձևավորված անկյունները՝ երաժշտության պատ, ֆիզդաստիարակության պատ, մանկապարտեզի տոհմածառ...:

Մանկական հիմնարկի ավագ և կրտսեր խմբեր է հաճախում 42 երեխա: Իվանյան համայնքի տարածքի հեռավորության պատճառով ոչ բոլոր նախադպրոցականներն են ընդգրկված: Տնօրենն անցյալ տարի մանկապարտեզի հողամասում աճեցրել է կաղամբ, գազար, կարտոֆիլ, պոմիդոր ու բերքը հատկացրել երեխաների սննդին: Այդ անգամ ծաղիկներն են բույր տալիս շրջապատին:

Երեխաներն անհամբեր սպասում էին հյուրերին՝ ցուցադրելու իրենց սովորածը (երգեր, արտասանություններ, հաշվարկներ, պարեր, խաղեր): Դաստիարակներ Սուսաննա Դանիելյանի, Մարիամ Հով-

հանմիսյանի, պարուսույց Ռիտա Բեգլարյանի հետևողական աշխատանքի արդյունքում շնորհալի երեխաները ցուցադրեցին հայրենասիրական, ազգագրական երգեր, պարեր, «գնացքով» էքսկուրսիա մեկնեցին Եվայեց հավաքունը, 8 թիվը ստացան տարբեր գործողությունների միջոցով, կատարեցին ապլիկացիոն աշխատանքներ:

Հպարտության պահեր ապրեցինք, երբ մանկական անմեղ ծայրով հայտնի երգի տողերը փոխած՝ խրոխտ ծայրով երգեցին.

*Իվանյանը ես եմ,
Իվանյանը դու ես,
Իվանյանը մենք ենք...*

Հյուրերը՝ Նորագյուղի, Ստեփանակերտի, Մարտունու, Ճարտարի մանկապարտեզների ղեկավարներ, կրթության շրջանային և հանրապետական պատասխանատուներ, իրենց գոհունակությունը հայտնեցին միջոցառման, պարասպաններին, ջերմ ընդունելության համար:

Իսկ փոքրիկ Եվայի և Անիի հեգաճկուն պարը մի առանձին հմայք հաղորդեց միջոցառմանը: Ձիվորական հագուստով մեր փոքրիկները հավաստիացրին, որ հայրենիքի պաշտպանության սուրբ գործին անպայման իրենց ներդրումը կբերեն, կշենացնեն երկիրը, հայերեն շնչող ու շենացող Իվանյանը: Նման օրինակելի, ջերմ մթնոլորտում մեծացող, գուրգուրանքի առարկա դարձած մեր մանուկները վաղը կկերտեն մեր հայրենիքի պայծառ ապագան:

Մեծա գոհունակությամբ հրաժեշտ տալով երեխաներին՝ պետք է մշեմ, որ երջանկություն է լինել հոգատար, բարի, նվիրված մարդկանցով շրջապատված:

Սերը մանուկների հանդեպ համամարդկային է:

Թող արևը միշտ փայլի աշխարհի բոլոր երեխաների համար:

Թող սերը երեխաների հանդեպ, ամենօրյա անխուժ նվիրումը մեզ ավելի մերձեցնեն, և նախակրթարանը շարունակի իր հայրենամարտ գործունեությունը:

Ս. ԱՄՐՅԱՆ
Ք. Ասկերան

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՑԱԽՅԻ ՄԱՐԶԻԿԸ ԴԱՐՁԱՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Մայիս ամիսը բնորոշվում է որպես հաղթական ամիս ինչպես հայոց պատմության մեջ, այնպես էլ մարզաշխարհի պատմության: Հերթական բացարձակ հաղթանակն արձանագրեց արցախցի մարզիկը Եվրոպայի առաջնությունում: Արցախցու հաղթական ոգին արտահայտվում է նաև մարզական մրցասպարեզում: Արցախցիներն են մեկ առիթ ունենք հայրտանալու մեր ազգի ու հայրենիքի անունը բարձր պատիվ մարզիկներով ու մարզիչներով:

Ինչպես Եվրոպայի առաջնությունից վերադարձած մարզիկներին: Մեկ ոսկի եւ երկու բրոնզ



Եվրոպայի առաջնությունից. սա բարձր արդյունք է մեզ համար:

Մայիսի 18-19-ը Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կայացած KWS վարկածով կիրկուշինկայ կարատեի պատանիների Եվրոպայի 2-րդ առաջնությանը մասնակցե-

լին արցախցի 7 մարզիկներ՝ աշխարհի երկակի եւ Եվրոպայի քառակի չեմպիոն, մարզիչ Արթուր Առուշանյանի գլխավորությամբ: Առաջնությանը մասնակցում էին 12-17 տարեկան 400-ից ավելի մարզիկներ 25 երկրից: 14-15 տարեկան խմբում -45 կգ քաշային կարգում պայքարող Արեն Կարապետյանը երեք մեծամարտ ունեցավ: Առաջին մարտը ՌԴ-ի ներկայացնող մարզիկի հետ էր, երկրորդը՝ ուկրաինացու, որոնց նրբաբարձր հաղթելով դուրս եկավ եզրափակիչ ու կրկին հանդիպեց ռուս մրցակցին: Իրեն փայլուն դրսևորելով բոլոր մարտերում՝ Արեն Կարապետյանը դարձավ Եվրոպայի չեմպիոն: Անգելինա Աղասյանը եւ Արամ Միքայելյանը գրավեցին բրոնզե մեդալներ:

Կիրկուշին կարատեի մարզիչ Գոռ Աղասյանի սան Անգելինա Աղասյանը մեծամարտեց 16 տարեկան խմբում -50 քաշային կարգում: Երկու մարտ ունեցավ՝ բուլղարացու եւ ռուս մարզիկների հետ: Ասում է, որ առաջին անգամ է մասնակցում Եվրոպայի առաջնության, լավածությունն ու փորձի պակասը խանգարեցին չեմպիոնի


կոչմանը հասնելուն, մինչդեռ մասնակցությանը ծեռք է բերել նոր փորձ, վստահություն առաջիկա մրցումների համար: Կոչ է անում բոլոր արցախցի մարզիկներին՝ կտրուկել որևէ պարտությունից, այլ կամքի ուժ ու համարություն դրսևորելով՝ մինչև վերջ պայքարել հանուն հաղթանակի: Եվ հետևում է իր կոչին, նպատակադրվել է դառնալ աշխարհի չեմպիոն:

Արթուր Առուշանյանի խոսքով՝ առաջնության արդյունքն ավելի քան գոհացուցիչ է: Առաջին անգամ պատանիների KWS վարկածով Եվրոպայի չեմպիոն ունենք: Սա բարձր վարկանիշ ունեցող մրցաշար էր, որտեղ մասնակցում են ուժեղագույն մարզիկներ, որոնց մեջ հաղթանակի կոչմանը հասնելու համար պետք է հաղթել թե՛ մարտերում: Աշխարհի կրկնակի եւ Եվրոպայի քառակի չեմպիոնը խոստովանում է, որ անկարագրելի զգացմունքներ, բուռն հույզեր ապրեց, երբ առաջին անգամ իր պարապած սանը հռչակվեց Եվրոպայի չեմպիոն՝ հանձին Արեն Կարապետյանի: Սրանով չեն եզրափակվելու: Առաջիկայում նոր մրցաշարերն են, նոր մարտահրավերները:

ԱՐԱԳ, ԲԱՐՁՐ, ՈՒԺԵՐ

ԱՅՄՈՒՆ ԵՆ ԱՌԱՋԱՅԵԼ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Համառոտ ներկայացնենք օլիմպիական խաղերի բովանդակությունը: Ժամանակակից օլիմպիական խաղերը միջազգայնորեն համակարգված սպորտային ամենախոշոր մրցաշարերն են, որոնք անց են կացվում



չորս տարին մեկ՝ Միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) հովանու ներքո: Օլիմպիական խաղերում նվաճած մեդալն սպորտում ամենաբարձր ձեռքբերումներից է: Օլիմպիական խաղեր անցկացնելու ավանդույթը, որը գոյություն ունի Հին Հունաստանում, ծնվել է որպես կրոնական պաշտամունքի մաս: Խաղերն անց էին կացվում մ.թ.ա. 776թվից մինչև մ.թ. 393 թվականը: Ընդամենն անց է կացվել 293 օլիմպիադա՝ հույների համար սրբատեղի Օլիմպոսում: Դրանից է ծագել խաղերի անվանումը: Ժամանակակից օլիմպիական խաղերը վերածնվեցին 19-րդ դարի վերջին՝ ֆրանսիացի հասարակական գործիչ Պիեր դը Կուբերտենի կողմից: Օլիմպիական խաղերը, որոնք հայտնի են նաև որպես ամառային օլիմպիական խաղեր, անց են կացվում

չորս տարին մեկ, սկսած 1896-ից, բացառությամբ համաշխարհային պատերազմների տարիները: 1924թ. հիմնվեցին ձմեռային օլիմպիական խաղերը, որոնք սկզբնական շրջանում անց էին կացվում ամառայինի հետ: Բայց 1994-ից սկսած՝ ձմեռային խաղերի ժամանակն ամառային խաղերից հետո երկու տարի ուշ՝ տեղափոխվել է: Օլիմպիական խաղերն ավարտվելուց մի քանի օր անց նույն մարզադաշտում սահմանափակ հնարավորություններով մարզկանց համար անց են կացվում Պարալիմպիկ խաղերը: Անցկացման վայրն ընտրում է ՄՕԿ-ը: Օլիմպիական խաղերի խորհրդանիշն իրար միացված հինգ օլիմպիական օղակներն են, որոնք նշանակում են աշխարհի հինգ բնակելի մասերի միասնական շարժումն օլիմպիական ուղղությամբ: Օլիմպիական շարժման նշանաբանն է՝ արագ, բարձր, ուժեղ: Դրոշմը՝ սպիտակ կտորի վրա օլիմպիական օղակներ, բարձրացվում է բոլոր խաղերի ժամանակ: Հնչում է պաշտոնական օլիմպիական հիմնը: Բացման արարողությանը թիմերը շքերթ են կատարում ազգային դրոշմներով: Կատարվում է օլիմպիական կրակի երթ: Երբեմն խաղադաշտում դրոշի բարձրացումը՝ երկնագույն կտորի վրա պատկերված սպիտակ աղավնի, որը կտուցին պահում է ձիթապտղի շյուղ, խորհրդանշում է խաղերի ժամանակ բոլոր զինված հակամարտությունների դադարեցման ավանդույթը: Օլիմպիական խաղերին մասնակցում են լավագույն մարզիկները աշխարհի տարբեր ծայրերից, որոնք նախապես մասնակցել ու հաղթել են օլիմպիական վարկանիշ ունեցող միջազգային մրցաշարերում եւ հավաքելով համապատասխան միավորներ՝ ստացել ուղեգիր:

գույն մարզիկների շարքում մեդալ վաստակել: «Օլիմպոսին» հասած մարզիկներից շատերը, պատվամասնի կանգնած, հուզվում, արտասվում են: Դրանք ուրախության, բայց միեւնույն ժամանակ, անցած չորս տարվա ճանապարհից ստացած հոգնածության, ծանրաբեռնվածության, դժվարությանը ձեռք բերածի գիտակցման արցունքներ են:

- Ի՞նչ է պետք մեր մարզիկներին դեպի օլիմպիադա մտովկացնելու համար:

- Օլիմպիական խաղերը վառ տոն է, մրցակցության ոգու հաղթանակ, երբ հաղթում է ամենապատրաստված, ամենատարամարդկած, ամենակենտրոնացած մարզիկը: Մենք բոլորս շարժվում ենք դեպի այդ գլխավոր նպատակը՝ հաղթանակ օլիմպիադայում: Օլիմպիական մարզածուրդ պարապող յուրաքանչյուր մարզիկի երազանքը խաղերին մասնակցելն է ու օլիմպիական մեդալի արժանանալը: Բայց ծյուրոն նախ մարտարվեստ է, դաստիարակության արդյունավետ ծեսավորելու լավագույն տվորություններից զերծ մնալու եւ արժանապատիվ մարդ լինելու գերագույն նպատակով: Ձյուղոն դաստիարակում է ֆիզիկապես եւ հոգեպես: Խորհրդային տարիներին մարզիկներն ավելի մեծ համբավ ունեին հանրության մեջ: Դա լավագույն մոտիվացիա էր նրանց համար: Ներկայումս էլ արտասահմանում մարզական ձեռքբերումներն այնքան բարձր են գնահատվում, ինչպես, ասենք, բարեգործությունները:

Կորեայում, որտեղ թաքցվող ազգային մարզածու է, բոլորը պարտադիր տիրապետում են դրան: Աշխատանքի վերցնելիս առաջնորդվում են այն սկզբունքով, որ եթե մարդ կարողանում է հաղթահարել ինքն իրեն, նա կլինի նաև լավ աշխատող ու առաջնորդ: Ձարգացած երկրներում արդիֆեսիոնալ մարզիկներն ունեն անձնական մեդալ, դիտող, մարզիչ, հոգեբան, ֆիզիկական պատրաստության համար առանձին մարզիչ: Մարզիկն առավելագույն երեկո անխնայ աշխատում է՝ շրջապատված մասնագետներով: Մեզ մոտ պատկերն այլ է: Մեր պետությունը չի կարող բոլոր պայմաններն ստեղծել, բոլոր ծախսերը վերցնել իր վրա եւ օլիմպիական խաղերի համար մարզիկներ պատրաստել: Մեզ պետք են հովանավորներ, որոնք կզբաղվեն որևէ մարզիկի մարզական կյանքով: Ցավոք, Ստեփանակերտում չկան հա-

մապատասխան մարզադաշտիկներ՝ մեծ մասշտաբով մրցույթներ կազմակերպելու, այլ երկրներից մարզիկներ հրավիրելու համար: Մենք մասնակցում ենք երևանում կազմակերպվող սեմինար-մարզումներին, բայց մասնագետներ հրավիրելու հարցում խնդիրներ կան: Այսպես դժվար է սպորտը զարգացնել: Այնուհանդերձ, մեր մարզիկները ոգով ուժեղ են, չեն նահանջում դժվարությունների առաջ: Իսկ չգոհացնող պայմաններում լուրջ արդյունքների հասնող մարզիկները, որոնք, ի դեպ, քիչ չեն մեր շրջապատում, արժանի են բարձր գնահատականի: Մեր ներուժը մեծ է, մեր մարզիկները կարողանում են սահմանափակ հնարավորություններով մեծ արդյունքների հասնել: Ես կողմ եմ մեր երկրում ցանկացած մարզածուի զարգացման: Բոլոր մարզածուերն էլ կարևոր են: Առհասարակ, ֆիզիկապատրաստության պետք է դպրոցում գլխավոր դեր ունենա: Դա առողջություն է, ճիշտ դաստիարակություն, ազգի պաշտպաններ ծեսավորելու լավագույն միջոց: Իսկ օլիմպիական մարզածուերին ավելի շատ պետք է ուշադրություն դարձնել: Մեր մարզիկների ներուժն ու մրցակցության ոգին նրանց թույլ են տալիս լինել ամենաարագը, ամենաբարձրը, ամենաուժեղը:

Հունիսին պատրաստվում ենք ութ հոգանոց խմբով մեկնել Ֆրանսիա՝ մասնակցելու Աշուրոյի միջազգային մրցումներին, այնուհետև Բելգիայում կմասնակցենք ուսումնական սեմինարների: Մարզիկների համար շատ նոր բացահայտումներ կլինեն: Կհասնանք, որ հենց այնպես չեն պարապում, կմոտիվացվեն դեպի նոր հաղթանակներ, դեպի վարկանշային մրցույթներ, դեպի օլիմպիական խաղեր:

- Ի՞նչ նշանակություն ունի մեր պետության համար մարզիկների մասնակցությունը օլիմպիական խաղերին:

- Դա առաջին հերթին պետք է հայերիս՝ հաղթահարելու փոքր, բազմաշառք, ցեղասպանություն տեսած ազգ լինելու բարդույթը: Մենք հաղթանակած երկիր ենք: Մեր մարզիկներն անկախության ու հաղթանակի սերունդն են: Նրանք կարող են և պետք է դրսևորեն իրենց մեջ կուտակված ներուժը: Առաջին հերթին իրենք իրենց ցույց տան սեփական ուժը, իսկ աշխարհի կողմից ճանաչումը կգա ինքն իրեն:



Սպորտում մեր մարզիկների հաջողությունների մասին բազմիցս խոսել ու խոսելու ենք, առավել եւս հաշվի առնելով, որ սպորտում գրանցված բարձր ցուցանիշները մարտավարական նշանակություն ունեն մեր երկրի ճանաչման հարցում: Եթե դառնալով Եվրոպայի կամ աշխարհի չեմպիոններ՝ մեր մարզիկներին հաջողվում է հնչեցնել հայոց օրինակը, բարձրացնել մեր եռագույնն ու միջազգային հանրության ուշադրությունը սեւեռել մեր երկրի վրա, ապա ինչպիսի՞ ցնցում կլինի այն դեպքում, երբ մեր մարզիկներին հաջողվի մասնակցել

աշխարհում ամենաբարձր վարկանիշ ունեցող մրցաշարին ու նվաճել սպորտային ամենաբարձր գագաթը: Խոսքը, իհարկե, օլիմպիական խաղերի մասին է: Թեմայի շուրջ խոսեցինք Արցախի ծյուրոյի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ, սեւ գույնի 3-րդ դաս Իվան ԱԶԻՋԲԵԿՅԱՆԻ հետ: Ձյուղո մարզածուում շուրջ քառասուն տարվա փորձ եւ Արցախի ՀՄՊՄԴ-ում մարզչական ավանդ ունեցող, Արցախում հայտնի եւ սիրված մարզիչն ունի Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում մրցանակակիր աշակերտներ. ծյուրոյից Եվրոպայի գավաթի, իսկ սամբոյից՝ Եվրոպայի և աշխարհի մրցանակակիրներ: Մարզչի խոսքով՝ մեր մարզիկների մասնակցությունն օլիմպիական խաղերին կարևոր նշանակություն մեծ նպատակ է, որին պետք է ձգտել՝ չխնայելով ոչ մի ջանք:

Ձյուղոն մեր հանրապետությունում գործող օլիմպիական մարզածուերից է, որը որպես այդպիսին հռչակվել է 1964թ.: 1996թ. Արցախում բացվել է Ձյուղոյի ֆեդերացիա՝ Սեյրան Օհանյանի նախագահությամբ: Արցախում ծյուրոյ մարզածուը զարգացնելու եւ մասսայականացնելու գործում մեծ ներդրում

ունի մարզիչ Ի.Ազիզբեկյանը: Արցախցի ծյուրոյիստները մասնակցում են հանրապետությունում եւ արտերկրում անցկացվող մրցաշարերին: Հայաստանից դեռևս չի հաջողվել ծյուրոյ մարզածուից օլիմպիական մեդալ նվաճել:

- Պարոն Ազիզբեկյան, մի՞թե այդքան դժվար է օլիմպիական մեդալ վաստակել:

- Հաղթանակը հեշտ չի տրվում ոչ մի դեպքում, իսկ օլիմպիական խաղերում հաղթելն առավել եւս դժվար է: Հեշտ չէ նաև այն ճանապարհը, երկար տարիների տքմաշան աշխատանքը, որն անցնում է մարզիկը՝ խաղերին մասնակցելու համար: «Կարևորը մասնակցությունն է» հայտնի խոսքն այս դեպքի համար է ասված: Մասնակցելն արդեն իսկ մեծ ձեռքբերում է, քանի որ քչերն են կարողանում հասնել դրան: Ճապոնական ասացվածք կա. կաղնին ունի հազարավոր պտուղներ, որոնք հասունանալով՝ այս ու այն կողմ են ցրվում: Դրանցից միայն մեկն է, որ անուն ու կաղնի է դառնում: Սպորտում էլ է այդպես: Մենք կարող ենք ունենալ հիանալի մարզիկներ, բայց քչերին կհաջողվի օլիմպիական խաղերին մասնակցել ու հազարավոր լավա-

ՄԻՋՏ՝ ԱՌԱՋԻՆ

ՆՁՊ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԹԻՄԸ՝ ՅՈՒԹԵՐՈՐԴ ԱՆՊԱՍ ԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ ՀԱՂՈՐԴ

Առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլում Արցախի դպրոցականները վաստակել են 12 առաջին տեղ, որից յոթը բաժին է ընկնում Նախնական գինվորական պատրաստության առարկայից մասնակիցներին: Մեր թիմը երևան քաղաքի, մարզերի՝ ընդհանուր առմամբ 12 թիմերի մեջ գրավել է առաջին պատվավոր տեղը՝ արդեն յոթերորդ տարին անընդմեջ արժանանալով գավաթի, անդամները՝ առաջին կարգի մեդալների ու դիպլոմների:

Թիմի կազմում էին՝ Նունե Գրիգորյան (Ստեփ. հ. 9 հ/դ, 8-րդ դաս.), Տիգրան Յայրի-յան (հ.11 ա/դ, 12-րդ դաս.), Արման Բադալյան (Ֆիզմաթ, 10-րդ դաս.), Ալիկ Քոչարյան (Շահումյանի շրջան, Չարեքտարի մ/դ, 10-րդ դաս.), Սերգեյ Նավասարդյան (Հաղուրթի շրջանի Քյուրաթաղի մ/դ, 10-րդ դաս.), Մերի Գաբրիելյան, Ասկերանի մ/դ., 11-րդ դաս.), Արմեն Սարգսյան (Ասկերանի շրջանի Իվանյանի մ/դ, 12-րդ դաս.): Թիմի մարզիչները՝ զինղեկներ, մայր Արսեն Յարուբյուրյան (Ստեփ. հ.9 դպրոց) և մայր Նվեր Լազարյան (Ստեփ. հ.12 դպրոց):

Օլիմպիադայի բացմանը ներկա էր և ողջույնի խոսք էր ասել Արցախի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)՝ բարենախթելով, որ հաղթեն ուժեղագույնները:

Թիմերը մրցել են շարային պատրաստություն, ԱԿ գեների ոչ լրիվ քանդում և հավաքում, հրաձգություն օդամղիչ հրացանից, ձգումներ պտտածողի վրա (տղաներ), ձեռքերի ծալում և ուղղում (աղջիկներ), ռոմակի

նետում, վազք մարզաձևերում և հանձնել թեստային աշխատանք:

Թիմային հաղթանակից բացի հաղթող-



ներ են որոշվել անհատական արդյունքներով: ԱԿ քանդում և հավաքում մարզաձևում մրցանակային բոլոր երեք տեղերն զբաղեցրել են Արցախի թիմի անդամները՝ Տիգրան

Յայրիյան, Արման Բադալյան և Արմեն Սարգսյան: Իսկ վազք 500մ աղջիկների վազքում 2-րդ կարգի դիպլոմի է արժանացել Նունե Գրիգորյանը: Թեստային աշխատանքից առավելագույն 20 միավորից ամենաբարձր՝ 18,5 միավոր վերցրել են Արցախի թիմի աղջիկները:

ՆՁՊ օլիմպիադա Յայաստանում անցկացվում է 8-րդ տարին, որին Արցախը յոթ տարի է, ինչ մասնակցում է ու միշտ վերահառնում հաղթողի գավաթով:

Մայր Յարուբյուրյանն իր երախտագիտությունն է հայտնում թիմը նախապատրաստելուն աջակցություն ցուցաբերած ԱԶԿԱՆ ՌՀ, ՖԴ, ՀԿԴԿ բաժնի վարիչ Ստեփան Օհանջանյանին, Ք.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի (որտեղ տեղի են ունեցել մարզումները) հրամանատար, փոխգնդապետ Վահրամ Յակոբյանին, հ.11 ավագ դպրոցի զինղեկ Արմեն Դուլխանյանին:

Իհարկե, պայմանականորեն ենք առանձնացնում Արցախի թիմի հաղթանակը հայ ժողովրդի բոլոր հատվածների միասնականության մեջ է: Այսօր Յայաստանի ու Արցախի դպրոցականները մրցակիցներ են մրցադաշտում, վաղը տղաները կողք կողքի, ուս ուսի մեր սահմանն են պաշտպանելու, հարկ եղած դեպքում՝ նաև մարտադաշտում, և նրանց այսօրվա մրցելույթները կանխորոշում են վաղվա միասնական հաղթանակը:

Սեփ. լրատվություն

Շնորհավորանք ՎԱՍՏԱԿԻ ԲԱՐՉՈՒՆՔԻՆ



Երբ խորհում ես կյանքի ուղու մասին, ակններն է դառնում մարդու արած-թողածի հանրագումարը: Այո՛, մարդն ապրում է և արարում, ստեղծում և կատարելագործում այն ամենը, ինչ կատարել է կյանքի ընթացքում:

Այդ վաստակն առավել մնայուն է դառնում, երբ գումարվում են ջանք, եռանդ, կորով և, անշուշտ, անմնացորդ նվիրում:

60-ամյակը այն բարձունքներից է, երբ ի մի են բերվում արած-թողածը, նվիրման արդյունքները, մանավանդ որ այդ բարձունքին հասնողը բազմափորձ մանկավարժ է՝ նվիրման ջանքերով զարդարված:

Այդպիսին է Շուշիի Խ. Արուսյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի փոխտնօրեն, հայոց լեզվի և գրականության վաստակաշատ ուսուցչուհի Լիդա Մկրտչյանը, որի ավանդը մեծ է սերունդներին կրթելու վեհ ու պատվավոր գործում:

Ծնվել է 1959թ. մայիսի 12-ին ԼՂ Մարտունու շրջանի ճարտար գյուղում: Բարձր գնահատականներով ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը:

1979թ. ընդունվել է 1983-ին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը: Գյուղի դպրոցում՝ Գյունե Կալերում սկսել է կատարել իր առաջին մանկավարժական քայլերը: 1986թ. նա մանկավարժական գործունեություն է ծավալել Երևանի հ.187 դպրոցում, ուր տեղափոխվել է ամուսնանալուց հետո:

1992թ. Շուշիի հաղթանակը հայրենական տուն է կանգնել և Լ.Մկրտչյանի ընտանիքին:

1993թ. Լիդա Մկրտչյանը աշխատանքի է անցնում Շուշիի Խ.Արուսյանի անվան միջնակարգ դպրոցում, 1995թ.՝ Արամ Մանուկյան դպրոց-վարժարանում (որն այնուհետև կոչվելու էր Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց)՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, իսկ 2001-2011թթ.՝ ուսնասվար:

2011թ. Լիդա Մկրտչյանը տեղափոխվում է աշխատանքի է անցնում Խ. Արուսյանի անվան դպրոցում՝ դարձյալ որպես ուսնասվար, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

2016թ. ապրիլի 29-ին Շուշիի երկու հանրակրթական դպրոցները միավորվեցին Խ. Արուսյանի անվան դպրոցում:

Լիդա Մկրտչյանը շարունակեց ուսնասվարի իր ջանադիր պարտականությունները և այդպես աշխատում է առայսօր: Տարիների ընթացքում նրա սաներն ակտիվորեն մասնակցել են առարկայական օլիմպիադաների և շարադրությունների մրցույթներին՝ ցուցաբերելով հաջողություններ:

Լիդա Մկրտչյանն ունի օրինակելի ընտանիք: Ամուսինը՝ Մերուժան Սարգսյանը, տարիների փորձ ունեցող մանկավարժ է: Երեք որդիները և ունեն մանկավարժական կրթություն և աշխատում են մանկավարժական և մաթեմատիկական ոլորտում: Սիա մի մանկավարժի ընտանիք, որում յուրաքանչյուրն իր նպաստն է բերում հայրենիքի այսօրվա և ապագայի կերտմանը: Լ. Մկրտչյանը «Լուսարար»-ի ակտիվ թղթակցողներից է:

Լրացել է բազմամյա մանկավարժի ծննդյան 60 տարին:

Շուշիի Խ.Արուսյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի ողջ կոլեկտիվը շնորհավորում է վաստակաշատ մանկավարժի ծննդյան 60-ամյակը և մաղթում քաջառողջություն, նորանոր հաջողություններ աշխատանքային ասպարեզում և ընտանիքում:

Շուշիի Խ. Արուսյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ

Յուրաքանչյուր դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները լիարժեք են, երբ դրանք համատեղվում են գիտելիքների հարստացման, ուղեղի ու բանականության զարգացման ուղղությամբ կազմակերպվող միջոցառումների հետ: Այդ առումով առանձնապես կարևոր է ինտելեկտուալ խաղերի անցկացումը, ինչպես՝ «Բրեյն-ռինգը»:

«Բրեյն-ռինգը» սկիզբ է առել 1980թ., սակայն լայնորեն ծավալվել է 1990-ական թթ.: Խաղն իր անվանումը ստացել է ՌԴ (Նախկին ՌԽՍՀ) Դնեպրոպետրովսկի գիտակների կողմից և փոքր-ինչ ընդմիջումներով շարունակում է գործել ու հեռարձակվել մինչև այսօր: «Բրեյն-ռինգ» խաղի բարձրագույն պարզև «Ոսկե բրեյն» գավաթն է, իսկ դպրոցականների շրջանում՝ գիրքը, ինչպես նաև հուշանվեր մրցանակը, պատվոգիրը և շնորհակալագիրը: Հենց այս մրցանակներին էլ արժանացան մայրաքաղաքի հիմնական դպրոցների 8-9-րդ դասարանների աշակերտները, որոնց թվում էր նաև մեր՝ հ.12 հիմնական դպրոցի «Ասպետ» թիմը: Թիմը



գլխավորում էր տողերիս հեղինակը և կազմված էր 6 հոգուց՝ Նվեր Ադամյան, Մարատ Սարգսյան, Մուրադ Պետրոսով, Աստղիկ Առուշանյան, Թագուհի Միրզոյան, Մանե Մանուկյան: Թիմի նշանաբանն էր՝ «Ուժ է եռանդ»: Եվ իրոք, մեր աշակերտները, պահպանելով խաղի կանոնները, մեծ ուշադրությամբ ու պատասխանատվությամբ ընդգրկվեցին խաղի մեջ: Չնայած նրանք մրցանակային տեղեր չզբաղեցրին, այնուամենայնիվ, իրենց դրսևորեցին ասպետավարի, չթուլացան ու չերկնջեցին, գործելով համարձակ, վստահ իրենց ուժերին՝ հասան հաջողության՝ վաստակելով 17 միավոր:

Բրեյն-ռինգին մասնակցելը նպատակային էր. սովորողները շփվեցին մյուս դպրոցականների հետ, հաղորդակից դարձան արվեստի բարձրարժեք ստեղծագործություններին, ավելի ամրապնդվեց սերը հայրենիքի, բնության, գեղեցիկի ու ազնվաբարո ալ արժեքների նկատմամբ:

Բրեյն-ռինգն արդյունավետ է այնքանով, որ մեր աշակերտները մեկ անգամ ևս ճանաչեցին աշխարհն արվեստի միջոցով, ձևավորվեց նրանց հոգևոր նկարագիրը, զգացմունքն ու միտքը, աշխարհայացքը, ընդլայնվեց նրանց մտահորիզոնը, և ավելի ամրապնդվեցին սովորողների արդեն իսկ արթնացած ստեղծագործական ունակությունները: Երեխաները ծանոթացան Շուշիի կերպարվեստի պետական թանգարանի պատմությանը, իմացան թանգարանին նվիրատվություններ կատարած արվեստագետների անունները և նրանց գործերի մասին (Յուրի Գրիգորյան, Սերգեյ Ավագյան...): Ամրապնդվեցին գիտելիքները Վերածննդի դարաշրջանի գործիչների ու նրանց ստեղծագործությունների մասին, հարստացան կերպարվեստի մասին տեղեկություններով, մեկ անգամ ևս հիշեցին հայ կերպարվեստի նշանավոր նկարիչներին, որոնց արվեստին բնորոշ են հայրենի բնության առանձնահատկությունների գեղանկարչական խորացումը, կենսահաստատ ար-

տահայտչականությունը, բնության տարերքը, վառ և զուսպ գույների համադրումը, իրականության պատկերումը ռեալիստական ամուր հիմքի վրա: Ինտելեկտուալ խաղին ակտիվ մասնակցելու համար «Ասպետ» թիմը պարզևատրվեց շնորհակալագրով և «Человек и камень» գրքով հեղինակի՝ պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանի կողմից:

Հ.12 հիմնական դպրոցի մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների կողմից «Բրեյն-ռինգ» հետաքրքիր ու նպատակային ինտելեկտուալ խաղի անցկացման համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը կազմակերպիչներին և առանձնապես՝ խաղը նախածեռնող պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանին:

Կարինե ԴԱՂԱՅԱՆ Ստեփ. հ.12 հ/դ. փոխտնօրեն, պարմության ուսուցչուհի

ԽՃԱՊԱՏԿԵՐ

ԱՍՏՎԱԾ ԷԼ ՁԵ՛Ձ ՀՈՎԱՆԻ ԼԻՆԻ...

Երևանի Նորք-Մարաշ վարչական համայնքի թաղապետ Վաղինակ Մկրտչյանի հրավերով վերջերս Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Թ.Ղարախանյանի և տողերիս հեղինակի ղեկավարությամբ հանրակրթական դպրոցներից յոթ երեխաներով մեկնեցին Երևան՝ մի շատ հետաքրքիր արարողության մասնակից դառնալու: Կայ երեխաների մկրտության արարողությունը պետք է կատարվեր Նորք-Մարաշ համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում:



Մեր եռօրյան բավականին հագեցած էր: Ամեն մի օր լի էր նոր տպավորություններով, նոր անակնկալներով: Հենց առաջին օրը մեզ դիմավորեցին արդեն հարազատ դարձած Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմի ղեկավար Վահան Ալեքսանյանը, կրթության, մշակույթի և սպորտի հարցերով նույն վարչական շրջանի ղեկավար օգնական Հայկուհի Քուսիշյանը և համայնքի ռեստորանում ջերմ ընդունելություն ու հյուրասիրություն ցուցաբերեցին, այնուհետև երեխաներին կցեցին տարբեր ընտանիքների: Հուզիչ մթնոլորտ էր: Յուրաքանչյուր ուներ իր կնքահայրն ու կնքամայրը:

Հաջորդ օրը երեխաներն իրենց պատասխանատուների ու կնքահայր-կնքամայրերի հետ եկեղեցու բակում էին: Յուրաքանչյուրն իր գեղեցիկ հագուստով, բարձր տրամադրությամբ պատմում էր իրենց հյուրընկալած ընտանիքների, իրենց զգացմունքների մասին: Տեսնել էր պետք նրանց ուրա-

խությունը, իրար ընդհատելով, շուտաժամակալ նման ամեն մեկն ուզում էր իր տեսածը նկարագրել: Մկրտության ժամանակ միատեսակ վերնաշապիկներ էին հագել՝ եկեղեցու պատկերով, վրան գրած՝ «Սուրբ Օրհնություն»: Բոլորը ոսկե խաչեր ստացան քահանայի ձեռքով: Ամենքի համար առանձին մոմեր վառվեցին, ու որպես խորհրդանիշ երեխաներին հանձնվեցին... Հյուրասիրության սեղանին հնչած խոսքերը, շնորհավորանքներն ու մեծարումը պարտավորեցնող էին: Աստվածային այս վայրում աշակերտները մկրտվեցին Սուրբ Առաքյալների ձեռամբ ու վերստին ծնունդ առան՝ ընդունելով Սուրբ Հոգու դրոշմը: Քրիստոնեացան և որդեգրվելով Աստծուն՝ կապվեցին նրա հետ հավիտենապես: Ուրախությունը, հուզմունքն ու պատասխանատվությունը միախառնվել էին: Աղոթում էինք մեր երկրի, ժողովրդի, հայ սահմանապահի՝ խաղաղ երկնքի տակ ապրելու համար:

Մեր անունից խորին շնորհակալություն ենք հայտնում Արմեն Տիկլյանին՝ հովանավորության, կնքնահայրերին ու կնքամայրերին իրենց սանիկներին անմոռանալի օրեր պարզելու համար: Աստված էլ Ձեզ հովանի լինի: Բարին ընդ Ձեզ:

Երեխաները եղան Մատենադարանում, Հոլի. Թումանյանի տուն-թանգարանում, Ծիծեռնակաբերդում, մի շարք այլ տեսարժան ու մշակութային վայրերում: Ուշագրավ պահերի համար շնորհակալ ենք ծրագիրը նախաձեռնողներին, կազմակերպիչներին, պատասխանատուներին, Նորք-Մարաշ համայնքի աշխատակազմին:

Այս արարողությունը արդեն երկրորդն է: Կցանկանալի, որ լինեք շարունակական:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Սյրեփ. քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի մասնագետ

ՕՊԵՐԱՅԻ ԱՌԱՋՆԱԽԱՂ ԴՊՐՈՋՈՒՄ



12 անպետք է դուրս գալիս, նրան անգամ մեկնիկներն են ծաղրում ապաշնորհության համար: Եվ ի վերջո կատուն հասկանում է, որ իր գործը մոկ բռնելն է ու վերադառնում է իր կոչմանը:

Օպերայի գաղափարական իմաստն այն է, որ ամեն ոք պետք է իր գործով զբաղվի: Գաղափարը շատ արդիական է: Օպերան բեմադրել է ԱՀ արվեստի վաստակավոր գործիչ, դպրոցի վոկալի դասարանի ղեկավար Կարեն Ղարիբյանը: Նա համեստորեն չարտահայտվեց այն մասին, որ մեկ տարի շարունակ զբաղվել է հազվագյուտ ներկայացվող այս օպերայի բեմադրությամբ (նման գործի համար առնվազն այդքան ժամանակ է պահանջվում. ներկայացման մեջ ընդգրկված բոլոր երգիչների ծայր առանձին-առանձին պետք է մշակվեր, պարային համարներն առանձին դրվեին, այնուհետև՝ խմբակային և այլն), զբաղվել է դասերից հետո: Ամբողջը՝ հագուստների պատրաստումը, նկարչական, երաժշտական ձևավորումն իրականացվել է դպրոցի ուսուցիչների և երեխաների ուժերով (նկարչ-ձևավորող՝ Արտակ Պողոսյան, խմբակավար՝ Կատյա Գրիգորյան): Այդ ամենի մասին հարցուփորձ անելով իմացանք դպրոցի տնօրեն Գոհար Մկրտչյանից: Տեղեկացանք նաև, որ նվագակցող (դաշնամուր) Նելլի Սարգսյանն այդ դպրոցի շրջանավարտ է, որը կոմսերվատորիան ավարտելով՝ վերադարձել է հարազատ կրթության և պատրաստում է լավագույն աշակերտներ: Նրա սաներից երկուսն այս տարի դարձել են միջազգային մրցույթի դափնեկիրներ:

Հանրակրթական աշակերտներից բացի աշակերտները հնարավորություն ունեն խորանալ երաժշտական ուղղությամբ: Դպրոցն այս տարի տվել է յոթ շրջանավարտ, որից երեքն ընտրել է Երևանի կոմսերվատորիայի փողային բաժինը, մյուսները՝ տարբեր բուհեր: Դպրոցի սաներից երկուսն այս տարի առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում դիպլոմի ու գովասանագրի են արժանացել: Ասել է թե՛ կրթօջախն առաջնորդվում է հանրակրթական ծրագրով, դրա հետ միասին ունի իր առանձնահատկությունները. այստեղ գործում են վոկալի բաժին, կամերային ու փողային նվագախմբեր, այս ուսումնականից՝ լարային քառյակ (երկու ջութակ, ալտ, թավջութակ): Դպրոցի երեք սաներ այս տարի ընդգրկվել են «Նոր անուններ» նախագծում: Նշենք, որ ամեն տարի Հայաստանից են ընտրվում լավագույնները, իսկ այս տարի նրանք Դ. Ղարախանյանի անվան դպրոցից են: Օպերայի հրաշալի մենակատար Աննա Դանիլովան՝ 10-րդ դասարանի աշակերտուհի, «Վերածնունդ» միջազգային մրցույթի 1-ին մրցանակի դափնեկիր, որը նաև անցյալ տարի



բեմադրված «Գայլը» օպերայի մենակատարն էր, արդեն որոշել է՝ գնալու է օպերայի լայնահուն ճանապարհով:

Ուսումնական այս հաստատությունը թարմ ու գեղեցիկ երանգներ է հաղորդում Հուլիի և ընդհանրապես Արցախի կրթամշակութային կյանքի գունապնակին:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Արցախ աշխարհը հարուստ է բազմաթիվ պատմամշակութային, ճարտարապետական հուշարձաններով, վանքերով ու եկեղեցիներով, ամրոցներով, տեսարժան վայրերով, որոնցից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի, իր դերն ու նշանակությունը երկրի հոգևոր կյանքի զարգացման, նրա գոյատևման, Արցախը որպես տուրիզմի կենտրոն ներկայացնելու գործում:

Հիշենք մեր Գանձասարն ու Դադիվանքը, Ամարասն ու Գոչավանքը, Դիզափայտի Կատարով վանքն ու Ազոխի քարանձավը, Տիգրանակերտն ու Ասկերանի, Հուլիի անառիկ ամրոց-բերդերը, հազարամյա Կաչաղակաբերդը և բազում այլ հնություններ, որոնց մեկ անգամ այցելելիս ուզում ես նորից ու նորից ընթրիչներով ճարտարապետական ձեռակերտ ու ամծեռակերտ գոհարների փայլն ու գեղեցկությունը, շնչել բարձրաբերձ լեռների զով ու թարմաշունչ օդը, զմայլվել դարավոր ու կանաչազարդ անտառներով, խմել մաքրամաքուր ու առնորակ աղբյուրների զուլալ ջուրը...

Ձարմանահրաշ է Արցախ աշխարհն իր բնությանը ու հարստություններով: Այստեղ ապրող յուրաքանչյուր մարդ, քաղաքացի պետք է լավ իմանա իր երկրի պատմությունը, ճանաչի նրա յուրաքանչյուր անկյուն, իմացածը փոխանցի սերունդներին: Սերունդներն էլ պետք է տեր կանգնեն հայրերի, պա-

պերի ավանդույթներին, քարը քարին դնեն, պահեն ու պաշտպանեն մեր հայրենիքը, մեր հոգևոր ու մշակութային գանձերը:

Այդ ամենում իր ծանրակշիռ ավանդ ունեն հայ դպրոցը, հայ ուսուցիչը, հայ մանկավարժը: Ցավոք, ներկա ժամանակում, երբ ժողովրդի սոցիալական վիճակն այնքան էլ բարվոք չէ, և նյութականը շատ ընտանիքներում առաջնային է դարձել հոգևորից, դպրոցն էլ չունի համապատասխան միջոցներ, ճանաչողական այցերը մնում են լոկ երազանք:

Մայիսի 16-ին ԱՀ ԿԳՍ նախարարությունից մեր դպրոց հնչած հեռախոսազանգը ազդարար էր անչափ, հետաքրքիր ու նպատակային էքսկուրսիայի, որին կարծես թե տարիներով սպասում էին աշակերտները: Այն կազմակերպվեց կիրակի օրը՝ դեպի Գոչավանք ու Ազոխի հնամյա քարանձավ: Աշակերտները հանձնարարություն ստացան՝ պատմական այդ երկու հնությունների մասին ինչ-չան հնարավոր է, շատ տեղեկություններ հավաքել ու ավելացնել իրենց իմացածին: Բոլորին պատել էր անափ ոգևորություն և ուրախություն: Աննկարագրելի էր այն հիացմունքն ու զարմանքը, երբ, հաղթահարելով մայիսյան շոգն ու անտառային կածանները, բարձրացան լեռան գագաթ ու իրենց դիմաց տեսան Գոչի վանքը:

Իրար լրացնելով՝ ներկայացրին վանքի



պատմությունը. մոմ վառեցին, լուսանկարվեցին, սպա գվարթ երգ ու ծիծաղով նույն արահետներով իջան ցած՝ իրենց հետ տանելով չքնաղ Արցախի մի աննկարագրելի

բարձունքում գտնվող Գոչի վանքի մասին հարուստ տեղեկություններ և ճանաչում, որի մասին միայն լսել էին:

Նրանց մի խորհրդային առեղծված էլ էր սպասում՝ Ազոխի աշխարհաճանաչ հնամյա քարանձավը, ուր աշակերտները մուտք գործեցին փոքր-ինչ երկյուղածությամբ, անչափ հետաքրքրությամբ, իմացած գիտելիքներից հաստատում տալու վճռակալությամբ: Ամեն ինչ զարմանալի էր իրենց հայրենիքում ապրող, բայց հայրենիքի մասին այսքան քիչ բան իմացող երեխաների համար:

Էքսկուրսիան, որի նախաձեռնողն ու կազմակերպիչը ԱՀ ԿԳՍ նախարարությունն էր՝ ի դեմս նախարար Նարինե Աղաբալյանի, հայրենասիրական, աշխարհաճանաչողական, դաստիարակչական իսկական դաս էր, որն այնքան անհրաժեշտ է այսօրվա դպրոցականներին, ներկայիս սերնդին:

Դպրոցի տնօրինության, աշակերտների անունից շնորհակալություն ենք հայտնում գաղափարը մտահղացողներին, ձեռնարկողներին, Ն. Աղաբալյանին ու ցանկություն հայտնում, որ նման էքսկուրսիաները լինեն շարունակական:

Ճանաչենք մեր երկիրը, տեր կանգնենք մեր հայրենիքին:

Էլմիրա ԳԱՐԻԻԵԼՅԱՆ
Սյրեփանակերտի հ.12 հ/դ. փնթեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուն» ՄՊԸ-ում: Տպագրանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 31.05.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: